



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material


L67  
659

1999 1

# ԱՄՈԼՔ ՍԻՐԱՅԻՆՔ

ԳՐԱՎ

Ա. ԹԵՐԶԵԱՆ



Ի Տպարանի

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԵՆՑԻՒԱՆ

(1872)

# ԱՄՈԼՔ ՍԻՐԱՑԻՆՔ

ԳՐԱԱ

Ա. ԹԵՐԶԵԱՆ



ՀԱՅ-ՀԱ-ԾՎ

28243-62

Ի ՑՂԱՐԱՆ

ՑՈՒՀԱՆՆՈՒՄ ՄԻՒՋԵՏԵՄԱՆ

(1872)

43818 - Ա. Հ.

Ա. Հ.

Այս վէպը կամ առելի լսո՞ւ պատմութիւնը, այն պիսի եղելութիւններէն մին է, որք թէպէտեւ շատերու անձանօթ եւ աննշան կը թուին, բայց սրտերու մէջ այնպիսի խորին լիաստակներ կը թողուն որ ժամանակն իսկ չի կրնար եղծանել դանոնք. ասոնք չունին այն ակնախտիդ փայլը որ վիպասանութիւններու ոգին է, եւ ոչ իսկ այն հազարաւոր եղելութեանց ճարտար հիւսուածքը՝ ուր մարդ կը շփոթի. ասոնց յարզը լոկ ծշմարտութիւնն է եւ գեղեցկութիւննին ալ պարդ դուցում մը որոն արդիւնքը սիրած կը զգայ:

Ահա այս տեսակ ծշմարտութեանց մին է ասէն կայ ալ որ իւր պարզութեան եւ անձուկ առհմանին մէջ կը պարունակէ միանգամայն սօսկութ, արհասիրք, սրտազրաւ զգացումներ, եւ ժամանակը մը անկեան մը խորշը գործուած եւ ծածուկ մնացած այս սրտածմիիկ տեսարանը իւր բոլոր պարզութեամբ եւ ծշմարտութեամբը բարեկամի մը ձեռօք կուգայ 'ի ծանօթութիւն:

23 658

659-60

Վորբորի արեւելեան կողմը գտնուած  
դիւզեբուն մէկուն մէջ բարձր շէնք, մը  
կար՝ որ ետեւի կողմէն կանանչագեղ բլուր  
ներու վրայ կը նայէր և առջեւի կողմէն աղ  
անտառ ախիտ լեռնակներու, այդիներու  
և պարտէ զներու վրայ :

Այս շէնքը երեք յարկ ունէր, որուն բա-  
ռորնայարկը այնչափ ցած էր որ եթէ ուզէր  
մէկը կրնար պատուհանէն՝ փողոցէն անցնո-  
ղի մը հետ առանձին գաղտնի խօսակցո-  
թիւն մը շարունակել, մանաւանդ գիշեր  
ատեն առանց մէկէ մը նշմարուելու . վասն  
զի տանը դուռը ստորնայարկէն բարձր գիր-  
քի մը մէջ ըլլալով, գարակներով վեր կ'ելլը-  
զէր . ուստի այս գարակներուն մէկ ան-  
կիւնը յաջող ապաստանարան մ'էր պատու-  
հանը եղողի մը հետ երկար ատեն տեսակ-  
ցիւ ու գողի մը :

Երկրորդ յարկին՝ փողոցին վրայ նայող  
մէկ սենեակին մէջ, ծայրի պատուհաննե-  
րուն մէկուն տակ կը նստէր օրիորդ մը մի-  
ջահասակ, գեր, վարդագոյն այտերով,  
գեղձան մազերով. իր փղոսկրեայ պարան-

յը և ձիւնի պէս ձերմակ ձեռքերը իւր հադած ու շրջազգեատին հետ սիրուն հաւ կաստակեր մը կը ներկայացնէին . բնութիւնը հեղէր բաց ազնուական խրոխտութիւն մը կը տիրէր իր վրան և զինքը կը մասնաւուրէր երբ մանաւանդ իւր շադանակագոյն տչքերը անքթիթ յառած և արձանի նման կուրճքը ուղղորդ բռնած նայէր . իր ծիծաղիոտ գէմբին վրայ շուտ մը կէս զուարթութեամբ խառնուած արհամարհանք մը կը նկարուէր , որով աւելի կը գեղեցկանար , երբ մէկը իւր անձնասիրութիւնը թեթև կերպով մը վիրաւորելու փորձ մ'ընէր , այտերուն կարմրագեղութիւնը և շրթունքներուն բոսրային գեղը բաւական կը ցուցընէին հոգւոյն զօրութիւնը և աննկուն հաստատամտութիւնը այնչափ դառն կը կիծներուն մէջ :

Հագուստներէն կը գուշակուէր որ այս սիրուն անձը սուգ կը կրէր և արդարեւագրը կրկնակի կերպով զինքը հարուածեր եր իր մայրը յափշտակելով որուն անկողնին քով այնչափ լացաւ . մինչեւ հիմաց ալ կուլար և լալու ալ իրաւունք ունէր . և մէկ մ'ալ իւր սիրու մահացու կերպով հարուածելով և այնպիսի սուգի մը մէջ թողլով որ աւաղ , քան զամեն սուգ չարաշշուկ է :

Այսօր ալ միևնոյն գեղեցիկը իւր սովորական աեղը նստած էր , մազերը սանտրած

և երկու հիւսը վայելչապէս և խաչաձեկի բազով գլխուն ետենի կողմը ամփոփած , իր ձիւնափայլ մերկ պարանոցին և ուսերուն փայլը թափանցիկ ապակիէն գուրս կը ցայտէր : Այնպիսի գիրքով մը նստած էր որ կրծաղգեսոր աննշմարելի ըլլալով ըսկը բաց ուսերը և պարանոցը կերեար և իր սովորական անշարժ կեցուածքէն կարծեսթէ մարմարինէ արձան մըն էր հոն գրուած : Դէմբին վրայ խրոխտ մելամաղութիւն մը նկարուած էր և կը թուէր թէ խորին մը տազբաղութեան մը մէջ էր . վասն զի փողցի ազմուկին և ժխորին բոլորովին անշարքեր կերևար . կարծես թէ այնպիսի տեղ մը փոխադրուած էր , ուր ամենաչնչին բան մը , բովանդակ բնութիւնը իր սիրելի առարկան կը ներկայացնէր իրեն և անոր ներկայութիւնը վայելչով կապչէր միանդամայն և կը զմայլէր անքացատրելի բնազդմանը մը : Դիցուհի մ'էր նա երեւակայական աշխարհին՝ ուր ամեն բան սովորականէն տարքեր գոյներով կը նկարուի :

Ժամը երեկոյեան տասնեւմէ կը անցած էր . արեւ կէս մը հորիզոնին ետեւ ծածկուած և իր սկաւառակին միւն կէսը գեռ կը փայլէր և բոլոր արեւմտեան կողմը արեան գունով կը ներկէր , իր ձառագայթները գորշախայտ ամգերու մէջերէն անցնելով և կոտրտուելով լուսաւոր ծովերով սիւն մը կը

ձեւացնէին ծովուն վրայ և նաւակներ լուսոյ ակոսներուն մէջն անցած ատեննին՝ նաւարկողներուն դէմքը լուսոյ կոհակներով կը փայլէր . թիսակներուն սրտիած մանր ջրոյ փոշիներուն մէջ ալ անհամար ծիածաններ կը ձեւանային : Այս շքեղ տեսարանին կը յաջորդէր յանկարծ վերջնալուսոյն աղօտ և ախրագին փայլը . շէնքերու բոլոր ապակիները կը փոշլէին . ամեն մէկ փայլուն առարկայ տեսակ տեսակ գուներով կերեար : Վոսքորի զարդն եղող այս լուսաւոր տեսարանին ատենը, յանկարծ՝ մեր քիչ մը առաջ նկարագրած շէնքին երորդ և ամենէն բարձր յարկին մէջ, դէպի ի արևմուտք նայող պատուհանի մը առջեօրիորդ մը երեցաւ գեղեցիկ հագուած . աջ ձեռքը սրտին վրայ ամփափած էր և ձախ ձեռքը ծաղկի փունջ մը ունէր, զմայլած յարեմուտս կը նայէր . լուսոյ փունջ մը այտերուն վարդերուն հետ խառնուած անպատում քաղցրութիւն մը կուտային դէմքին . կերպարանքը անանկ նորանշան հրապոյր մը ունէր այս անգամ օր իր դէմքը՝ հոգւոյն ճշգրիտ պատկերը և սրտին ազնիւ ըդգացմանց ջիւնջ հայելին էր, որչափ հրապուրիչ է անմեղութիւնը :

Այս օրիորդը բաւական ժամանակ յափլատակուած կը դիտէր արեմուտքին շքեղութիւնը և այս շատերուն աչքին ծածկուած

տեսարանը այնչափ սրտագրաւ էր որ նկարչին երեւակայութիւնը և բանաստեղծին խանդղը կը բորբոքէր :

Բայց յանկարծ անոր երեսին վրայէն ու ամայ մը անցաւ, դէմքին գծագրութիւնը ազօտացաւ, բոսորագեղ շրթունքը տրժգունեցաւ, երեսը ձեռքերուն մէջ գոյեց և իր հեկեկանաց մէջ հառաջանոք խառնը ված սա կէսկառուր խօսքերը լսուեցան . ամայրի մ... ահ ... սիրելի մայրս . դուն ... զ : Այս աեսարանը իրեն համար յանկուցիչ էր և ինքը յաճախ զայն դիտելով զմայլած էր, վասն զի իր մաքին մէջ տիսուր ու գորովադին յիշատակներ կը զարթուցանէր որք երեն սիրելի էին : Փամանակ մը իր բարեբաղդութիւնն ալ որ այսպէս գեղափայլ էր, այսպէս ալ սակաւատե եղեր էր :

Օրիորդը մէկին անհետացաւ, վերջալուսոյն փայլն ալ քիչքիչ նուազիլ սկսաւ :

Ընթերցողը կրնայ գուշակել անշտեշ ու այս օրիորդը մեր քիչ մը առաջ նկարագրած ամենն էր :

Փամը իրիկուան կէար զարկաւ, կապելաները սկսան կանթելելներով լւսաւորուիւ, երգերու ձայներ սկսան ամեն տեղ հնչել, բարեկենդանի ուրախութիւնը ամենուն գլուխը տաքցուցած էր . կապելաները լի էին խմողներու բազմութեամբ . ստիկանք ալ հրացաններով զինեալ փողոցին մէջ վեր

Դար կը պտրտէին զգուշութեան համար .  
Երեք դստիկոնով շենքն ալ սովորականէն  
աւելի լուսաւորուած էր այս գիշեր : Ստոր  
նայարկին միակ ցած և փոքրիկ սենեկին մէջ  
երկու անձ կային որք տաքութեամբ մէկնէ  
կու հետ կը խօսակցէին : Այս երկուքին մին  
այն օրիորդն էր որուն վրայ խօսեցանք և  
միւն ալ յիսուն տարեկանի մօտ գերուկ  
և առնական կերպ ունեցող կին մը , որուն ձեւ  
երեն կը հասկցուէր թէ խօսակիցը համոզել  
կը ջանար : Մանկամարդին գէմքին վրայ ցա  
սումն նկարուած էր , իր բարակ և դեղե  
ցիկ յօնքերը անսովոր կերպով մը բաժնը  
ցած էր և սենեակին մէջ արագ քայլեին  
և կրակոտ ու յուսահատական ձեւերեն կը  
գուշակուէր որ բարկացած և մեծ անձկու  
թեան մը մէջ էր : Ասոնք բաւական ժամա  
նակ խօսակցեցան և գերուկ կինք կամ իր  
ջանիցն ՚ի դերեւ ելլելուն վրայ յուսահա  
տած և կամ ձանձրացած մանկամարդին  
հաստատամութենէն թողուց գնաց . իսկ  
ասիկայ սկսաւ կամաց կամաց հանդարտիլ .  
իր սովորական կերպարանքն առաւ և պար  
տասեալինկաւ բաղմոցին վրայ , վասն զի հաշ  
կառակամարտ կիբքերը և կրած պատերազմ  
ները զինքը շատ յոգնեցուցեր էին : Տան մէջ  
խառնածայն շշուկը և դրդիւնը երժարով  
կաւելնար , բայց նա բոլորովին անտարբեր  
էր այս բարոսեան խնդութեանց . զլուխը

շնորհալի կերպով մը ուսին վրայ ծռած  
մէկ ձեռքբով ալ գեղեցիկ բանուած թաշ-  
կինակը կը շարմէր :

Բայց յանկարծ ուղղուեցաւ միտքը նոր  
բան մը եկածի պէս . ուրախութեան նշյլ  
մը գէմքին վրայ փայլեցաւ և կերպարան-  
քին շնորհալի քաղցրութենէն կիմացուեր  
որ միտքը եկածն ինչ ասափիճան կարեւորու-  
թիւն ունէր և իրեն հրձուանք կը պատճա-  
ռէր : Գրպանէն թուղթ մը հսնեց և քանի մը  
անդամ զայն կարդալէ վերջը հրձուանքը և  
ջղային ցնցմամբ մը իր նուրբ և կարմիր  
շրթունքներուն տարաւ , սրբազն իրի մը  
պէս երկիւղածութեամբ համբուրեց ու իր  
սրտին վրայ պահեց . երկու խոշոր արցուն-  
քի կաթիլներ ալ վերջ տուին այս սրտառու-  
տեսարանին :

Ասկից վերջը օրիորդը սենեակին պատու-  
հանները վար առաւ , վարագոյնները իջե-  
ցուց և ձրագը առնելով շտապաւ դուրս ե-  
լաւ . ամեն բան խոր լուութեան և մթու-  
թեան մէջ թազուեցաւ :

Գլուխ . Բ .

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Ժամը մէկը անցած էր , օդը զով և ցուրտ  
էր , փողոցներուն մէջ հազուագիւտ ան-

շարդներ կային, թանձը մութ մըն էր և  
գիշերուան լոռութիւնը կընդմիջէր երգե-  
րու ձայնէն ու պարերու խառնածայն շըլն-  
կոցներէն որք բարեկենդանի առթիւ շատ  
տուներու մէջ տեղի կունենային : Այս մի-  
ջոցին քսան և հինգ տարեկան երիտասարդ-  
մը փողոցին երկայնքին ու լայնքին կը պար-  
տէր, թուխ գէմքին վրայ առնական կորով  
և ուժգնութիւն նկարուած էր, գեղեցիկ  
ու ու խոշոր աչքերէն կրակ կը ցայտէր,  
գեղեցիկ հասակին և վայելուչ ձևերուն  
հետ ալ աղնիւ սիրտ մը կը կրէր, մնդուսէ  
լայն փողպատը անյարդար կերպով կապած  
և երկայն ծայրերը վար թօղած էր զրոնք  
գիշերուան զով հովը կը ծածանէր լայն  
կուրծքին վրայ . կապցու դազմիրէ և կուրծ-  
քը բաց բաձկոն մը կը կրէր . հագած տա-  
փատը դորշ էր և վրան մանր մանր կապ-  
տափոյն բիծեր կը կրէր . ոտքը խիստ բարձր  
և փայրուն կոշիկներ հագած էր . թիկնոցը  
եղանակին համեմատ հաստ գազմիրէ, դոյնու-  
ալ անոյշ լազուարդի գոյն . կարմրորակ ֆէս  
մը դրած էր գլուխը, որուն տակ դէմքին  
թիսութիւնը աւելի գուրս կը ցայտէր եւ  
սիրուն երևոյթ մը կառնէր . ու լայն յօն-  
քերն ալ աչքերուն վրայ գեղեցիկ գիծեր  
կը յօրինէին և իր պայծառ դէմքին տեսակ  
մը խստութիւն կուտային : Զեռքերը տա-  
փատին գրպանները խօթած գլանիկ կը ծր-

իւէր : Ամենամեծ դրուշութեամբ չորս կու-  
մը դիտելով, երբեմն ալ, փոքրիկ շշուկ մը  
լսելուն պէս մտադրութեամբ ականջ կը  
գնէր և կարծես թէ խաբուած ըլլալուն  
վրայ յուսահատութիւնը կը տիրէր վրան :  
իր մերթ ընդ մերթ զգացած ցնցումներէն  
կերեար թէ սիրտը շատ յուզուած էր, թե-  
պէտ եւ ինք անտարբերութիւն, երբեմն  
ալ ակամայ զուարթութիւն մը կը կեղծէր .  
Գիշերուան հովին երգերու ձայնին մէջ  
տեղ եռայարկ տան կողմերէն սուլիլու-  
ձայն մը ելաւ, բայց այս ձայնը այնչափ բա-  
րակ էր որ մինակ ինք լոեց, եթէ եղած  
տեղէն քանի մը քայլ անդին եղած ըլլար  
իրեն ալ անհնարին էր լոել : Այս ձայնէն  
երիտասարդը՝ ելեքդրական սաստիկ հար-  
ուած մը կրողի պէս ուժգին ցնցուեցաւ  
բոլոր մարմնովը սարսուաց . սիրտը արագ  
կը բարախսէր և քիչ մնաց որ այն կորովի  
և հուժկու պատանին պիտի ինար : Սուլե-  
լու ձայնին յաջորդեց թեթև հազարւ  
ձայն մը և մի և նոյն ատեն տանը ստորնաւ-  
յարկի սենեկին ձախ կողմի պատուհանին  
առջև կնոջ դէմք մը և ձերմակ թաշկինակի  
մը շարժումը տեսնուեցաւ : Երիտասարդին  
վրայ երկիւղախառն ուրախութիւն մը կը  
նշմարուէր, սիրտը սկսաւ ալ աւելի սառ-  
տիկ բարախսէլ և ոտքերուն ծայրերուն վը-  
րայ կոխելով քայլերը գէպ 'ինչանը գրուած

կողմը դարձուց ։ Ուժը ամփոփելով մէկ վայրկեանէն պատուհանին առջև հասաւ և արդէն կնօշ ձեռքը իր ձեռքերուն մէջ էր ։ Դիւրին է գուշակել այս մանկամարդին ով ըլլալը :

Վայրկեան մը այս երկու արարածները լուս և անբարբառ կեցան . իրենց կուրծքը ու աած էր և չէին կրնար բառ մը արտասանել . լոկ անշարժ իրարու երես կը նայեին . սիրային ու մերամազնու նայու ածքնին կենդանի ձայնէ աւելի կը բացարէր զգացու մնին և այն զմայլելի բերկանքը որով սրտերնին կը զեղյը : Գիշերուան ցրտոյն խոր մթութեան և սոսկման մէջ այս երկու անձանց միայնութիւնը և սիրոյ այս լուս ու համբ տեսարանը այնչափ սիրալի էր որ զայն նկարագրելու . համար ձշդրիտ ու յատուկ եղբեր գտնել անհնարին է : Օրեր ամիսներ և տարիներ իրարու յաջորդեցին այն երկու երեք վայրկենի խիստ կարձատե միջոցին մէջ , այս երկու անձանց մին , օրի որդը՝ զմայլած և գորովադին խանդաղա տանօք դէպ ՚ի ընկերը հակեցաւ . մի և նոյն տաեն երիտասարդը իր ձեռքին վրայ կաթիլ մը տաք արտասուրքի ինալը զգաց . սարսեցաւ և համանման բնդադմամբ մը օրիորդին ձեռքը իր սրտին տարաւ . նա ալ անոր ուժդին տրովին զգալով թեթև հառաջանք մը հանեց և սա խօսքերը փախան իր

բերնէն ։ Սիրելիդ իմ որչափ քաղցր է ինձ քու ընկերութիւնդ . ահ , եթէ կարենայի ու խօսքերը բերնին մէջ մնացին . սրբազան կրտի մը իր կուրծքը կայրէր . ներդաշնակ և թթուուն ձայնը սյալյեցաւ . այնպիսի խանդակալով հիացման մը մէջ ինկաւ որ որչափ որ ալ հազուագիւա է և շատքիչ անգամ կը պատահի այնչափ ալ զմարդ չեմդիւտէր ինչ տարօրինակ դաղափարներով կը պատէ . հոն ալ մարդս մարդկութեան բընութենէն աստիճան մը վեր կը բարձրանայ . գերկիլը կը մոռնայ և անհունութիւնը կը չափէ : Այսպէս ալ այս երկու անձինքը սիրոյ ովկիանին մէջ ընկլած էին :

Եկեղեցւոյն ժամը չորս զարկաւ . այս ձայնէն սթափեցան , և երկուքն ալ մի և նոյն զսպանակէ շարժուածի պէս ցնցուեցան . թեթև սարսուռ մը անցաւ իրենց անդամներէն , ալ առաջին տպաւորութիւնը անցեր էր սոսկալով գիշերուան տիրամած լրութենէն որ մերթ ընդ մերթ պարողներու խառնադոչիւնով կընդմիջէր . աւելի ուժով իրարու ձեռք սեղմեցին որպէս թէ կուզելին ինքզինքնին պաշտպանել :

Այս անգամ երիտասարդը իր կրած խորին տպաւորութենէն սթափելով և կարողութենէն վեր ուժգնութեամբ մը բոլոր զօրութիւնը ամփոփելով կազդուրեցաւ և լրութիւնը քակեց :

— Վերջապէս սիրելի Արտեմոս, ըսաւ գործանօք, քեզ դարձեալ տեսնելու Երջան կութիւնը ունեցայ:

— Նոյնպէս և ես, աւելցուց օրիորդը, զմայլելի խանդաղատանօք մը · բայց ինչչափ կըցար ըսաւ, մեր թշնամեաց աչքերէն ծածկուելավ այսչափ ատեն փողոցին մէջ պտրտիլ. և առանց մէկէ մը նշմարուերւ անմիջապէս տուած նշանիս պատասխանել:

— Սիրելիս, պատասխանեց Երիտասարդը, որ միշտ չորս կողմը կը դիտէր. սիրելիս կարծեմբազդը մեր հետ ընկերացած է այս գիշեր. մինչեւ այս ժամուն գործերոյ յաջող դացին:

— Յաջող, յաջող. թոթովեց Արտեմ սիրառը յուզուելով. բայց միթէ այնչափ յաջողութիւն ալ չունենանք:

— Բայց սիրելի Արտեմ, այսպիսի տագնառ պալից կարկեաններու մէջ յուսոյ նշոյ մը անդամ մեծ հրճուանք մ'է:

— Բայց եթէ թոյն մը չի խառնեն անոր մէջ, վասն զի այս ժամուն՝ որ դուն բարեբազդ եմք կըսես. ո՞լ գիտէ թէ ի՞նչ նորանոր մէքենայութիւններ կը նիւթեն մեզ. Աստուածիմ, ո՞րչափ գմբազդ ըրեր մեզ:

Օրիորդն այս խօսքը այնպիսի յուսահատական շեշտով մը ըսաւ որ Երիտասարդը սոսկաց:

— Բայց, ըսաւ Երիտասարդը. կը յու:

սամ որ կարծածիդ չափ թշուառ եղած ըլլանք. կարելի ալ է որ ըսածդ չափազանցութիւն եղած ըլլայ և վայրկենական սոսկումք քեզ խաթած ըլլայ:

— Ոչ, Ե՞ս խաթաւիմ. ընդ համառակը խիստ համազուած եմ որ կարծիքս Ճշմարտութիւնմբ:

Երիտասարդին հաւատալը չէր գար այս խօսքերուն. սիրուն գէմքը տիրեցաւ, անխօս և աղջած Արտեմին երեսը կը նայէր այնպէս որ կարծիւթէ գէմքին վրայ աղետից գրոշմը նկարուած կը տեսնուէր:

— Սիրելի Գարեկինս, կրկնեց օրիորդը գորսվագին ակնարկ մը նետելով Երիտասարդին վրայ. դեռ քիչ մը առաջ մահապիթ հարուած մ'ալ տուին սրտիս. այս սիրտս՝ որ բոլոր կենացս մէջ քու սիրոյդ համար միայն բարախներ է և մինչեւ գերեզման մտած ժամանակս ալ քեզի համար

մպիտի բարեախէ, դարձեալ կտոր կտոր եղաւ. Դուն գիտես թէ որչափ կը զայրանամ, երբ մէկը քեզի համար գէշ խօսի ինձ երբ մէկը ատելի Երեցնել ջանայ այն անձը որուն համար լոկ սիրտս ծոցիս մէջ կենդանի է. յաւ խառնան շղթայտկամ գրութարկութեան գատապարտուած անձիւնքն աւելի կը վշտակրիմ և տառապանք կը քաշեմ այս անիծեալ տան մէջ որ ժամանակ մը իմ բարեբաստութեանս խանձարուրը

148

կը համարեի , Գիտե՞ս որչափ երջանիկ է ինք  
երբ սիրելի մօրս հիւանդութեանց ու ցաւ  
ուց անկողնին քովնաստած՝ ես ծաղիկներով  
անոր բարձը կը զարդարեի և դուն ալ իր  
ցաւ երբ մեղմացնել և զինքը միխթարել  
կը ջանայիր . սիրելի մայրս ալ մեզ համար  
ապագայ երջանիութիւն մը նախասեսերով  
ուրախութենէն կուլար և մեզ կ'օրհնէր :

— Գարեգին երբոր մայր բառը լսեց սիր-  
ութ թունա ելաւ և նուիրական քանի մը  
անունը լսածի պէս բորբոքին երկիւ զած  
կերպարանք մը առաւ և ակնածութեամբ  
Արտեմին ձեռքը իր ձեռացը մէջ սեզմեց :  
Որտե՞մ ալ մեղմաղձու ժպիտով մը անոր  
պատասխանեց :

Բայց քանի որ ժամանակը կանցնէր եր-  
կութին ալ սիրար խորին և անմեխնելի անձ  
կութեամբ մը կը ճնշուէր . սրտերնուն  
յուզմունքը վերջի աստիճանի էր և իրենց  
կութքը ահադին բերան մը տակ կը հե-  
ծէր : Միթէ այս վայրիկեաններէն աւելի  
ինչ նուիրական և անդին բան կայ , երբ  
մանաւ անդ անմեղութիւննու ամբծութիւ-  
նը հոն ներկաց ըլլան :

Այս միջոցին կանոնաւոր քայլերու ձայ-  
ներ և հրացաններու շաշիւններ լոււե-  
ցան : Ջայները քիչ քիչ մօտէն կու գային ,  
և յացանի եղաւ թէ գիշերապահներն էին .  
Գարեգին և Արտեմ քատմնեցան և մէկզմէկ

բռնեցին . քիչ ատենէն գիշերապահները  
երեան ելան և արդարեւ իրենց երկայն վե-  
րաբկունին և որածայր գլխանոցները չարա-  
շուք երեւ ցթ մը կու տային անոնց և դմարդ  
կը սոսկացնէին : Գարեգին պատու հանին  
ձախ կողմը գտնուած դարակներուն մէջ է  
անկիւնը քաշուելով հոն կծկեցաւ . ցուրտ  
հովլ մը կը գիշէր . անիկայ լանջը բռնած էր  
և երբեմն սատիկանաց քայլերուն ձայնին  
ականջ կուտար , երբեմն ալ գլուխը դէպ ՚ի  
պատու հանին կողմը դարձուցած ուշագ-  
րաւթեամբ մոտիկ կընէր դողալով Արտեմին  
համար : Քանի մը վայրիկեան վերջը գիշե-  
րապահը ետ դարձան և վարի կողմի փո-  
ղոցներէն նեղ փողոցի մը մէջ մանելով ա-  
ներեցիթ եղան . քիչ քիչ քայլերուն ձայ-  
նին ալ կորելով ամեն բան դարձեալ առջի  
վիճակին մէջ մտաւ և լուս թիւնը տիրեց :

Պատու հանը թեթև ձոխնչ մը արձակե-  
տով բացուեցաւ . բայց այս տնգամ Արտե-  
մին մեզ ուրիշ մէշ . Գարեգին ապահո-  
ետ ետ գնաց բերնին մէջ մոմնարով և ա-  
նիթելով իր բաղդն ու գիշերապահները ,  
ոզք իր կարձատեւ ու բախտութիւնը վրդո-  
ված էին : Պատու հանը եղողն ալ Գարեգի-  
նի այս ընթացքին վրայ կը զարմանար և կը  
թուեր թէ իրեն այսպէս ընդունելու թիւն  
ընելուն վրայ մեծ ցաւ կը ցուցնէր , բայց  
կընար ըլլալ որ անիկայ իւր մասցւզու

թեան ատեն զինքը ճանչցած չըլլար. ու ա-  
տի բարեկամական ձայնով մը զինքը կան-  
չեց և ըստա:

— Կը խաբութիք սիրելի պարոնս . բարե-  
կամուհի մ'է ձեր դէմը ելլողը, ապահով  
եղիք:

Խսկյն ճանչցաւ Գարեգին Սաթինիկին  
անցը ճայնը, որ տանը սպասուհիի նման  
բան մ'էր, բայց սղանիկուց այս տան մէջ  
ընդունուած ըլլարով Արտեմին հետ քրոջ  
ոկտ մեծցած էր և քրոջ պէս ալ զիրար կը  
սիրէին: Գարեգին անկառակած պատուհա-  
նին մօտեցտ և ձեռքը երկնցներով անոր  
ուսերուն մեզմիկ զարկաւ և ըստա:

— Արթիք օրիորդս, զիս վախցուցիր. բայց  
Արտեմը ուր դացած է, ինչո՞ւ հոռչէ, վա-  
սրն զի չես դիտեր ինչպէս կը վախնամ ա-  
նոր համար:

— Հիմայ կուգայ, սիրելի պարոն Գարե-  
գին, ձիշտ ինքն ալ քեզի պէս է, սիրար  
կը դողաց որ քեզի վեսմը չըլլայ. գնաց գա-  
ւաթ մը ընտիր դինի բերելու քեզի որ ցուր-  
տին դէմ պահպանուիս. ինձի չի թողուց  
որ երթամբ ես բերեմ, որովհետեւ դիտես  
այս սատանայ աղջիկը քեզի արուելիք ամեն  
բան կուզէ իր ձեռքսվը պատրաստել.  
Հէ, այնպէս չէ սիրելի պարոնս:

— Այս, ես ալ շատ անդամ դիտած եմ  
այդ բանը:

— Բայց եռ ալ կուզեմ որ այնպէս ինէ .  
այն ատեն զինքը աւելի կը սիրեմ. գեղանի  
և սիրուն Արտեմիկս. ամեն ատեն իւր սիր-  
ար կը խոցեն սակայն ինքը այս ամենուն կը  
ումանայ, աննիուն է և հոգւոյն գորու-  
թիւնը զարմանալի է:

— Ինքն ալ քիչ մը առաջ ացդպէս կըսէք  
ինձ, բայց չի կըցայ իմանալ թէ ինչ եղած  
էր իրեն. որովհետեւ միշտ ինձմէ կը պահէ  
իւր վիշտերը և լոկ ուրախութեանը մաս-  
նակից կընէ զիս:

— Հօրաքեռը հետ կարճատե խօսակցու-  
թիւն մը ըրին, և թէպէտհօրաքցըրը բարե-  
սիրտ կին մ'է և զինքը շատ սիրելուն և  
մեղքնալուն համար զինքը համոզել կը ջա-  
նար, բայց սպարզամիտ կինը չէր դիտեր որ  
իւր խօսքերը սոսկալի թոյնի մը նման Ար-  
տեմին ձիշդ սրախին մէջ կը վաղէին. սրով  
հետեւ դիտես այս տեսակ կիները աղնուա-  
կան գրացմանց վրայ սոսկալի տդիտութիւն  
մը ունին և աարիքնին ալ երբոր առնեն՝  
ամեն բան կուզեն իրենց հանգստութեա-  
նը և միտելուց ու անզդայ կեանքերնուն  
գոհել: Կերեայ թէ լոկ քիչ մը բարեսիրտ  
են, և եթէ այնպէս ալ չըլլայն ամենեին  
բան մը չին արժեր:

Գարեգին ապշեալ Սաթինիկին խօսքե-  
րուն մտիկ կընէր և երբ կը պատրաստու-  
թիր պատրաստիանելու, բակին մէջ շտա-

պարի քայլերու ձայն մը լսեց և վրդովելով  
ետ ետ գնաց : Սամբինիկ Արտեմին քայլերը  
Ճանչնալով տեղէն չը շարժեցաւ և Գարե-  
դինի շարժմանը վրայ չի կըցաւ ծիծաղը  
բռնել ու քրքիչ մը արձակեց , բայց շուտ  
մը անխոհեմութիւնը Ճանչնալով ինքզինըը  
բռնեց . մի և նոյն ատեն Արտեմ ալ սենե-  
ին ներս մտաւ ձեռքը դաւաթը մը բռնած :  
Գարեգին Սամբինիկին խնդալուն և տեղէն  
չի շարժելուն վրայ՝ վտանգ մը ըլլալուն ա-  
պահով ըլլալով պատուհանին մտեցաւ նո-  
րէն , Արտեմ ալ դաւաթը իրեն երկնցուց  
և ըստ :

— Խմէ որ տաքնաս , սիրելի բարեկամն ,  
որչափ ոռող կը գնես գիշերուան այս մէկ  
քանի սոսկալի վայրկեանները :

— Վարեգին դաւաթը առաւ և մէկ ան-  
դամուն պարպեց . մարմինը տաքցաւ և  
իր ամենասիրելոցն ու անձնուելը բարեկա-  
մուհւոյ մը բով գտնուելով բորբ ուժը վե-  
րան եկաւ . յաղթ ձեռքով պատուհանին  
երկաթեայ դաւազաններէն մին բռնեց  
և միւս ձեռքն ալ Արտեմին ձեռքին վրայ  
որ այն ատեն Սամբինիկին կոթնած էր և ա-  
նոր խարտեաշ խոպուկիներուն հետ կը խա-  
զար : Փամը չորս և քառորդ զարկաւ , այս  
հարուածը կարծես թէ երեքին ալ սրտին  
թելերուն զարկաւ , վասն զի երեքն ալ  
թոթմուեցան ակամայ ցնցմանը մը :

— Ա , զդուշութիւն , մըմեշեց Արտեմ .  
ի Սամբինիկին դառնալով , սիրելի օրիոր-  
դքս , ըստ , մենք բաւական ժամանակէ ՚ի  
վեր հսս ենք , դուն ալ հսս կենալովդ մեր  
բացակայութիւնը աւելի զդալի կըլլաց . ո՞՛  
եթէ գիտնան , եթէ գիտնան , ի՞նչ կը-  
լանք մենք :

Եւ սրամին խորէն այնպիսի հառաջանք մը  
ելաւ որ Գարեգին վառշ վառշ եղաւ և այն  
պէս ուժով թոթվեց բռնած երկաթեաց  
դաւազանը որ պատուհանին ապակիները  
թնդացին :

Ճիշտ ես ալ այդպէս կը մտածէի , յարեց  
Սամբինիկ գորովագին անձկութեամբ մը ,  
և իր գեղնած գէմքը աւելի գեղնեցաւ :

— Մայրիկին ալ հիմայ կը մրմար , աւել-  
ցուց Արտեմ խորին սրասցուզութեամբ  
մը որ ևս քան վես կ'աւելնար , և կը գան-  
դատի ուշանալուդ համար , վասն զի ինքն  
ալ տկար է , աչքերէն շատ նեղութիւն կը  
քաշէ . չեմ ուզեր որ խեղճ կինը վատանայ ,  
զիս հօգիին պէս կը սիրէ , և ինծի համար  
կը մեռնի :

— Այո , այո , Ճիշտ այդպէս է , սիրելի օ-  
րիորդս , կրկնեց Սամբինիկ . ուրեմն մնաք  
բարով , և երկուքին ալ ձեռքը զորովանօր  
ու բարեկամաբար թոթուելն վերը՝ ոտ-  
քերուն ծայրերուն վրայ քալելով սենեա-  
կին դուրս ելաւ և աներեւայթ եղաւ :

Արտեմ և Գարեգին մինակ մնացին .  
— Մենք ալ , մենք ալ , թոթովեց Արտեմ  
և ըս կրցաւ խօսքը առաջ տանիլ , ահօ-  
րինակ անհանդստութիւն մը տիրած էր  
վրան և անովզոր կերպով ձեռքեղը և ոտ-  
քերը կը շարժէր :

— Զատուի՞նք ըսել կուզես , յարեց Գու-  
րեգին մի եւ նոյն շեշտով , բայց կարծես  
թէ գղաց այս սոսկալի բառը արտասա-  
նելուն վրայ , այնուհետեւ անձկալից գու-  
թով մը Արտեմին երեսը նայած մնաց :

— Ա՛հ , ա՛հ , հառաչեց Արտեմ և թաշկի-  
նակը աչքերուն տարաւ :

— Բայց եթէ կենանք , վրայ բերաւ Գու-  
րեգին վստահ արտասանութեամբ մը և  
ինքդիմքը ուղղելով :

— Կենանք . . .

— Այո .

— Կը վախնամ .

— Կը վախնան . .

— Այո . քեզի համար .

— Պատճառը .

— Պատճառն այն է որ գիշերապահ եղու-  
ղի մը սիրուր քարի պէս է .

— Ունայն երկիւղ .

— Բնդ հակառակը շատ իրաւացի երկիւղ .  
Գարեգինին կերպարանքը խիստ երեսյին  
մը առաւ , ինքդիմքը պաշտպանելու պատ-  
րաստ եղող անձի մը պէս ուղղուեցաւ և ոկր-

սաւ չորս կողմը գիտել . Հրացայտ և խոշոր  
աչքերը բացաւ , խրոխտաքար գլուխը շար-  
ժեց և սկսաւ իր փղոսկրի պէս ձերմակու-  
փայլուն ակրաները կը ճամկէլ : Արտեմ լաւ  
գիտէր թէ այս խրոխտ բնաւորութեան  
սպառնալից շարժուածքները ինչ կը նշա-  
նակէին , ուստի խանդազատանօք անոր ձեռ-  
քը սեղմեց . գիշերուան հսկը իր ոսկե-  
գոյն վարսերը ցան և ցիր դէմքին վրայ սրփ-  
ոած էր և իր չնորհալի գլուխը մէկ կողմը  
ծռած անանկ խանդակամթ և աղաջաւոր  
ակնարկ մը նետեց Գարեգինի վրայ որ այս  
երիստանարդը կարծես թէ ամենալովիլ իր ը-  
րածին վրայ , և որպէս թէ դիւթիչ զօրու-  
թենէ մը զարնուած ըլլար , իր աչքերը վար  
առաւ :

Այս միջոցին սենեակին կիցն եղող սան-  
դուխին վրայ , ծանր և ընդհատեալ քաջե-  
րու ձայն մը լսու եցաւ : Երկուքն ալ տկանջ  
տուին այն ձայնին :

— Հոդ չէ , վախու բան չիկայ , բասւ Ար-  
տեմ , մայրիկին է , թերեւս խոհարանը գործ  
մը ունի , քիչ մը վերջը ձեռքքը աղօտ լցու մը  
բռնած պառաւ կին մը գրան սեամին վր-  
այ երեւեցաւ . եօմանասուն և հինգ տա-  
րեկանը անցած կերեւար , աչքերը ցաւու-  
և տկար էր , մէջքը ծռած . ժամանակաւ  
կարիք և զօրուոր կազմուածքով կին մ'էր ,  
բայց տարիները և եակե ետեւ ունեցած

կոկիծները զինքը շատ տկարացուցած էին.  
այս կինը Արտեմի դայեակն էր, և տասնե  
ինը տարիէ ՚ ՚ վեր այս տան մէջ ըլլարով .  
իւր ծերութիւնը հոն սկսեր էր . տան մէջ  
ամենքը զինքը մօր պէս կը սիրէին , ինքն  
ալ ամենուն վրայ հոգի կուտար , մանա  
ւանդ Արտեմին վրայ . Մայրը զինքը աշխարհ  
բերած ժամանակը ծանր հիւանդութիւն  
մը քաշելուն համար , Արտեմ տարիի մը  
չափ մօրը երեսով չի տեսնելով այս պառա  
ւը մօր պէս կը սիրէր . անոր գրկին վրայ  
մեծցեր և մայրիկ կը կոչէր զայն , տան մէջ  
ամենքն ալ տասնկ կը կոչէին . իր բուն ա  
նունը Մարիամ էր : Եղեոր ներս մտաւ ,  
Արտեմ դէմը վազեց և վիզը ողլուեցաւ .

— Ահ , սիրելի որդեակս , հօս ես , ըստ  
պառաւը հեալով և դոդդոջուն ձեռքը ա  
նոր ուսին վրայ դնելով :

— Այո , սիրելի մայրիկ , վրայ բերաւ Ար  
տեմ մտացյալ և զուարթութիւն հեղծելով .  
կարծեմ հոգնած ես և հանդստանալու  
միտք ունիս :

— Այո , սիրելի Արտեմիկս , վերի շշուկը  
գլուխ տարաւ . էջ ինչ ընեմ ժամանակ մը  
հոգս չէր բայց հիմայ , հիմայ , իմ գործու  
չէ , մեր ընկերը հանդարտութիւնն է . գըւ  
նի պտոյտն ալ զիս չափազանց կը նեղէ :

— Եթէ կուզես , սիրելի մայրիկ , հան  
գարտեցուցիչ ըմանի մը պատրաստէմ

քեզի :

— Զէ , գեղեցիկ աղջիկս . գիշերնոց ին  
ծի տուր , երթամ պատեկիմ , թերեւս քիչ  
մը հանդարտիմ . բայց Գրիգորս ալ գեռ  
չեկաւ , ուր է արդեօք , տէր Աստուած .  
այս տղան ալ գլխուս փորձանք մ'է . գի  
տէ որ իմ սիրտս կը հատեի իրեն համար  
և կարծես թէ ինծի հակառակ կը վարուի  
— Հոգ մի ըներ , մայրիկ , բարեկենդան է  
և հարկաւ իր ընկերներուն հետ զբոսնե  
րու գացած է :

— Կրոզը տանի սցդ զբօսանքը ըսկմ ինչ  
ըսկմ , հիմակուան երթասարդներուն դոր  
ծին խելքս չի համնիր , զուարձութիւն  
կրսեն հոգի կուտան . բայց գիշերնոցս սի  
րելի աղջիկս :

— Պատրաստ է մայրիկ , զնա հանդստա  
ցիր . Գրիգորին համար ալ անհոդ եղիր  
ես գուռը կը բանամ :

— Եատ աղէկ աղջիկս , գուն ալ Սաթինի  
կին ըսէ որ գործերը կարդադրէ . գիտե  
հօրաքյորդ գեգ բնաւորութիւն մը ունի  
քիչ մը շատ կը խօսի ու կը մրմռայ . ինչ ը  
նենք , աղջիկս , մեր տարիքը եղողները չատ  
կեկ կը խօսին , ինչպէս կրսեն լուն ու զոտ կը  
նեն : Ես ձեզ սիրելուս համար է որ կըսէ  
և չեմ ու զեր որ օրտերնիդ կուրի . բար  
գիշեր , սիրելի Արտեմա :

— Բարի գիշեր , մայրիկս . քաղցր քու

Հը մաղթեմքեզի :

Մարիամ մացրիկը կանթեզը ձեռքը սեն և ակէն գուրս ելաւ . Արտեմ ալպատռւհանին քով վազեց :

Գիշերուան զովութիւնը քանի կերթար իսուենար , այս անմեզ ոգիներն աղ իրարա վրայ կը գուրգուրային . որբ , աւազ , սառ կալի բոնութեան մը և նենդաւ որ մերեւ նայութեանց որս եզած էին . ցած և վատ խարդիկ անպարիկշտութեան սե և դարշե ի քողով կը ծածկէին այն գերազնիւ զդացումը . սէրը , զոր Աստուած առաջնու օրէն հարդուս սրտին խորը տնկեց և անոր ինչ խատարեալ էակ մը ըլլալըն կենդանի նշանը դրաւ զայն : Ի՞նչ ահուելի բարցականութիւնն որ տգիտութեամբ և ստոյօդ զատրուակներով անմեզութիւնը պարսաւելով , մութին մէջ կը խեզդե աղնուանոհ եռանդները , սրաեը տարցնող կը քակը կը մարէ . մարդը դիակ կընէ . սուրբինին մոլի , կտրիձը յուսահատ , և ցո ամենը տգիտաբար ու մոլենախանձ փրքն յագեցնելու համար . նըշափ անդամ յթշտակային դէմքեր , անձնուիրութեան ու իրեալ սրտեր յանկարծ կաներեութան աշխարհէն՝ զարնուելով այս ժանտախոէն որ թէ և տակաւ բայց սասկալի կեր զով կը մաշէ :

Այս երկու սիրայիններն ալ նսյնպէս ան-

մեղ սիրայ հետ թայն մը կը կրէին սրաեր նուն մէջ . օր չէր ըլլար որ երկիւղ , սոս կում անձկութիւն և զաշխարհ մարդուս աշքին խաւար և զազիր ցուցնուզ յուսահատութիւնը չի տաշարէր դիրենք . վայրկե նական բերկրութիւն մը հազիւ սրտին թեւ լերը սարսեցնող հազար ու մէկ յուզմանք ներով կրնային գնել :

Երբ Արտեմ զատռուհանին քովեկաւ , սրբա տայուգութիւնը վերջին աստիճանի էր և բոլոր մարմինով կը գողար :

— Անգութը , մրմարց բերնին մէջ . ի՞նչ կուզէ ընել :

Գարեգին նորէն կակսէր բորբոքել արժանաւոր գիշեմինդրութեամբ մը և Արաւակին ձեռքը բռնելով ուժգին սեղմեց զայն իր կուրծքին վրայ սրպէս թէ զինքը պաշտպանելու պատրաստ է ըսել կուզեր :

— Հօրեցքայրս , վահանը , թոթովեց օրիորդը պայրագին յուզմամեր :

Այս անունը լսելով Գարեգին չար ոգիէ մը զարնուածի պէս ետ ետ գնաց , բարակ և սպազ քրտինք մը խը ճակարտ խոնաւցուց , և լուսնին լցոն ալ իր դեկնութիւնը մահատիպ տժգունութեան մը փոխեր էր . քիչ մնաց պիտի իննար . բայց խելքը գլուխը եկաւ . գերմարդ կային ջանքով մը թոթվուեցաւ , և պատռհանին երկաթէ գաւազանները ուժով մը բռնեց .

քիչ քիչ իր առջի հանդարտութիւնը առաւ առլով :

— Բայց, ըստաւ աննկարագրելի պրտաս ունիութեամբ . բայց ի՞նչ կրնայ ըստի ան մըզութեան դէմ քու հօրեղբայրդ :

— Ի՞նչ, յարեց Արտեմաղեկէզեշտով մը .  
— Այս, ի՞նչ :

— Ո՞հ . Աստուած իմ, սատանայի պէս ու հոգի մը ունի . բողոք դպշած իրերը . հետք խօսած անձերը դիւթիչ զօրութեամբ մը կը թռւնաւորէ . մենք գիտենք ինչ կը քաշենք անոր ձեռքին :

— Բայց ի՞նչ հոգ, սատանայ ըլլայ, կա խարդ ըլլայ . բաւական է որ մենք մէկդ մէկ սիրենք և զիրար պաշտպանելու համար ոդի ՚ի բախն մաքառինք :

— Տկար և շատ տկար ենք մենք անոնց բռւռն զօրութեան քով :

— Ինչ կըսես, խաւարի մէջ գործողները աւելի՞ զօրաւոր են քան զանոնք՝ որոնց օգնականը ճշմարտութիւնը և պաշտպանին ալ անմեղութիւնն է :

— Ոհ, խաւարի մէջ գործելնուն համար աւելի՞ զօրաւոր են :

— Ի՞նչպէս, չեմ հասկնար ըսածդ :

— Մտիկ ըրէ որ հասկնաս . պարզամիտ ները իրենց գործելք կընեն, իրենց թցոնը անոնց կը հազորդեն . անոնք ալ տդիտարար բարիք մը ընելու յուսով և ցիմանալով այն

որոգայթները որոնց մէջ ինկած են, տուներ կը փլցնեն : Բաց ասկէց դրամով կարուն ցած հակամիտութեանց տէր և շահաւինդը ութեան ստրուկ եղողները որը քան մասնութիւն մէկ ստակի կրնեն, ասոնց ամենէն սարսափելի զէնքը երեսիդ խնդալքեցողքորդել և ուրիշին քովքու կորըսութեանդ վիհը փորելն է :

Գարեգին աչքերը մեծ մեծ բանալով և ապշած Արտեմին երեսը կը նայէր որպէս թէ այս ըստածներին բան չէր հասկնար :

Սակայն դարձեալ յարեց Գարեգին վատահ դիմօք ու իր ապշութենէն դառնաւով, ի՞նչ կրնան ընել մեզ . անմեղ եմք :

— Այս, անմեղ, պատասխանեց Արտեմ գլուխը շարժելով, և մոքին մէջ ուրիշ մը տածութիւն մը ունենալով . բայց այդ անմեղութիւնը ինչ կընեն գիտես մեր թշնամիները, սոտկալի եղեռնագործութիւն կընեն, և մեր անմեղութիւնը մահ կըլլայ մեզի :

— Միշտ յուսահատութիւն, մրմռաց Գարեգին յուսահատ ձայնիւ :

— Աւելի սարսափելին կայ, կրկնեց Արտեմ խղդուկ ձայնով մը :

— Ի՞նչ,

— Հօրեղբայրս որ ամեն ժամանակ սիրութու փիրաւորելու միջոց մը դտած ատենը զայն ձեռքէ փախցնել չուզէր և գաղանի մը պէս կը զուարձանայ ինքը երբ ես տրի-

րիմ, ու լամ, կուզէ նենգաւոր հնարքնեւ  
բավ քեզմէ զատել զիս որ աւելի կուզէմ  
մեռնիլ քան թէ գրժել խոստմանս և այն  
ուշադին զոր սիրելի մայրս մահուան անկող  
նին մէջ իր օրհնութեամբը հատուատեց և  
նու իրական ըրաւ :

—Այն, ավնիւ մայր :

—Անցեալ օր ալ սարսափելի սպառնազիր  
մը ըրաւ ինձ այն անդութ բռնաւորը :

—Սպառնացիր :

—Սպառնացաւ ինձ զիս քու երեսէդ ծած  
կել յաւիտեան և զգուշութեամբ պահել  
այնպիսի տեղ մը ուր մարդու երես չկարեւ  
նամտեսնել. այս բանը կամաց կամաց և ա  
մեն ժամ, ամեն վայրկեան սպաննել է որ  
մեզ. անագորշնը իր թշնը ու թափելը  
լաւ գիտէ, ահաւասիկ ասոր համար է որ  
շատ կը վախնամ :

Գարեգին յուսահատութենէն ձեռքերը  
կը կամթատէր .

—Դուն գիտես, նորէն վրայ բերաւ Ար-  
տեմ որ ես քեզմէ ուրիշ ապաւէն չունիմ,  
տան մէջ Մարիամ մայրիկս և Սաթինիկ զիս  
կը սիրեն, բայց ի՞նչ օգուտ, մայրիկը պա-  
ռաւ և տկար է, գուն ցնդեր եւ ըօնըով  
անոր բերանը կը դոցեն : Սաթինիկին ալ  
արտէն արիւն կերթայ, ի՞նչ կընայ ընել  
խեղճը, միայն իր արցունքները իմինիս հետ  
կընայ խառնել եւ բոլոր հառաջանքները

կուրծքին մէջ կը խեղդէ : Բաղդը զիս լժրչ  
ուառ ըրած է արդէն անգութ հօրեղբօր  
մը ձեռքը մատնելով, իմ ստացուածքներս  
յափշտակած է . ես հիմայ դրամի մը տէր  
չեմ. ամեն ատեն նոր հագուստ մը հագած  
ժամանակս հօրեղբայրս երեսս կուտայ ը-  
սելովթէ ինծի համար սյոչափ ծախսք ըրած  
է : Ես մինչեւ հիմայ քեզի ամեն բան չէի  
ըսեր, վասն զի գիտեմ թէ ինչ վեհ որիտ  
ունիս, ազնուական վրէմինեղբաւթիւն մը  
զքեզ պիտի զինէր . վասն զի գիտեմ որ գու-  
սիրտդ ինձ համար պահած ես . այս գեղե-  
ցիկ աշխարհը առանց ինծի ոչինչ է քեզի  
համար . բայց իմ հօրեղբօրս և իր համա-  
խոհներու ձեռքէն շատ վիշտ պիտի կրէիր,  
քու ծաղիկ հասակդ պիտի թառամէր, ալ  
զիս բնաւ չի պիտի տեսնէիր թերես և ով  
գիտէ . . . : Այս պատճառաւ վշտերս միշտ  
կը ջանայի քեզմէ ծածկել և զուարթ երե-  
ւալ, բայց հիմայ որ կը զրուցեմ գիտաւո-  
րութիւնս քեզ հասկցնել է թէ հօրեղբօրս  
ցասումը ինչ աստիճանի հասած է, պէտք  
է որ զգուշութիւն ընես :

Հոս կանկ առաւ Արտեմ և դորվանօք  
Գարեգինի ձեռքը սեղմեց իբրև թէ խոս-  
տում առնել կուզէր :

—Միշտ, միշտ, յարեց Գարեգին թեթև  
մը ժպտելով :

—Դու լաւ գիտես, կրկնեց Արտեմ խօս-

քին թելը նորէն ձեւաք առնելով, թե ինչ  
եղաւ Արամայիս թշուառ երիտասարդը:

Այս խօսքին վրայ Գարեգին ձեռքը ճակ  
ախն տարաւ բան մը մատծելու պէս:

Քոլորովին մոռցայ, աւելցուց անհամբեց  
ըութեամբ և ոտքը գեափնը զարնելով, Արամայիս հիմայ ինձ կըսպասէ, խեղճը խիստ  
վրոված է, խելքը տակնուվրայ կըլրայ:

— Օդնէ, օգնէ իրէն սիրելի Գարեգինա,  
աղմիւ սիրու մը ունի նա, մեզ շատ կը սիրէ:

Այս միջոցին անեղուխին վրայ մեծաձայն  
և հապշտավքայերու ձայն մը լոււեցաւ.  
Արտեմայս անձին ով ըլլալը հասկնալով բու-  
յոր մարմնովը գողաց, հօրեղբաւ ը ը-  
ստ և խօսքը բերնին մէջ մնաց և գլխուն  
մաղերը անկուեցան: Խսկ Գարեգինի դէմ-  
քին վրայ սարսափելի բարկութեան մը նը-  
շանները տեսնուեցան, աչքերը կրակի պէս  
փայլեցան, գեղեցիկ դէմքը խոժուեցաւ.  
Եր ուժը կը կշռէր և կսկսէր այնպիսի վայր-  
իեաններէն մէկուն աղդեցութեան տակ  
մանել՝ ուր մարդուս աչքին ամեն բան ու-  
կերեաց նոյն խսկ իր ամենասիրելին: Սառ-  
կալի խորհուրդ մը անցաւ մաքէն կայծակի  
արագութեամբ, խորհեցաւ որ պատուհա-  
նին երկամէ ձողերէն մէկը փրցնելով  
իր թշնամոյն գէմը ենէ, և մէկ հարուա-  
ծով անոր գլուխը ջախջախելով արինելուայ  
գետինը փուէ, բայց Արտեմին իրէն ըրած-

մորմոքախառն կէս ժպիտէն՝ որուն ամենէն  
քարասիրան խսկ չէր գիմանար, եր բար-  
կութիւնը անցաւ և Արտեմին միտքը հաս-  
կընալով գլուխը շարժեց ՚ինչան հնազան-  
գութեան և սորքին ծայրերուն վրայ կոխեւ-  
լով այծեամի մը արագութեամբ սրոցաւ-  
և աներեցիթ եղաւ մօտերը գտնուած նեղ  
և աղտուգի փարցի մը մէջ:

— Հիմայ, հիմայ, մրմէչեց Արտեմ պա-  
տուհանը գոցելով և վրան գլուխը շտկելով:

Այս բաները մորի արագութեամբ ան-  
ցան, քիչ մը վերջը բարձրահասակ մարդ-  
մը ձեռքը ձրագ մը բանած սենեակին գու-  
ռը ուժգնութեամբ հրելով ներս մտաւ:

Այս անձը Արտեմի հօրեղբայրը վահանն  
եր:

Գլուխը, Գ

ԲԱՆԱԿՈՒԹԻ

Վահան բարձրահասակ եր և ձաւադէմ,  
գլուխը ճազատ, յիսուն հինգ տարեկան  
կար, գլխուն մազերը և մօրուքը ճերմը-  
կած են, բայց ինքը ներկ կը դնէր, բա-  
նի մը օրէ ՚ի վեր ներկին ու գոյնը եղծուած  
ըլլալով՝ մազերը, պեսիսը և մօրուքը զազիւ  
դեղին գոյն մը աւատծ էնին, որով իր գէմքը  
աւելի կը տգեղնար, աչքերը մանր, խո-  
րունկցած, և կապոյտ չըջանակով մը պա-

տած՝ յօնքերը թաւ, քիթը բաւական տարակ, երեսին մէկ կողմը, ականջին քով, խոշոր ուռեցք մը կար որ բարկացած աւենը կարծես թէ կուռենար. տձեւ գերութենէն ալ փորը գուրս ցցուած էր, յարդի գոյն գաղմիրէ թիկնոց մը հագած էր, ֆէսը խոշոր և ականջներուն կէսը գոցած, փողպատը մնդուսէ՝ զոր հաստ և իրարու վրայ պլած էր, վրան քառանկիւնի գծերով մութ գոյն բաճկոն մը կը կըրէր, տափառը սեւ ու լցն, քալած ժամանակը ուսերը թեւերուն հետ ծիծաղելի կերպով մը կը շարժէր, և կունակին վրայ սապատողի նման կունդ մը կը ձեւանառ. անշնորհ ծիծաղ մը ունէր և ծիծաղած ատեն հաստ շրթունքները կը կախուէին. նենդաւոր և չարասէր բնաւորութիւն մը ունէր, զրպարտութեան նախատիպ մ'էր և իր բարեկամներն ու ամենասիրելիներն իսկ այս մոլութեան կը զոհէր:

Երբ սենեւակէն ներս մտաւ, ձեռքի ձըրագը դրան քով եղող տախտակէ սեղանին վրայ դրաւ և կուրծքը անկելով դէպ ՚ի Արտեմ յաւաջացաւ որ թեւերը կուրծքին վրայ դրած և անշարժ կեցած էր:

— Միշտ մի և նոյն յամառութիւնը, այն պէս չէ, օրիորդ, ըսաւ վահան բարկացայտ դիմօք :

— Ինչպէս, հօրեղբայրս, աւելցուց Ար-

տեմ արհամարհանօք, ինչ ըսել կուզես : Ըսել կուզեմ որ, յարեց վահան տպեղ շրթունքները երեցնելով. ըսել կուզեմ որ դու գարձեալ ինքնակամ ընթացք մը բռներ ես, ուղածդ կընես և զիս քամահել կը ձեւացնես :

— Կարծեմթէ գէշութիւն մը ըրած չեմ :

— Այսպէս է, օրիորդ, եթէ ուրիշներուն հարցընեմք որ գիշեր ցորեկ գլխուս միօք կուտեն, ըսելով թէ եզրօրդ աղջիկը բողորովին ճամբէ ելէր է :

— Ոհ, հօրեղբայրս, աւելի ըսէ թէ ես ասանկ ըսել կուզեմ. վասն զի չեմ կարծեր որ ուրիշները գրգռելու չափ գէշ բան մը ըրած ըլլամ, սակայն թեւելս անսկիտան մարդիկ, չեմ գիտեր ինչ չար ոգիներէ գըրդեալ, այդպիսի բան մը ըսած ըլլան. հոգու չէ, բաւական է որ ես պարկեշտութիւնն ու առաջինութիւնն յարդեմ, ուրիշները ինչ կուզեն թող ըսեն :

— Լաւ, լաւ. բարսյականութիւնն ալ քեզի յարեսըցուցեր ես, ամենելին քու հօրեղբօրդ պատիւը չես խնայեր որ միշտ քու աղեկութիւնդ կուզէ. գուք մինակ ձեր խելքին հաւանած էք. կուզես որ մարդքու դործերուդ չի խառնուի և խելքիդ փչածք ընես. ոչ, ոչ. ես տանս մէջ այդպիսի բաներ չեմուզեր որք կրօնից, պատուց և բարսյականի գէմ են :

— Քայց հօրեղբայրս , ուրիշ շատ բաներ  
ալ կան որք նոյնափէս կրօնից , բարժականու-  
թեան և մարդկութեան խոկ գէմեն և  
դուք շատ անգամ անոնց խօսքը չէք ընեք  
և ձեր այդ խօսքերովք կուզէք զիս անկրօն ,  
անգատիւ և անբարցական կոչել :

— Քու ընթացքդ այդ պատուելի անոն-  
ները կուտայ քեզի :

— Ընթացքու ընթացքու , բայց ևս անի-  
բառութեան գէմ կը բաղաքեմ :

— Ինչպէս անիբառութեան :

— Ա՞հ . դու չեմ գիտեր , հօրեղբայրս :  
— ինչ գիտնամ :

Զես գիտեր այն բաները զորոնք պէտք  
էր շատ լաւ գիտնացիր . դու իմ երկրորդ  
հայրու ես , բայց քու ինձ ըրածներդ հօր  
մը անարժան գործեր են :

— Տէր Վասուած , աես մշյմը ինչ անամօ-  
թութիւն . ապեղախտ ես դուն փոխանակ  
իմ քեզի ըրած բարեաց :

Կարծեմ ամենեին բարիք մը ընդու-  
նած չեմ քեզմէ , եթէ բարիք կայ :

Արդէն բոլոր բարերարութիւնք շու-  
տով կը մոռցուին քու քովդ :

Ի՞մ քովս եթէ ուրիշին , չգիտեմ :

Այդ մէկ կողմէ թող , ամեն անգամ որ  
մէկը քեզի աղէկ խրատ կուտայ դու գէշ  
մորով կառնես :

Օ՛հ . ինչ գեղեցիկ խրատներ , որք միշտ

դաղտնի թոյն մը կը պարտնակեն . այդ  
խրատներուն օգուտը ուրիշի համար է ,  
ես լոկ վշտէ ուրիշ բան մը չեմ վաստկիր :  
— Բայց դուն ինքնահաւան ես :

— Երբէք :

— Ամեն երախտիք շուտ կը մտունա :

— Երբէք , ես ինծի միայն կարելից գէմիք  
մը ցուցնողին երախտիքը յաւխուեան չեմ  
մոռնար և միշտ կաղօմեմ իրեն համար .  
սիրելի մայրո ինձ այսպէս սորմբցուց :

Այս աեղ Արտեմին սիրող թունդ ելաւ :

— Ա՞հ . սիրելի մայրս , մայրս , ըստ յուզ-  
եալ ձայնով մը , և իր աչքին պայծառ լքին  
մէջ երկու մարդարիս . փայլեցան և  
թաշկինակը աչքերուն տարաւ :

Վահան աեսնելով որ Արտեմիւրջին առ-  
ափճանի յուսահատութեան մը մէջ ըլլա-  
լով մինչև այն ժամանակ գաղտնի պահած  
ցաւերը և ցասումները դուրս պիսի թա-  
փէր որով տան մէջ եղող հիւրերն ալ ամեն  
բան պիտի իմանացին , ուզելով Արտեմին  
այս յուզեալ վիճակէն օգուտ մը քաղել ,  
կեղծ կարեկցութեան մը կերպ առաւ և  
բասաւ :

— Այս , օրիորդ . մայրդ աղնիւ կին . մ'էք  
և իրաւամբք անոր մահուան վրայ կը ցաւիս  
և կը տրտմիս , բայց սակայն միճակիդ վրայ  
ցաւելու բան մը չտնիս . տիկնոջ պէս  
կը հագուխս ու հանգիստ ես , և եթէ եր-

բեմն քու կամքիդ դէմ կուգան, այն ալ  
դարձեալ քու բաւութեանդ համար է .  
գուն անփորձ ես, օգուադ ու վնասդ լաւ  
չեմ ճանչեր :

Արտեմ աթոռի մը վրայ նատած էր ձեռքը  
ծնօտին կոթնցուցած . թեթև դեղնու-  
թիւն մը տարածուած էր իր շնորհալի դէմ  
քին վրայ , երկայն մազերուն ծոսերը ու-  
սերուն վրայ սփռուած էին , դէմքին վր-  
րայի արտասուաց ակօններն ալ զօշոտից հը-  
րապշը մը կուտային . իր կուսական և ամ-  
բիծ ծոցն ալ երբեմն մանր և անթիւ հա-  
ռաջանելներավ կուռենար . աւաղ, այս շը-  
նորհաշուք դէմքը , որուն վրայ պէտք էր  
որ մսիտք և խինդ փայլէին , այս դիւրադ  
գած սիրտը որ հրձուանօք և բերկու-  
թեամբ պէտք էր որ յորդէր . կոկիծով  
համակեալ էին . և այս ծաղիկ հասակը  
ծաղիկ կոկոնի մը պէս իր պատեանէն  
դուրս ելլելով լցո տեսնելու ժամանակը ,  
անդութ ձեռք մը կը զարնէր անոր ու կը  
խամբէր :

Արտեմ դիտէր իր հօրեղբօրը չարամիտ  
ընաւորութիւնը ու նենգամտութիւնը որ  
իր նախատակին հասնելու համար , անյի-  
շաշարութիւն կեղծելով նուաստարար ա-  
մենուն սոքը կը խոնարհէր . աւատի չու-  
զեց խաբուիլ անոր կեղծ երեցթէն և յա-  
րեց :

— Բայց ինչո՞ւ , հօրեղբօրս անպատճեա-  
թիւն կը կոչեն այն զգացումը որ նոյն իսկ  
արժանապատուութեան և սիրելի մօր մը  
յիշատակին վրայ հիմնուած է :

Երբ Արտեմ մօրը խօսքը մէջ կը բերէր ,  
կարծես թէ ծանր հարուած մը կիջնար հօր-  
եղբօրը գլխուն , և այս նենգամիտ մար-  
դուն խորհուրդները կը ցրուէր . Եւ ար-  
դարեւ վահան ծանր անհանդ ստութիւն մը  
կըզգար և ձեռքբերը կը շփէր . կը զարմանար  
Արտեմի փոխուելուն վրայ ու սկից չէր յու-  
սար այս խօսքերը լսել և չէր գիտէր թէ  
խօսքը ու սկից կսկսի :

Այս միջոցին փողոցի գուռը զարնուեցաւ ,  
սպասաւոր մը խոհարաննեն ենինելով դուռը  
բացաւ , դէմը ենողը զինուորական պաշտօն-  
եայ մըն էր և սպասաւորը բարեւելէն ետ-  
քը գրապանն նամակ մը համեց և սպասա-  
ւորին տալով պատուիրեց որ տիրոջը այս :  
Երբոր պաշտօնեայն գնաց՝ սպասաւորն ալ  
դուռը գոցելով երբ կը պատրաստուէր վեր  
ելլել ու տիրոջը տալ , վահան որ դռան  
կղպանքին ծակէն նայէր ու տեսէր էր՝  
դուռարթութեամբ դուռը բացաւ և սպա-  
սաւորին ձեռքեն առնելով նամակը կար-  
գաց : Կարդալէն , լմացնելէն վերջը նամակը  
ծրաբեց և ներս մատ դարձեալ , որ ատեն  
Արտեմ բնազդմամբ զգալով բոլորթին այ-  
լոյլեցաւ և սարսաւո մը եկաւ վրան :

Ա՛, աս մարդիկներն ալ ասանկ դիշեր գլուխս կը ցաւցնեն, յարեց վահաններս մանելով և անտարբերութիւն կեղծելով որպէս զի Արտեմ կանկածի մը չերթայ :

— Ինչ կայ, հօրեղբայրո, աւելցուց Արտեմ ձշմարխս սարսափնդ մը և երեսին կենափանի գոյնը մասիր դարձաւ :

— Աչի՞չ, բայս վահան խնդալով որուն չարագուշակ դէմքը այս պարագայիս մէջ Արտեմի սոսկումը վայրիեանէ վայրիեան կաւելցնէր :

— Բայց զինուորական պաշտօնեայ մը, մրմռաց բերնին մէջ Արտեմ ամհձկութեամբ և որպէս թէ մաքին մէջի եղած սկ մուածութիւնը վահնէլ կուզէր, զինուորական մը այս ատեն . . . :

— Համդարաէ, օրիսդդ, աւելցուց հօրեղբայրը որ բազմացին վրայ նստած երեւմն դաշտուկ անհանգիստ հայեցաւածքներ կուզէր դէպ ՚ի փաղց իբրև թէ մէկու մը կըսպասէր, հոգդ մի՛ ըներ. բայց ես այս սաստանայ մարդուն հետ ինչպէս պիտի ընեմ, սա ձափորդութիւնը նայէ հիմակ, հիւրերս ինչ ընեմ:

— Ո՛հ, տէր Աստուած, բայս Արտեմ մեծկակ հառաջանք մը հանելով, տէր Աստուած, բարեկենդանի դիշերով, անցեալ տարի մալքս ցաւոց անկողնի մէջ կը հեծէր, այս տարի ալ չեմ դիտեր ինչ դժբաղդու-

թիւն :

Ալուեմ պարտասեալ աթոռախնկաւ այս միջոցին լուսնի լուսովը մէկ քանի մարդու գլուխ երեւցաւ, որք իրարու հետ կը քրթմնջէին. դիշերապահներն եին ասոնք, բայց այս անգամ իրենց սովորութեան սլէս կարգաւ չեին ըներ շրջաննին : Կանցկէ մէկը որ սկ խարչիկ մ'էր, դէպ ՚ի պատու համեմին կողմը յառաջացաւ . Արտեմի սոսկումը վերջի աստիճանի եղաւ, երբ այս սկադէմ մարդը անեսաւ . քիչ մը վերջը նորէն երեան ելաւ այս խարչիկը և ընկերներուն քով գալութիւնացին իրարու հետեւ մերջը ամենըը մէկեն դէպ ՚ի այն կաղմը եղող նեղ փողոցներուն մէկուն մէջ մանելով աներեցի եղան : Արտեմ ամեն բան հասկցաւ և գեղեցիկ դէմքը ձեռքերուն մէջ պահէց, վերջը իս արցանըները սրբելով աղեկեղ հեծեանօք դոչեց :

Ա՛հ, հօրեղբայրա, դուն զիս սպաննել կը ջանաս, անզդալի կերպիւ հարուածներուդ որտիս ուղղերալ :

— Ինչ ըսել կաւզես, օրիսդդ, վրայ բերաւ վահան վայրադ գիմօք, և այս սրտաձմիկ տեսարանին վրայ զաւարձանալու պէս, չեմ հասկնար ըսածդ :

— Այս շատ լաւ կը հասկնաս :

— Օրիսդդ, քու գլուխդ տաքցած է, ըսածդ չես գիտեր, ով ըսաւ թէքեղ թշնա-

մաւթիւն ընել կուզենք մենք :

— Եղելութիւնները , որ ամենէն աւելի  
լաւ և բացայայտ կը խօսին :

— Սատանան տանի այդ եղելութիւնները  
ուք քու խելքդ ցնորեր են :

Այնպիսի սոսկալի անտարբերութեամբ  
մը արտասանեց վահան այս վերջին խօս  
քերը որ օրիորդին սիրող աւելի դառնա  
ցաւ :

— Ցնորած եմ, յարեց Արտեմ գլուխը  
շարժելով և վեհանձն արհամարանօք հօր  
եղբօրը երեսու նայելով :

— Բայց օրիորդ , կը սիսալիս , աւելցուց  
վահան անտարբերութիւն կեղծելով . սա  
կայն կարծես թէ այս ժանտաժուտ ոդին  
սոսկաց Արտեմի կրակի պէս նայուածքէն .  
կը սիսալիս այն , և վերջը կիմանաս քու այդ  
սիսալմունքդ . հիմաց զայրացած ես , ինչ որ  
ալ ըսեմքեզի ոչինչ է , քու ձախող կարծի  
քիւր վրայ պիտի յամառիս , հարկաւ հո  
րաքցրդ քեզի բացատրեց բռնած ընթաց  
քիւր գէշ հետևանքները . դուն մեր տանը  
պատուցն միշտարատ կը բերես . բայց մենք  
քու միջակիւր լաւութեանը կաշխատինք :

Խօսքը չը կրցաւ շարունակել վահան .  
սպասաւոր մը ներս մասաւ և ըստաւ թէ  
հիւրերը իրեն կրսպասեն : Այս խօսքին վր  
բայց ոտքի ելաւնաւ և սպասաւորը խրկելէն  
վերջը Արտեմի ուղղուելով ըստաւ :

— Խորհէ լաւ կերպով զրուցածներուտ ս  
վրայ , օրիորդս , և պիտի տեսնես թէ ի-  
րաւունք չունիմքեզ զգուշացնել . խորհէ ,  
խորհէ օրիորդ բարի գիշեր :

— Բարի գիշեր , կը կնեց Արտեմ ակամայ  
կերպով :

Վահան սենեակէն գուրս ելաւ , Արտեմ  
տոանձին մնողով կարծես թէ աղատ շունչ  
կառնէր և կուրծքին մէջ մինչեւ այն տոեն  
խեղդած հառաչանքները սկսաւ . աղատա-  
բար գուրս թափել . գիշերապահներուն  
վարմունքը զինքը շատ սարսափեցուց և  
Գարեգինի վրայ կը մոտածէր անդադար .  
կը ջանար մողքին մէջ նոր նոր միսիմարա-  
կան խորհուրդներ վնասուել և դուրս հա-  
նել այն սե մոտածութիւնները որ իւր ու-  
ղելը կայրէին . կուրծքը կը բռնկէր և վհա-  
տութիւնն ու անհանգստութիւնը զինքը  
կը խոշտանգէին . երեակայութիւնը սաստիկ  
խոռված էր և մողքին մէջ հազար ու մէկ  
հակառակ խորհուրդներ մէկզմէկ կը բաղ-  
խէին . մէյմը կը մոտածէր որ սրանար եր-  
թար Գարեգինը վնասուելու , վասն զի այս  
միջոցին զինքը գիշերապահներու բրտու-  
թեանը մատնուած կը կարծէր . մէյմ՝ ալ  
սարսափով կը դողար ու գէմքը ձեռքերուն  
մէջ կը սպահէր : Սիրուն գլուխը աթոռին  
յենարանին վրայ դրած՝ իր բաղդը կ'ողբար  
ու կ'անիծէր :

Սպասաւոր մը ներս մտաւ հարցնելու  
համար թէ հանգստանալ կը փափաքի՞։ Առ  
տեմիր խոր թմբութենէն արթննալսի սպա-  
սաւորին դարձաւ։

— Գաբրիէլ, ըստ կուզե՞ն ինձ հազարջի  
օշարակ մը պատրաստել, շատ չնորհակալ  
կըլլամ։

— Ամենայն յօժարս թեամբ օրիսրդ,  
պատախանեց սպասաւորը։

Ծուտ մը գուրս ելելով գնաց պատրաս-  
տեց և բերաւ Արտեմին։ Արտեմ սպալորտ-  
թիւն բրած էր յաճախ այս օշարակը գոր-  
ծածելու որով սիրաը կը զրվանար և ուղե-  
ղին կրակը կը հանգարտէր օշարակը խը-  
մելէն վերջը գաւամը նորէն սպասաւորին  
դարձնելով հարցուց թէ Սամթինիկ դարձ մը  
ունի՞, կրնայ քիչ մը վար իջնալ։

— Ո՛հ, օրիսրդ, ըստ Գաբրիէլ կարեկցու-  
րար, ինչդք աղջիկը տկարութիւն ունի, սառ-  
տիկ գիտու պատցոյ մը ունեցաւ և մարելիք  
եկաւ վրան չեմ դիտեր ինչու համար, ուս-  
տի սենեակը տարուեցաւ որ հանգստանայ։

Արտեմ գոյլ երաւ և յարեց։

— Քովը ո՞վ իայ։

— Քիչ մը առաջ աիլին հօրաքյրդ կար,  
բայց հիմայ չեմ դիտեր։

Արտեմ շտապան սենեակէն գուրս ելե-  
լով շունչը սանդուխին դրուխը առաւ, սր-  
բահէն անցած ժամանակը՝ ուսկից Սամթիւ-

սիկէն սենեակը պիտի երթար, խառնաց  
փնդոր աղաղակ մը ականջին զարկաւ . փո-  
ղոցին վրայի մեծ մէկ սենեակին մէջ մեծ  
բաղմութիւն մը կազ, ոմանք նարտ կը խա-  
զային, ոմանք կը պարեին, փոքր տղոց ձայ-  
նը ամենքը կը գերազանցէր, ոմանք գինին  
խմելով տաքութեամբ իրարու հետ կը վի-  
ճէին։ Արտեմ բազորովին անտարբեր այս  
շուրջին, անցաւ սրահէն եւ դէպ ՚ի Սա-  
մթինկաց սենեակը ուղղուեցաւ, և ելլը գու-  
ռը բանալով ներս մտաւ, տեսաւ որ անիշ-  
կայ մինակէ էր և անկողնին վրայ մէկ կրզմին  
պատկած էր։ Այս սենեակը տան ետևի  
կողմը ըլլալով փաքրիկ թփերով գարգար-  
ուած բլուրակներու վրայ կը նայէր և Սա-  
մթինիկին յատկացած էր։ Սամթինիկ դար-  
նան գեղղեցիկ ամիսներաւն մէջ իր սովորու-  
թեան համեմատ առաւն կանուխ ելելով  
և սփսակներուն գեղգեղը լսելով կ'զմայիէր  
ու կը յափշտակուէր։ Պատուհամները  
վարդագոյն վարագյուններով գոցուած էին,  
պարզ բայց կողինի ու մաքուր կերպով շրա-  
կըված բազմոց մը վար + բազմոցին և բար-  
ձերուն երեսները ծաղկենակար կերպասէ  
էին, սենեակին բոլոր զարդը ընկուզենիէ  
փոքրիկ սեղան մ'էր դարակով հանգերձ,  
որտե՞ն մէջ Սամթինիկ իրեն խիստ հարկաւոր  
եղած իրերը և կար կարելու վերաբերեալ  
գործիքները կը սրահէր, սենեակին պատերն

աղ նոյնպէս վարդագոյն ներկով գարդարուած էին :

Արտեմին դուռը քանալուն ձայնէն Սաթինիկ աչքերը բացաւ և ուրախութեամբ ելաւ անկողնին վրայ նստաւ . Արտեմ ալ դէպ ՚ի Սաթինիկ ուղղուելով գորովանօք անոր ձեռքը սեզմեց , անկողնին մէջ անոր քովը նստաւ պաղձեռքերը իր ձեռքերուն մէջ առնելով : Սաթինիկ գլուխը ձերմակ գիշերնոց մը կապած էր և վրայէն նոյնպէս ձերմակ հագած էր . իր խարսხաշ ու բնականաբար ոլորուած խոպոպիները ու սերուն վրայ շարժելով տեսակ մը հրապոյր կուտային այս գեղնած ու վտիտ դէմքին որ մարդուս սիրաը կը գրաւէր և ՚ի կարեկդութիւն կը շարժէր :

— Ահ , սիրելի քյորս , ըստաւ Սաթինիկ Արտեմի երեսները համբուրելով . զիս տեսնելու եկար :

— Ինչ եղար . սիրուն Սաթինիկս . աւելցուց Արտեմ խանդալացատին ժպտելով անոր երեսին :

— Ահ , չեմ դիմեր , յարեց Սաթինիկ , գեղեցիկ աչքերուն ու երկայն արտեւանունքները թրջած էին , չեմ դիմեր . Հօրեղբայրդ . . . :

— Ո՛հ , տէր Աստուած , գոչեց Արտեմ Սաթինիկի խօսքը կորելով քեզի՞ալ քեզի՞ալ քեզի՞ալ :

Սաթինիկ Արտեմին պլուած էր ու անոր

ձիւնափայլ պարանոցը կը համբուրելը արտասուելով . ահա այսպէս շատ ժամանակ այս դժբաղդ արարածները , հրեշտակի պէս անմեղ առանձնացած կուրային մէկը անձնուեր բարեկամութեան և միւսը անկեղծ սիրայ զգացմամբ զգացեալ , փան զի այս երկու զգացումները իրարու քոյր են եւ միշտ զիրար կը վնասեն :

— Հօրեղբայրդ , կրկնեց Սաթինիկ ինձ քեզի համար հարցուց , և երբ ես իրենը սի թէ հարկաւ վարը գործ մը ունենալուն համար է որ կուշանայ , ինքը ինծի , ո՛չ Աստածած իմ , ինչ մահառիմ վայրկեան էր այն , ինքը ինծի բարկանալով կատաղբար մթշուառականներ ձեզ երկուքնիդ ալ բզիկ բզիկ ընելու է ո պոռաց . ես մահս տեսաց այն ատեն և երբ ինծի կօրիր աչքիս մի երեար ո ըսելով շտապաւ սկսաւ սանդախէն վար իշնել՝ միտքը իմացայ , հօդիս գողաց քեզի և Գարեգինին համար վախնալով , ուստի նուազում մ'եկաւ վրաս , ինքզինքս կորսնցուցի , ալ անկից վերջը չեմ գիտեր ինչ եղաւ , երբ խելքս գլուխս եկաւ ինքնքս անկողնիս մէջ գտայ :

Անգութ մարդ , մրմռաց Արտեմ և աչքերը լեցուեցան :

— Սակայն այն վայրկեանէն մինչեւ հիմայ , յարեց Սաթինիկ Արտեմի վիզը փարելով , չեմ կրնար կրած սարսափս քեզնկարագրել

Հարկաւ դուն ինէ աւելի սոսկացիր երբ  
անոր չարագոյժ դէմքը տեսար . ահ , սիրե-  
լի քցրս , չես գիտեր մտքէս ինչեր կանց-  
նէին . կարծես թէ կեանքիս մէջ ասանկ  
դող կրած չէի . ես որ այնչափ վարժուած  
եմ դող ելլելու :

— Ա'հ . . Աստուած իմ , ինայէ անոր , ը-  
սաւ Սրտեմ այնպէս շեշտելով այն խօսքե-  
րը որ Սաթինիկ վրդովիցաւ :

— Ի՞նչ ունիս , քցրս , վրայ բերաւ Սաթի-  
նիկ ևս քան զես անձկութիւնն աւելնարվ:

— Բան մը չէ , աւելցուց Սրտեմշտկուե-  
լով և իր մտքին մէջի եղած սև մտածու-  
թեան հաւատալ չուզելու պէս :

— Սակայն դուն նոր վիշտ մը ունիս , ը-  
սաւ Սաթինիկ անհամբերութեամբ :

— Պարապ բան , վրայ բերաւ Սրտեմ վրա-  
սահ դէմք ցուցնելով . երբեմն վրաս վրդով  
կուդայ :

— Պատճառը :

— Ոչ ոք գիտէ :

— Զիս խարել կուզես :

— Երբէք , քցրս ես :

Սրտեմ այս խօսքը գոցելու համար վրան  
խօսք բերելով ըսաւ :

— Բայց դուն հիմայ ի՞նչպէս ես :

Սաթինիկ աւ չուզելով աւելի պնդել , ին-  
քն ալ խօսքը գոցեց և խիստ աղէկ քցր իմ ,  
ոյստախանեց սիրուն ժողիս մը ցուցնելով

դէմքին վրայ :

— Եթէ կուզեսքնանալ քեզ անհանդիսա-  
չընեմ :

— Ամենենին սիրելի Սրտեմ . քու ընկե-  
րութիւնդ զիս կըսկսիքէ . բաց ասկէ ես չէի  
քնանար , լոկ թմբութիւն մ'էր այն . խիստ  
ուրախացայ քու գալւոդ վրայ , վասն զի  
ուժո բաւական գայ , սրտիս բաբախումը  
գագրեցաւ . աւելի սրտադոզս քեզի հա-  
մար էր , սրտինեան քու սիրոդ արդէն ան-  
թիւ խոցերավ խոցուած է . բայց հիմայ  
որ գու խմքովս ես , ալ հոգս չէ :

— Հա , հա , գարձեալ զիս կը շղզոր-  
թես , ըսաւ Սրտեմ կատակի ձեռվլ , ակա-  
մաց ծիծաղ մը փրցնելով և Սաթինիկի երե-  
սին թեթև ապտակ մը զարնելով :

Սաթինիկ ժպտեցաւ և անոր ձեռքերը  
իր կուրծքին վրայ սեզմելէն վերծը ,

— Սիրելի Սրտեմս , աւելցուց , եթէ քցր  
մը ունենայի՝ քեզմէ աւելի չի սիրահ սի-  
րէի :

Սրտեմ կը պատրաստու էր պատախանե-  
լու երբ սենեակին դուռը մէկը զարկաւ ,  
երկուքը մէկէն թոթվըուեցան . Սրտեմ  
ոտքի ելաւ ու բացեք ով որ է նէ „ ըսաւ .  
դուռը բացուեցաւ եւ վայելչադէմ երի-  
տասարդ մը ներս մոտաւ . ասիկայ Մարիամ ,  
մայրիկին որդին և Սրտեմի ու Սաթինիայ  
երբայրագիրը , Գրիգորն էր :

— 0', բարի եկար Պ. Գրիգորիկոս, ըստ  
Արտեմ ուրախութեամբ անոր դէմը եր-  
թալով :

— Բարի աեսութիւն, բարի իրիկուն,  
աւելցուց Գրիգոր մատայող և ախուր դիմօք:

Գրիգոր վայելչահասակ և գեղեցիկ երի-  
տասարդ մ'էր, կապուտակ աչքերով, խար-  
տեաշ մազերով, ճակատը բարձր, իր ֆէսը  
վայելուչ կերպով դէպ ՚ի գլխուն ետեկի կող-  
մը կը հակեցնէր և ճակտին փայլուն մազե-  
րը կը տեսնուէին. զբանիքը շատ կը սիրէր  
և միշտ երեալ կը իննդար, զուարթ էր :  
Արտեմ անոր մտազբաղութիւնը նշմարելով  
և գէմքին տիրութիւնը տեսնելով, թեթև  
կերպով տժգունեցաւ ինքն ալ . չէր կընար  
հասկնալ թէ ինչպէս Գրիգոր դուրսի զբօ-  
սանքը ձգելով տիրադէմ իրենց քսվը կու-  
դար . Գրիգոր՝ որ զբօսանաց ու զուարձու-  
թեան համար հոգին կուտար : Մէկէն ՚ի  
մէկ այն տիսուր մտածութիւնը որ քիչ մը  
առաջ զինքը շատ չարչարէր էր. նորէն ըս-  
կաւ բոլոր զօրութեամբ իր միտքը տակն  
ու զբայ ընել :

— Ի՞նչ կայ, ի՞նչ ունիս . տիսուր կերեաս  
ըստ, Գրիգորի մտենալով Արտեմ և ձեռ-  
քը բռնելով :

— Ոչինչ, օրիորդ, սպատասխանեց Գրի-  
գոր, և իր յուզմունքը ծածկելու համար  
դէպ ՚ի Սամբինիկ ուղղուեցաւ զոր քիչ մը

առաջ չէր կրցեր նշմարել :

— Ի՞նչ եղեր ես, ըստ Սամբինիկի ձեռքը  
թոթուելով :

— Բասն մը չէ . սիրելի Գրիգորիկ, գլուխ  
պայտյա մը :

— Երբ սկսեց, զբայ բերաւ Գրիգոր կըու-  
նակը Արտեմին դարձնելով որպէս զի անոր  
խոպեալ նայուածքներէն զերծանի :

— Քիչ մը առաջ, ըստ Սամբինիկի ինքն  
իսկ ապահծ և Արտեմի ու Գրիգորի ընթաց-  
քէն բան մը ըը կարենալով հասկնալ :

— Աղէկ կեցիր, աղէկ կեցիր . առեւլուց  
Գրիգոր ինքպինքը բռնելով եւ զուարձու-  
թիւն ցուցնելով դէմքին վրայն վեծը ա-  
թու մը առնելով նստաւ և բայց անցնպիսի  
դէքով մը որ Ճիշտ Սամբինիկի դիմուն էր .  
Արտեմ ալ իր մէկ կողմը գարուն առած ա-  
տենը կընար Գրիգոր անոր նայուածքէն  
փախչիլ : Բաւտիկան ժամանակ լուռ կենա-  
լով իրարու երես նայեցան և կարծես թէ  
կըսպասէին թէ ով պիտի խօսելու սկսէր : Գր-  
իգոր շակուեցաւ, սպասութեանը համե-  
մատ ֆէսը գլխուն ետեկի կողմը հրեց եւ  
ըստ ձեռքերը շփելով :

— Հ, օրիորդներ, ինչպէս անցուցիք ժա-  
մանակնիդ . ես հոս չեղած ատենս, միթէ  
նոր բան մը անցաւ :

— Ո՛չ, ըստ, Արտեմ, հիւրերը միշտ  
մի և նոյն կերպով կըզբօսնուն, ուրիշ բան

մը չի կայ :

— Ուրիշ ամենելին :

— Հա , ըստու Արտեմ նստած տեղէն վեր նետուելով , զինուորական պաշտօնեայ մը եկաւ և նամակ մը բերաւ հօրեղբօրս :

— Ճիշտ է , մրմռաց բերնին մէջ Գրիգոր դէմքը թեթև կերպով մը ախրելով զոր Արտեմ լաւ նշմարեց :

— Անկից վերջը , շարունակեց Արտեմ սրտացցգ , գիշերապահներն վարի սենեալ կին պատուհաններուն առջին եկան , եւ մէկը փնտուելու կամ բան մը դիտելու ձեւեր և շարժմունքներ ընելն վերջը փողոցին մէջ աներեցիթ եղան :

— Դուք ի՞նչ կընեիք , հարցուց Գրիգոր սրտատանջութեամբ :

— Նստած էի , ըստու Արտեմ :

— Ժամը քանի՞ն կար :

— Չորս և կեսը անցեր էր :

— Անկից վերջը ո՞րչափ ատեն կեցար վարի սենեալը :

— Գրեթէ կէս ժամէն քիչ պակաս ատեն :

— Զայն մը ըլ լսեցիք :

— Ամենելին :

— Տէր Աստուած , ինչ բան է այս :

— Բայց վերջապէս , ըստու անհամբերութեամբ Արտեմ Գարեգինը տեսա՞ր :

Ս.յո խօսքը երկար ժամանակէ ՚ի վեր է որ պահեր էր և իր կուրծքը կարծես թէ

կացրէր եւ արտասանելէն վերջը երկայն շրջնէ մը առաւ :

— Ես ալ քեզի այդ պիտի հարցնէի , օրի որդ , ըստու Գրիգոր , ես զինքը ամենելին չի տեսայ այս դիշեր , մինչև հիմայ դինքը կը մնառէի յաճախ դայցած տեղերը , բայց չի կըցի գտնել :

Արտեմ ու շադրութեամբ չորս կողմը դեմերէն վերջը , դէպ ՚ի Գրիգորին ծռեցաւ եցած ձայնիւ ըստու :

— Կէս ժամ առաջ ստորնայարկի սենեալ կին պատուհանին առջին էր և հօրեղբօրս բարկութեամբ վար իջած ատենը քովինեղ փաղոցը մտաւ աներեցիթ եղաւ :

— Բայց ինչպէս . տէր Աստուած , ուր եղած պիտի ըլլայ , ըստու Գրիգոր շուարած և շրթունքները խածնելով :

— Գրտեմ ըստու Արտեմ , ասիկայ հօրեղբօրս նենդաւոր մէկ խորհուրդն է որպէս զի Գարեգինը վուանդի մէջ ձգէ . անդութմարդը դեռ չի հշտանար ինձի չարիք ընելի :

Գրիգոր և Սաթինիկ իրարու երես նայեցան . Գրիգոր գլխով թեթև նշան մը ըրաւ , զոր Արտեմ չի նշմարեց իր տաքութեամբ խօսած ատենը . կարծես թէ սկ քոյլ մը իջաւ Սաթինիկի աչաց վրայ , բայց լուռ կեցած չէր խօսէր , վասն զի արդէն սիրտը ելած ըլլալով սրտին բուռն յուզմունքը , զոր հազիւ կրնար զսպել ,

պիտի յայտնուեր :

— Այս, յարեց Սրբեմ ճիշդ այն զինուռ  
րական պաշտօնեան ալ անոք համար եկաւ  
հոս :

— Ասուուած իմ, մքմնջեց Սաթինիկ այ-  
լացրութեամբ մը :

Գրիգոր թէ և տխուր էր, բայց ինքովին-  
քը բոնելով խօսքը Սրբեմի ուղղեց, մինչ  
դեռ անիկայ գլուխը մէկ կողմծուած և թէ-  
ւերը շնորհալի կերպով խաչածե կուրծքին  
վրաց դրած համբերատար կերպարանք մը  
առած էր :

— Ազնիւ օրիսրդ, ըսաւ, դուն արդէն ի-  
մացեր ես բնազդմամբ քու անդութ հօր-  
եղորդ ընթացքը քեզի և . բուկիններուդ  
դէմ, ես ալ թէպէտե չէի ու զերքու սիր-  
որդ վիրաւորել, բայց գրեթէ պարաք մը-  
նէ այս բանը ինձի. Ճիշդ գիտցածիդ պէո-  
է, ես քիչ մը առաջ Ահմէտ տասնապետին  
հետ տեսահեցելով որ իմ բարեկամն է, ա-  
մեն բան իմացայ. Հօրեղբօրդ կողմանէ  
պատօւէր եղած է Գարեգինը ձերբակալել  
մանտանդ այս տան մօտերը պարտած ժա-  
մանակ, ուստի պէտք է որ զգուշութիւն  
ընէք : Սակայն վախնալու բան չիկայ, հօ,  
Գարեգինը առեւծի պէս ուժովէ և եղջեր-  
ուի պէս ալ թէթեամբն. ամենեւին վախ մի  
ունենար, ես հիմայ կերթամ ինքը կը փըն-  
արաւեմ, ամեն բան ապահով է :

Արտեմ բոլորովին դեզնած էր . Գրիգոր  
ալ չի գիմանալով և բարի գիշեր մաղթելով  
դուրս ելաւ . Արտեմին սիրաց լեցուն ը-  
լալով չի կրցաւ խօսիլ և գլխովը բարի գի-  
շեր մաղթեց Գրիգորի, անկեց վերջը գնաց  
Սաթինիկին գիրկը ինկու և զայն գրկեց,  
ան ալ իր կողմանէ զինքը սրախն վրայ սեղ-  
մեց և անոր բարձր ու ձերմակ ձակտին վը-  
րայ համբոյր մը գրոշմեց : Այս երկու սի-  
րելի բարեկամուհիները այսպէս իրարու-  
գրիի մէջ անխօս, խորին մտածման մէջ ըն-  
կըզմած էին և իրենց ցաւերը մուցնող թրմ  
րութիւն մը քիչքիչ զիրենք կը պատէր :


Միւս կողմանէ Գրիգոր ալ վար իջնալով  
դրան բանալին ուզեց Գարեգինը որ իրեն  
յուղեալ գէմը նշամբելով,

— Դուն ալ արտում ես, սիրելի Պ. Գրիգոր  
ըսաւ, կարծես թէ գե կայ այս գիշեր տան  
մէջ . չեմ հասկնար թէ ինչպէս բան է, ես  
ալ միաք ունեի պատուական բարեկենդան  
մը ընելու, բայց ինչ ընեմ, իմ ալ սիրոս  
կոսրեցաւ, օրիորդը իիստ տրտում է,  
Սաթինիկ տկարութիւն ունի, դուն ար-  
խուր . Ասուած բարի ընէ . խելքս չի  
հասնիր . ի՞նչ կըսես :

— Հոգ չէ սիրելի, աւելցուց Գրիգոր ան-  
մուգրութեամբ և կարծես թէ ծանր մը-  
տածութիւն մը բոլոր միտքը գրաւած էր,  
հոգ չէ, ասանկ բաներ կըսան երբեմն, բայց

Հուտ կանցնին ինչ ընենք :

Այս խօսքերը լսելէն վերջը, բանալին և իր լապտերը առնելով դռնէն դուրս ելաւ և գէպ ՚ի փար երթալով նեղ փողոց մը մը մը տաւ և անտես եզաւ . այս միջոցին ուրիշ տեղ մ’ալ հետաքրքրական անցք մը կանց ներ, ուստի ընթերցողը հսն խրիենք :



### Գլուխ Դ.

Միջին Փողոցի ԿՍՊԵԼԱՆ

Եռայրի տունէն մշտի մը չեռու, այն տեղուանիքը ուր որ հրդեհի աւերակ ները տիսուր և ամսյի տեսարան մը կը ներ կայացնէին, աւերտի մը կիսատիրծան պատին տակ մէկը կեցած էր. ձեռքերը տափատին գրպանները խօթած և երիտասարդ դի կերպարանքը ունէր. այս երիտասարդը երբեմն կը ծուեր և զգուշութեամբ բոլոր տիքը կը զննէր, վերջը դարձեալ իր նախ կին դեռքը կառնուր. անոր շարժումներէն կը կարծուէր թէ ինքը այն աւերտաններուն մէջ տեղ բնակող խեղձներէն չէր, բայց չէր գիտցուէր թէ ասանկ ատեն մը ասիկայ ինչ գործ կրնար ունենալ այս վլատակներուն մէջ տեղը, այս անձը Գարեգինն էր : Գարեգին, ինչպէս որ գիտենք, Արտե-

մէն զատուելով տունէնքից մը հեռու գլուխ նուած նեղ փողոց մը մտեր էր և այն տեղեւը քիչ մը սպասելով երբոր գիշերապահնեւը վրայ եկեր և այն նեղ փողոցը մտեր էր ին, Գարեգին Արտեմին համանման բնադրմամբ կասկածելով՝ թեթե քայլերով, առանց ձայն հանելու, հեռացաւ անկէց և գէպ ՚ի իր ճամբուն վրայ գտնուած հրդեհի աւերածները յառաջացաւ . բաւական ժամանակ զգուշութեամբ և ամենափոքր ձայներու ականջ գնելով քայլելին վերջը, աղօտ լցոնի պէս բան մը տեսաւ գեանի եւրեօր և քաջալերուելով գէպ ՚ի հսն յառաջացաւ . առանց շշուկ մը հանելու մօտեցաւ լցոնը եղած տեղին և մտիկ ընելով մարդու ձայն լսեց, ասոնք տառապեալ հրկիվեալներ էին որ հսն կը բնակէին, դեռ կանգուն կեցած ծխանքի մը տակ ապատաներ էին, Երկու կողմը գտնուած կիսափուլ սրմերուն վրայ հին տախտակներ երկնցնելով առաստաղ և միանգամայն քիւմը յարմարցուցեր էին . այս հիւղին դուռըն ալ քանի մը հատ ծուխէն սեցած տախտակներ էին միայն : Գարեգին այս գրան մօտենալով ձեռքով քանի մը հարուած տուաւ ըսելով :

Ներեցէք, այս ժամանակ ձեղ անհան դիստ ընելուս, և դուռը բանալու շնորհը ըրէք :

— Ո՞վ կրնաք ըլլար պարոն, ըստ ներսէն էնոջ ձայն մը :

— Թերեւս բարեկամ մը, աւելցուց Գառնիքին, ապահով եղիք սիրելի մայրիկ, ձեր դուռը զարնողը գէշ մարդ մը չի կրնար ըլլալ. Աստուծոյ ձեռքը ձեզ նմաններու վրայ է միշտ :

Ներսը եղող կինը Գարեգինի այս անյշ և կարեկից խօսքերուն վրայ վատահանալով եկաւ դուռը բացաւ և ձեռքերը կը դողար:

— Ի՞նչ կը խնդրէք, սիրելի պարոն, ըստ խեղճ կինը :

— Կաղաչեմ գլանիկս վառեմքիչ մը, վրայ բերաւ Գարեգին շնորհալի քաղաքավայրութեամբ մը :

— Հրամեցէք, կրնաք ներս մտնել, ըստ կինը ևս քան զւս վատահ ըլլալով անոր անկեղծ գէմքը տեսած ատեն, ուր ողջամցատութիւնն ու վեհանձնութիւնը նկարուած էին :

Գարեգին ներս մտաւ և իրեն տրուած խարիսուլ աթոռակի մը վրայ նստեցաւ. այս հիւղին ներսի կողմը դրսի կողմէն քիչ տխուր կերպարանք չունէր, տախտակամածը քանի մը փոտած տախտակներէ կը բաղկանար, գտնուած մէկ քանի անկողիններու մէջ գրեթէ բուրդ չիկար. Հին խորդ մը գորդի տեղ գետինը փուռած էր, անկողինները սաւան չունէին և երեսի բարձե-

ըլլարի պէս կարծր էին. Ճաթած և մէկ կողմը կոտրած հողէ վառարանի մը մէջ քանի մը հատ փայտի ածուխի կայծեր կային որոնք ինչ կրնային ընել այն աստիճան խռաւութեան և ցրտութեան դէմ, պատերը հրդեհի ծուխին սեցեր էին եւ սաստիկ խոնաւութենէն կը քրանէին, այս հիւղին մէկ անկիւնը քանի մը հողէ ամաններ կային հողէ ազօտ կանթեղ մը կը լուսաւուրէր զիրենք, երկու հատ ալ փայտէ հին ու խարիսուլ աթոռակներ կային, սակայն ամեն կարասիք ալ խիստ մաքուր էին, այս թշուառ ընտանիքը չորս անձերէ կը բաղկանար, մայրէ մը, քայրէ մը և երկու փոքրիկ մանչ տղաքներէ. այս տղաքը մէկ անկողնի մէջ պառկեր էին իրարու պլուած, դէմքերնին նիհար էր և տժգոյն, երեսնուն վրայ մանկական անմեղութիւնը և պարզութիւնը նկարուած էր, բարակ վերմակով մը պատած այս երկու անմեղ հրեշտակներու ընծայած տեսարանը այնչափ սըրտաճմիկ էր որ մարդուս աղիքները փորին մէջ կտոր կտոր կը նէր և մարդ փայրկեան մը նախախնամութեան վրայ կը կասկածէր. երկու արտասուաց կաթիներ Գարեգինի պայծառ աչքերուն մէջ մեռան և սիրտը վեր եւաւ : Վառարանին քոլցած աթոռաւ կի մը վրայ օրիորդ մը նստած էր, որ ման կանց քոյրն էր, կերեար թէ տասն և եօթը

տարեկան կար, պարզ շրջադգեստ մը հաւ-  
գած որուն գցնին աստիճանը այնչափ եղ-  
ծուած էր որ ինչ գոյն ըլլալը չէր որոշուէր,  
նոյնապէս վրայէն պարզ հին և բարակ հա-  
գուստ մը հագած էր և խեղճը ցուրտէն  
կը դողար : Երբ Գարեգին ներս մտաւ ու  
բարեեց զինքը, ոտքի վրայ եղելով քաղա-  
քավարութեամբ անոր բարեն առաւ և իր  
նիհար և տժգոյն դէմքը թեթե կարմրու-  
թեամբ մը ներկուեցաւ ու աչքերը վար  
առաւ . մայրն ալ եկաւ վառարանին քով  
նստեցաւ . այս կինը քառասուն տարեկան  
կերեար բայց խեղճութիւնը և տառապանք-  
ները կարծես թէ զինքը մաշեցուցած էին,  
գլուխը սև գլխանոց մը կապած էր և հին  
պարզ բայց մաքուր հագուստ մը կը կրէր :

— Բարի եկար, ըստ կինը զու արթու-  
թեամբ, բարի եկար, աղնիւ պարոն :

— Շնորհակալ եմ, մայրիկս, աւելցուց  
Գարեգին :

Օրիարդն ալ իր կողմանէ գլուխը շարժե-  
լով բարեեց զինքը գին և նորէն կարմրելով  
աչքերը վար առաւ . Գարեգին ալ անոր  
տուած բարեին պատասխանեց այնչափ աղ-  
նուութեամբ և քաղաքավարութեամբ որ  
կարծես թէ կոմսուհի մը կը բարեէր, վեր-  
ջը աչքերը ասդին դարձուց որպէս զի այս  
պարկեշտ աղջիկը աւելի չի շփոթի և տղոց  
դառնալով :

— Ա՛հ, ինչ սիրուն զաւակներ, յարեց  
ճշմարիտ սրտայուղութիւնմբ մը, կստուած  
պահէ զիրենք :

— Այս, ըստ թշուառ կինը, երկուոր-  
եակ են, խեղճ զաւակներս, ամեն օր ի-  
րենց համար կ'ալօթեմ . հայրերնին կոր-  
սրնցնելու գժբաղդութիւնը ունեցան, ինչ  
ուրիշ ապաւէն մը չունին այս աշխարհիս  
մէջ . կը յուսամ որ օր մը մէյմէկ բարի մար-  
դիկ կըլլան և իմ թշուառութիւնս կը մոռ-  
ցընեն ինձի :

Այս աղնիւ մօրը սիրութ յուգուեցաւ և  
խոնարհելով անոնց անմեղ ճականին վրայ  
մէյմէկ համբօյր գրոշմեց . խեղճ կնոջ աշ-  
քերը լեցուած էին . զանոնք ինչպէս մեծ-  
ցընելը համաւօտ կերպով մը նկարագրեց  
և թէ ինչպէս թշուառութիւնը զիրենք այս  
մասաղ հասակին մէջ խելացի ըրած էր .  
պատմած ժամանակը աղքատութեան, ը-  
քաւորութեան բոլոր սոսկումները Գարե-  
գինի ներկայացան և իրեն աղնիւ սիրութ  
ճպմուեցաւ : Այս, ցրտէն, խոնաւութենէն  
չքաւորութենէն պաշարուած չորս փա-  
փուկ արարածներ, աւելրածներու մէջ տե-  
ղը, և ինչ սսկալի բան, և սակայն անոնք  
ալ մեզի նման մարդ են . այսպիսի տեսա-  
րաններ միթէ անպակաս չե՞ն մեր օրերն  
ալ եթէ քայլերնիս ուղղենք այնպիսի խոր-  
շեր ուր հաղիւ կենսատու օդը և լցուը կը

թժափանցեն, որչափ անօդուտ ծախքեր կը-նեն մարդիկ որոնցմով ասանկ հազարաւոր թշուառներ կրնան լու կերպով մնանիլ. աղքատութենէն վերջը կուգայ ամենէն սոսկալի թշուառութիւնը, այն է հիւան-դութիւնը և շատ անդամ յուսահասութիւն, ուսկից անմիտ ոճքագործութիւնը կը հետևին և արդարե եղեռնագործութեանց մեծ մասը աղքատութեան և յուսահասութեան հետևանքն են:

Ժամանակը ուշ էր և Գարեգին ալ չու-զելով այս թշուառ կնկան կոկիծները նո-րագել և օրիսրդը վիրաւորել որ շատ փափ-կասիրտ կերեար և յաճախ կը շառագու-նէր, կը պատրաստուեր ելլերու: Գրապանը խառնելով երկու ոսկի հանեց և զանոնք այս կնկան երկնցնելով քաղաքավարութեամբ մը ըսաւ:

Ազնիւ մայրիկ, ներեցէք յանդդնութեանս, ասոնք կրնան թերեւս այս սիրուն մանկիներուն օգտագար ըլլալ:

Այս խեղձ կինը վիրաւորուելով Գարե-գինի ըրածէն, ամբագէմ ետ եա գնաց և այնպիսի ակնարկ մը ձգեց անոր վրայ որ Գարեգին ձեռքը քաշեց, զզալով ըրածին վրայ որով այս տառապեալ կինը վշտացուցեր էր և ներում խնդրեց անկից. խի օ-րիսրդը՝ որ մինչեւ այն ատեն լուռ կեցած էր, աչքերը գետինը սեեռած և լոկ եր-

բեմն գազու հայեցուածներ ձգելով Գարե-գինի վրայ, երբ նա իր մօրը հետ կը խօ-սակցէր, կըզմայլէր անոր աղնուախոչութեանը վրայ. չի կրնալով դիմանալ, որով իրեն վերջի աստիճանի փափկասրատութիւ-նը կը ցուցնէր. խօսքը Գարեգինի ուղղե-ցով ըսաւ աչքերը վար առնելով և շակուե-լով:

— Մի ընէք, աղնիւ պարսն, ձեր մեր խեղձ անսակին պատիւ ընելիու և մեզի ՚ի ըոլոր սրաէ կարեկից ըլլալնիոր միայն մեծ հորատութիւն եւ երջանկութիւն է մեզ համար:

Այս խօսքը ըսելով, օրիսրդը առջնէն աւելի կարմեցաւ և թերեւս կեանքին մէջ այս տռաջին անդամն էր որ իր դեղնած դէմքը կենդանի կարմիր գոյն մը առաւ. Գարեգին ալ գլխովը յարդութիւն մը ը-րաւ անոր: Սակայն սիրու կեռար և կուզէր այս գժբազդ ընտանիքին օգնութիւն մը ընել. ուստի քիչ մ'ալ նստելով եւ խօսք մէջ քերելով առանց նշմարելու իր ժամա-ցոցին ոսկի բանալին շղթայէն հանեց, նցնալէս ձեռքը գրապանը խօթելով վարպե-տութեամբ մը ոսկի մատանին ալ մատէն հանեց և այն երկու ոսկին հետ մեղմիկ նստած աթուակին ետերի կոզմը ձգեց: Առ կից վերջը ոտքի վրայ ենելով և գարձեալ ներում ինդրելով բարի գիշեր մազմեց և

դուրս ելաւ այն խեղճ հիւղէն՝ որուն մէջ  
ագամանդի նման պատուական սիրտ կրող  
նէր կը բնակէին :

Երբոր Գարեգին գուրս ելաւ անակէն,  
ոկառ խորտնկ մոտածել տեսած իրերուն  
և քիչ մը յառաջ իր գլխէն անցածներուն  
վրայ . բայց և այնպէս գիշերապահները  
մոտածելով խոհեմութիւն սեպեց հեռանար  
այն աղետալի տեղերէն եւ տան ձամբան  
բռնել : Աւստի զբուշութեամբ աւերնե  
րուն մէջ տեղէն ձամբայ կը բանար և թե  
թեռութեամբ կը քաղէր , ժամանակ ժամա  
նակ մտադիր ըլլալով և ականջ դնելով հո  
վին ձայնէն որ բաւական ցուրտ կը փչէր  
և ուժգին էր . ակամայ սոսկում մը կզար  
աեսնելալ հրկիզեալ տանց երկայն ծխանք  
ները որը գիշեր ատեն ուրուտականներու  
կը նմանէին և այս հրայրեացներուն ահան  
իր երեսյթ մը կուտային :

Յանկարծ ահաւոր թնդիւն մը իւր բար  
դաւած անդամները գողացուց և զինքը ըս  
տիսկեց ետին դառնալու . Գարեգին թե  
պէտ և տոջի բերան սոսկաց այս ձայնէն  
որ գիշերուան լուռութեան մէջ թնդանօթի  
մը ձայնին չափ աշեղ էր , բայց վերջին ինք  
զինքին գալով որոշ խմացաւ որ կիսակործան  
պատի մը փչէրու ձայնն էր , բայց երբոր  
գաւանալով իր ձամբան պիտի շարունակէր  
յանկարծ իր աջ կոզմը լցու մը փայլեցաւ .

Գարեգին այս լցոնին մօտենուլով մարգու  
դէմք մ'ալ նշմարեց , այս գէմքը իրեն ան  
ծանօթ չէր , ճանչցաւ զայն , Խոչչէր եղ  
բայցն էր որ հետաքրրութեամբ այս ձայ  
նին ինչ ըլլալը իմանալու համար եկեր իր  
պառկելու խուցին պատուհանէն կը գի  
տէր . Գարեգին առաջ անցնելով պատու  
հանին մօտեցաւ և չալեց . Խոչչէր եղբայ  
րն ալ շուարած ետ քաշուեցաւ աչքերը  
բանալով . նորէն կրկնեց հարուածը Գարե  
գին և ննքդինքը սեղմելով տասակի կը խրն  
գար , Խաչէր ու չագրութեամբ զննելով ա  
նոր գէմքը ձանչցաւ զինքը թշուառ սա  
տանց և մրմար և պատուհանը բանալով ,

— Է՞ն , սիրելի , կատակ չեմ ուզեր ըստ  
իր կոշա ձայնալը ձեռքը Գարեգինի կար  
կտուելով :

Գարեգին իր խնդալը շարունակեց և ը  
ստ որ շուտավ գուռը բանայ , վայրկեան  
մը անգամ կորսունցնելու չէ , ան ալ մե  
կէն պատուհանին առջևէն աներեկոյթ և  
դաւ : Քիչ մը վերջը կողմանի դրան մը  
բացուելուն ձռինչը լուռեցաւ , Խոչչէր  
գլուխը գուրս հանեց , թեթեւ կերպով հա  
զալ ձեւ ացուց . Գարեգին արդէն գրանն  
առջևն էր , երկաւքն ալ ներս մօննելով գու  
սը գոցուեցաւ , երկայն ու նեղ ձամբէ մը  
երթալով վերջապէս լցու տեսան . այս չեն  
քը միջին փաղցին կապելան էր :

Միջն փողոցի կապելան հին և ցած շէնք  
մըն էր և հին ժամանակի շէնքերսւն ձեր  
ունէր, տառն և հինդ կանգուն լայնութիւն  
և երեսուն կանգուն ալ երկայնութիւն  
ունեցող գետնի մը վրայ կառուցուած,  
պատերը աղիւսով շինուած և դուրսի կող-  
մէն եզենի բարակ տախտակներով պատ-  
ուած էին. ճակատի կողմէն միայն դուռ մը  
ունէր և երկու գունաւոր ապակիներով  
ժորը պատուհաններ ձեղնայարկին իրեւ  
լուսացոյց կը ծառայէին. կոմինտրներն ալ  
միցած և լուով պատած էին: Ճակատի մեծ  
գունէն ներս մոտած ատենդ առջիդ ընդար-  
ձակ բակ մը կելլէր որ շէնքին ցածութեա-  
նը համար բաւական մութ էր. մէկմէկէ  
բաւական հեռաւորութեամբ տախտակէ  
սեղաններ գրուած էին ասոնց բոլորտիքն  
ալ փայտէ աթոռներ, պատերուն գեղին  
դցնը մուխէն գրեթէ սեցեր էր: Այս  
մութ տեղը կը լուսաւորէին իրարու դի-  
մաց գրուած երկու կանթեղներ. ձախ կող-  
մի մէկ սիւնի մը քալին, որուն վրայ կան-  
թեղը դրուած էր, նեղ ու մութ նրբու-  
զի մը կար որ գէպ ՚ի այն կողմանակի դու-  
ռը կը հանէր՝ ուսկից որ Գարեգին և Խա-  
չեր մոտած էին. աջ կողմէն մեծ փողոցը կը  
հանէր այս կապելան և ձախ կողմէն ալ նեղ  
փողոց մը ուր որ Գարեգին պահութած  
էր, անկից ալ աւերակները. ետեւ կողմէն

աւելի ցած կերեար շէնքը, այն տեղին աշ-  
եղի բարձր ըլլալուն համար, ձեղնայարկը  
մէկ պատուհան մը ունէր՝ ուսկից Գարեգին  
Խաչերը տեսաւ, և բաւական հեռուն ու-  
րիշ պատուհան մը կար մեծ փողոցին մօ-  
տիկ՝ որուն առջին կը կենար կապելային  
ներսի կողմը Խաչեր եղբայր իր տախտակէ  
բարձր սեղանին վրայ և խմողներուն գինի  
կուտար:

Այս կապելային տէրը Խաչեր եղբայրն  
էր, գլուխը հին ֆէս մը դրած էր. գլու-  
խը ճաղատ, յօնքերը թաւ, աչքերը խո-  
շոր, քիթը ձեւառ, երեսին վրայ շատ մը  
բարակ և կարմիր երակներ կային, պեխէ-  
րը աւելի պէս էին, հասակը միջակ, յի-  
սուն տարեկանը անցած էր, ու և հին  
բաճկոն մը հագած էր, վրայէն թիկնոց  
չունէր և թեւերը սոթաեր էր, մէջքը գօտի  
կապած էր հաստ չուխայէ տախտախին վրա-  
յէն և երեսները բաց կոչիկ հագած էր:

Երբոր կապելային բակը հասան, խաչեր  
եղբայր Գարեգինի «քուկիններդ նայէ» ը-  
սաւ և երկու անձ ցուցուց, որք կապելա-  
յին ճակատի կողմը նստած կը խօսակցէին  
իրարու հետ:

— Բայց ձայն մի՛ հանէր որդեակ, վասն  
զի գիտե՞ս . . . գաղտնի խօսակցութիւն մը  
ունին, ըստ Գարեգինի ականջն ՚ի վար:

— Հոգ չէ, Խաչեր եղբայր, ինձ համար

Հ ատիկաց :

— Բայց չեմ գիտեր, վերջը ևս պատասխանատու պիտի ըլլամբ :

— Բնաւ այդպիսի բան մը մոքէդ անդամ մի անցըներ, ես հիմայ անոնց քովի կերթամ՝ Այս ըսելով, վաղեց անոնց քովի գնաց մէկ ձեռքով մէկուն, միւս ձեռքովն ալ միւս ընկերին ձեռքք բռնելով :

— Բարի իրիկուն, սիրելի բարեկամներս, բաւ թեմն զուարթու թեամբ մը . Հոռ էր, շատ լաւ :

— Բարի իրիկուն, սիրելի եղբայր, կրկնեցին երկու քը մէկէն քունէ արթնալու պէս թօթվու ելով :

— Ուշացայ, այնպէս չէ . բայց բազգը զիս դարձեալ հոսքերան որ ամեննեին մըտքէն չէր անցնէր, և մէկզմէկ դտանք :

— Բայց նատէ ըսաւ, երկու անձանց մէկը գարեգինի ձեռքը սեղմելով :

— Այն, նատէ կրկնեց միւսը աթոս մը ցուցնելով իրէն :

Ասոնց մէկը խաչեր եղբայրը կանչելով, պատուիրեց որ իրենց գաւաթները լեցնէ և դարեցինի ալ գինի բերէ, այն աղ վոզ զեց սեղանին քով և գաւաթները կը իւցաւնէր, զմայլելով միանդաման իր գինւոյն գեղեցիկ գցնին վայ . վերջը բերաւ գիւնիները և անոնց տալազ ինք հեռացաւ իր առաջաւ ալ իր կողմանէ խմել .

այս երեք անձինքն ալ առանձին մնացին :

Երկու անձանց մէկը բարձրահասակ երիտասարդ մ'էր, երեսուն տարեկանի մօտիկ գեղագանդուր մաղեր ունէր, բարձրաճակատ էր, յօնքերը կարճ, աչքերը շագանակագոյն, արծուունգն, մորթը ձերմակ և փոյլուն, այտերը բաւական գէր, բերանը ձեւասր և շրժունքները կարմիր, ձեռքերը մեծ տիկնոջ մը նախանձը գրդուելու չափ ձերմակ, փափուկ և խիստ վացելչաձեւ : Իր կապտագոյն փէոր մինչև յօնքերուն վայ բերած ըլլալով գլխուն ետևեի կողմը վայելչաձեւութիւն մը կառնուուր և գուուղու փայլուն մաղերը կերենային . ծայրը ծովերով կապոյտ մնդուսէ փալպատ մը կապած էր և շատ անդամ ամփուաթիւն ըրած ըլլալով, անոնց հետ կը խաղար, սև գաղմիրի վրաց խիստ մանր և ձերմկեկ բիծերով կուրծքը բաց բածկնի մը հագած էր և օպացած ձերմակ շապիկը կերենար . ոսկիէ ժամացաց մը կը կրէր, ոսկի շղթան ակիշով մը բաշեց կանին կոծակի ծակին անցուցած և վայելուչ կախած, տափատը լաղուարթի գցն ուներ և աղնիւ սեկէ շինուած ձեւաւ ար կոչիներ կը կրէր . անցյ կարպյտ գյուղով և անդպիտիկան ձեռով կարծ թիվհայն ալ իր հագուստին վայլիւսութիւնը կամբոջացնէր և մորթին ձերմակութիւնը ակաց իր կերեցնէր, ձերմակութիւնը ակաց իր պայծառ կերեցնէր, ընչացքը խարտեալ և գեղեցիկ ոլորտ ած

էր : Այս երիտասարդին գէմքին վրայ առաջ պետական անկեղծամութիւն և խրսխտութիւն նկարուած էր , շրթունքներուն վրայ ժաման անսպակաս էր . բայց չի գիտցուիր թէ ինչու համար այս բաւն խակ այրական և սէգ գէմքին վրայ իր երկու աչքերը ձիշտ կանացի փափկութեամբ ու անուշութեամբ կը փայլէին և այնպիսի աննկարա գրելի մելամաղձոտութեամբ լեցուած էին որ մարդուս որսին խարշերուն մէջ կը թափանցէր :

Այս երիտասարդը տախտակէ սէղանին գլուխը նստած էր , կռնակը պատին կողմը գարձուցած և իր գիմացը նստող ընկերին հետ կը խօսէր . իր ընկերը նկնահասակ մէկն էր , սև մազերով , բարձր ճակատով , թաւ և կցուած յօնքերով . աչքերը կը բակի պէս և ծակիչ նայուածք մը ունէին , գէմքն ալ բաւական կանոնաւոր և սիրուն էր : Թիսրակ ֆէս մը գրած էր գլուխը , ու փողպատը անյարդար կապած , գանգը բամազ գազմիրէ բաճկոն մը հագած էր ոսկեդաշն կոճակիներով , տափատը մոխրացայն և վրան մանր սև կետերով , բարձր կոշիկներ հագած էր և շաքարագայն թիկնոց մը կը կրէր . այս անձը խիստնըրամիտ և խորամաննէ կերեար և կարծես թէ իր գիւթիչ նայուածքովը կախարդական զօրութիւն մը կը բանեցնէր խօսակցին վրայ

և դինքը կըսափակէր իր ազդեցութեանն հընազանգելու :

Երբոր Գարեգին եկաւ , ասոնք վայրկեան մը գագուցուցին իրենց խօսակցութիւնը , գինիներնին խմեցին և գէմքերնին քիչ մը զուարթացաւ . Գարեգին պատմեց հակիրք կերպով այս գիշերուան իր գլխին անցածները , գանգբագեզ մազերով երիտասարդին տիրութիւնը երթարով կաւելնար , իր պայծառ գէմքը միժագնիլ սկսաւ :

— Ա՛հ , Գարեգին գոչեց խոռովեալ ձայնով մը , Գարեգին գու բարեբաստիկ ես . խոկ ես , ես այս միայն ունիմ և գրապանէն թուղթ մը հանելով անոր երկնցուց :

Գարեգին առաւ այս թուղթը որ բոլորովին թրջած էր . Կարգաց զայն , խմոցաւինչ և որուն ըլլալը . Ժամ մը առաջ իր գըլի խուն եկածները նորէն իրեն ներկացացան աւելի սոսկաի կերպով և թուղթը նորէն երիտասարդին գարձնելով ,

— Սիրելի Արամայիսս , յարեց յուսահատ չեշտով մը , գիտեմ քու դժբաղդութիւնդ անօրինակ է . թշնամիներդ կաշխատին վերցնելու քեզմէ այն կեանքը՝ զոր գու իրենց համար ՚ի գրաւ գրիր և հիմայ ասանկ չուառացար . գիտեմ դու անկեղծ ես և քեզի գէմնենդութիւն ՚ի գործ ածելլքեղ գաշոյնով ծակելէ աւելի սոսկաի է , ահ , ի՞նչ ընենք .

— ի՞նչ ընենք , չեշտոց Արամայիս մզեգին

ինդութեամբ մը և այնպէս ուժգին արտաս  
առնելով այս խօսքերը որ նկնածե անձը իր  
ընկերը՝ սօսկաց :

— Բայց մենք ալ, վրայ բերաւ Գարեգին  
կարեկցաբար և Արամացիսի ձեռքը սեղմե-  
լով յուստհատութենէ աւելի զօրաւոր ը-  
լանք :

— Ալ ժամանակը չէ . աւելցուց Արամացիս  
գլուխը շարժելով :

— Ի՞նչպէս ըստ Գարեգին ժպիտ մը ը-  
նելով :

— Այս պատուխանեց Արամացիս սրասցու-  
զութեամբ . պատիւս անտրատ պահեցի  
մինչև Հիմայ , բարեկամութեան հաւատա-  
րիմեցաց , բրած ուխտիս չի դրժելու Հա-  
մար չոր տախտակները անկողին և թես ալ  
գլխուս բարձ ըրի . բայց պաշափ անձնուի-  
րութենէ վերջը սրտիս այնախիս ոլոր մը  
միմել զոր հետո գերեզման պիտի տանիմ .  
ահ , անտանելի բան է , աշխարհ աչքիս  
մութ կերեաց . ինձի անանիկ կերեաց որ  
բոլոր մարդիկ ալ չարասիրա են և զիս Հա-  
լածել կուզեն . եթէ այս այսպէս է , ես ...  
գիտեմ . . . :

Կարծես թէ ամեն մէկ բառ արտասանե-  
լուն փուշ մը կը խօժեն նկնահատակ ան-  
ձին մարմինին մէջ որն որ ուշադրութեամբ  
Արամացիսի գէմքը կը դիտէր և անոր մէկ  
խօսքն անդամ չէր կորսնցաներ : Այս մար-

ուր երբոր սուլեց , Խաչեր եղբայրը կայծաւ-  
կի պէս վագեց և դիմւոյ դաւաթթները ից-  
ուեցան և նկնածե անձը հրամցուց . Գա-  
րեգին դիմւոյ դաւաթթը այս մարդուն ձեռ-  
քին առնելով և ցրթունքներուն տանելով  
բառ :

— Սիրելի Պ . Սերովէ , կը զտրմանամ  
անդրդուելի հաստատութեանդ և հեարի-  
մացութեանդ վրայ , և մայրու մը ըրաւ :

— Այս , այն , ըստ Պ . Սերովէ զլուխր  
շարժելով և անոր միարը հասկնալու ողես  
թեթև ժպտելով :

— Աւելի իր բարեկամութեան համար  
ունեցած անձնուիրութեանը վրայ կը վար-  
մանամ ըսէ , աւ ելցուց Արամացիս խօսքը  
Գարեգինի ուղելով և խանդադատանոք  
Պ . Սերովէի երեսները համբուրելով :

— Իրաւ իրաւ . յարեց Գարեգին գորավա-  
նոք անոր ձեռքը սեղմելով :

— Եթէ ինքը ըսպար , վրայ բերաւ Արա-  
մացիս , ես հիմայ շատ անգամ մեռած էի :

— Ե՛հ , մէկ կողմ թող սա մեռնելու խօս-  
քը , ըստ Պ . Սերովէ զայրացման ձեռով .  
ամեն անդամ այդ խօսքը ըսելուդ , դիտեն ,  
ջիզերս դող կը հանես :

— Այս , անս , ըստ Արամացիս այնպիսի  
սոսկալի հասացանօք , որ կարծես թէ սիր-  
ար տեղին ելու :

Սրտին արիւնը դէպ ՚ի այտերը ելլելով

ձերմակ այտերուն վրայ վարդեր բուռան,  
կուրծքը կը բորբոքէր , և աննկարագրելի  
անձկութիւն մը տիրած էր վրան . անհամ-  
բերութենէն ձեռքերուն մատները կը կո-  
տրտէր . մէկէն ՚ի մէկ ցնցուեցաւ և Պ .  
Սերովէ որ անոր ամեն շարժմունքները  
ու շադրութեամբ կը դիտէր , անոր վերար-  
կուին բացուիլը և փայլուն իրի մը փայլիք  
տեսաւ : Եթէ կայծակ ինկած ըլլար իր քո-  
վը այնչափ չի պիտի սարսափէր . իր արդէն  
տժդունած գէմքը մեռելի մը գէղնութիւ-  
նը առաւ և ծունկերը սկսան դողլորդ ի-  
րարու զարնել . ձեռքը ճակտին գնելով կը  
ջանար իր գէմքը ծածկել որպէս զի իր ան-  
բացատրելի սրտայու գութիւնը որ գէմքին  
վրայ ճշգրիտ նկարուած էր , չի նշմարուի .  
կերևայ թէ այս մարդը առաջին անդամն էր  
որ մարդուս արիւնը իւր ամանէն գուրս  
ցայտեցնող այսպիսի գող մը կը եց . հազար  
անդամ անիծեց այն հրեշները՝ որ մարդուս  
որտէն յօյոը արմատաքի կը խլեն և մոլին  
մէջ սոսկալի խորհուրդներ յղանարու պատ-  
ճառ . կըլլան . իրենց նմանը եղող մարդը  
թշուառութեան և յուսահատութեան  
գահավիժմին եղեցքը գլտորելէն վերջն ալ  
առաջին անդամ անոր կից զարնող և գա-  
հավիժողը իրենք կըլլան և վոգրի մը կա-  
տաղութիւնը գերազանցող սխակալու-  
թեամբ մը կը պարարին :

Պ. Սերովիէ նրբամիտ և այնպիսի անձեւ-  
րէն մէկն էր որոնց համար հնաբը չի պակսիր  
և կրնան ու զածնին առաջ տանիլ , բաւա-  
կան է որ կամք ունենան . ուստի իր գինին  
պարպեց և գինի բերել հրամացեց : Կարե-  
լի եղածին չափ անտարերութիւն մը ա-  
ռաւ . և զուարթութիւն կեղծեց . հասկնա-  
լով որ ալ իր գործին ժամանակը հասած էր ,  
շտկուեցաւ և գէմքը սկսաւ տակաւ իր առ-  
ջին կերպարանքն առնուլ : Այս միջոցին  
յանկարծ միտքը բան մը գալով ուղղուե-  
ցաւ և ձեռքը երեսին դրաւ . մէկ երկու  
փայրկեանի չափ խորհելէն վերջը , ցատ-  
քեց ելաւ նստած տեղէն և երբ գէպ ՚ի  
խաչեր եղբօրը ուղղուելով , տեսաւ որ իր  
սեղանին ներսի կազմը նստած էր անիկայ  
և առջին քիչ մը կերպակուր , շիշ մը ու գա-  
ւաթ մը դրած իր սիրած մէկ գուեհիկ եր-  
գը կերգէր ըսելով “ ես քեզի ինչ ըրի նըւ-  
տեր ու կուլաս , և այլն ” , ինըն ալ աթոռ  
մը առնելով անոր դիմացը անցաւ , նստե-  
ցաւ այնպէս որ երկուքն ալ չէին տես-  
նուէր ոչ Գարեգինէն և ոչ Արամայիսէն : Պ.  
Սերովիէ գէպ ՚ի խաչեր եղբայրը ծռելով,  
ականջին մէկ երկու խօսք զուրցեց գլխովը  
զուրցածներուն պատասխանը խնդրելով և  
ցուցամատը շրթունքներուն դպցնելով  
մեղմօրէն խօսել կը պատուիրէր : Խաչեր  
ժամանակին ուշ ըլլալը պատճառ բերելով

քանի մը խօսք մրմռաց բերնին մէջ . յայտ նի է որ դժկամակսւթիւնը կը յայտնէր , բայց մի և նոյն ատեն Սերովեէի ձեռքին մէջ արծաթ մէջիւցէի մը փայլիլը տեսնելով , կէմքնի խոժուռ թիւնը անհետացաւ : Պ. Սերովեէ անոր հաճութ թիւնը նշմարելով , գարձեալ ականջին խօսք մը զուրցեց և բակաւ մտերմաբար անոր ու սին զարնել . Խաչեր ալ գլուխը շարժեց ՚ի նշան հաւանաթեան մէջիւցէն առնելով և գրապանը դնելով : Սերովեէ ոտքի ելաւ եւ դէպ ՚ի ընկերներուն կուզուէր . այս եղածները երկու հոգւոյ մէջ անցան , Գարեգին և Արամայիս բոլորովին անաեզեակ էին :

Պ. Սերովեէ երբ իր ընկերներուն քովկալով նորէն իր առջի տեղը նստեցաւ , ոկը սու սուաւ ելադ ոյն մոադրութեամբ Արամայիսի դէմքը նկատել . մերթ ընդ մերթ ալ դալունի և խոռովալից հայեցուածքներ ձգելով այն կողմը ուր որ փայլին մը աետած էր որ աջշաւչու վունդաւոր գէնքի մը փայլը եղած պիտի ըլլար : Երբ որ ինքը Արամայիսի երեսը կը նոցէր , այս վերջինը ժամացայցը բաճիսնին գրապանն հանելով ժամը նոցեցաւ և Սերովեէին ժողով մը ընելով գեղ կանուխ է , չորսն է ու ըստ : Սերովեէ լաւ գիտէր որ ժամանակը ուշ է , բայց ձայն չի հանեց , Գարեգինի ալ աչք բրաւ և այս բարեպատեհ սխալման դրաց

անպատմելի ցնծութիւն մը զգաց որով իր մաքին մէջ գծած յատակագիծը կը յաջողեւթշուառ Արամայիս . ինելքը ցնորածի պէս էր , ինչ ընկելը չը գիտէր . ժամացայցն ալ լորեւա մուցած ըլլալով կեցեր էր :

Յանկալծ քիչ մը առաջ ցուցրցած մոլեղին խնդութիւնը որ Պ. Սերովեէն արասփեցուցեր էր , գարձեալ երկցաւ անոր սիգապանծ գիմաց վրայ . այս այն խնդութիւնն էր՝ որուն ձիշտ քովի է գերեզմանը :

— ԱՇ , ահ , ատենը կրոգայ , գոչեց Արամայիս այնպիսի տխուր արտասնութեամբ մը որ անհնար է ըսել . ատենը եկաւ որ վեց ատրի անգթութեամբ ինչ պահուած այն հրեշտակի դէմքը մէյման տեսնեմ . երկու խօսք զուրցեմ և եթէ անկից վերջը մեռնելու ըլլամ , անոր առ իսկաւատարմութեան առ հաւատացեայն եւթշնամեացս անգթութիւնը մէկտեղ տանիմ : Եւ սակայն ի նէ ըրեբ էի ես . եթէ ամենափոքր յանցանը մը բրած եմ , թողրուեն . տասն անգամ առ եկի պատիմը կը բաշեմ . թողի իմ կեանըս ինծի շնորհեն : Ես զուարթ էի առաջ . գեղեցիկ ընտթիւնը ինծի համար սակագծուած կը կարծէի . սակայն հիմայ մարդիկ սատանաներու պէս կերեան ինձ , գիշերը հանգաբար քուն մը չունիմ , բոլոր մարմինս կայրի , քայլերս ուր տանելս չեմ գիտեր . ի՞նչ ըրեբ եմ , Աստ-

աւած իմ՝ լոկ բարեկամութիւնը պիս կը  
միմիթարէ, բայց այն ալ, աւած, այնպի-  
օի բաներ կան որոնց անձեւնահաս է:

Արամայիս այս խօսքերը ըսած ատեն՝ աչ-  
քերը կրակի պէս կը փայլէին եւ կոպերը  
կապցու շրջանակով մը պատած էին. Պ.  
Սերովէ իր ձեռաց մէջ կըզգար անոր ձեռ-  
քին տենդային տաքութիւնը. Հրտապ  
չերմ մը իր կոկորդը եւ բոսորագեղ շրջ-  
թունքները ցամաքեցուցեր էր, ճայնը կեր-  
կերեալ էր և կը խեզդուէր: Պ. Սերովէ  
Արամայիսի այս արդարացի գանդատներուն  
դէմքառ մը գտնել ձգնեցաւ իր բեղմնա-  
ւոր մաքին մէջ, բայց ՚ի զուր աշխատե-  
ցաւ եւ լոկ լուսութեամբ պատասխանեց  
անոր:

Ինքը երեսուն և հինգ տարեկան կար,  
բայց ութսուն տարեկան ծերունիէ մը ա-  
ւելի փորձառու էր. իր գլխէն շատ անց-  
քեր անցեր էին. քաջ գիտեր թէ յուսու-  
հատութիւնը ինչ սոսկալի ախտ էր և թէ  
ինչէր կընէր: Փամանակաւ ինք իր ձեռքո-  
վը պատած էր դժբաղդ մը ինքզինքը ծո-  
վը նետոծ ատեն և անոր պատմութիւնը  
լսերով ամբողջ ժամեր արցունք թա-  
փեր էր. ուստի խիստ սարսափեցաւ  
երբ տեսաւ Արամայիսի թիկնոցին տակ այն  
փայլիւնը: Կը խղճար այս ազնիւ երիտա-  
սարդին վրայ զոր անգութ ջատուկ կին մը,

որ իր սիրելոցն մօրաքցըն էր. ամենուն  
քով անուանարկ ընել կը ջանար, Արամա-  
յիս անոր համար անձնութիւն չէր  
խնայէր, իսկ այս կինը ոսկալի ապերախ-  
տութիւն և թշնամութիւն կը հասաւցա-  
նէր Արամայիսի, որ շահախնդրութեան ան-  
հաշտ թշնամի էր և լոկ ճշմարիտ բարեկա-  
մութիւն ու անկեղծ մէր կը մինտաէր: Յէ-  
րաւի չիկայ աշխարհին մէջ ազնուասիրու-  
կնոջ նման պատուական և անդին բան մը  
և չարասէր ու քինախնդիր կինջ նման աղ-  
սոսկալի հրէշ մը:

Պ. Սերովէ իր երկրորդ զէնքն եղաղ  
զուարձաբանութիւնը ձեռք առաւ և յա-  
ջողեցաւ Արամայիսը զուարձացնել. արդէն  
ինք անոր վրայ տեսակ մը պադեցութիւն  
կը բանեցնէր. Արամայիս ալ շատ անգամ  
իրեն խորհուրդ կը հարցնէր ու բոլոր  
գաղտնիքները անոր կը հաղորդէր. ինչ  
մէծ երջանկութիւն է անձնուեր բարե-  
կամ մը որ քեզի հետ կը տրամի, քու վը-  
տերուգ վրայ հետդ կուլսց և մանաւանդ  
երբ անձը քեզի համար կը վասնգէ. խիստ  
շատ հազուագիւտ բան:

Արամայիս զուարթանալ սկսաւ և իր արտ-  
մութիւնը կը փարասէր. Պ. Սերովէ ալ  
աչքը մէյմը Արամայիսի և մէյմ'ալ Խաչէր  
եղբօրը կեցած տեղը կը գարձնէր. ժամը  
եօթն էր, գիշերուան զովութիւնը երթա-

լով կաւելնար, Արամայիսի վրայ քանի մը  
վայրկեանէ ՚ի վեր թմբութիւն մը պա-  
տեր էր և աչքերը կամաց կամաց կը ծան-  
րանային, ահկայն անդրդուելի խորհուրդ  
մը մարքին մէջ կը պտղուեր, և իր թմբու-  
թեան հետ խորին մատղքաղութիւնը կը  
ցուցնէր թէ իր խորհուրդը ՚ի գլուխ տա-  
նելու հնարքը կը մասհէր : Նշյալի քարե-  
դին խոր մոածմանց մէջ ընկղման էր : Պա-  
րսն Սերովիքէ ալ լուռ կը կենար և անհան-  
գստութեամբ չորս կողմը կը դիտէր . ատեն  
ատեն ալ խոչեր եզրօրը կեցած տեղը նայ-  
ուածք մը ձգերով և անհամբերութեամբ  
ձեռքերը ճմաւելով :

Սոյն միջոցին Խաչեր եզրօրը կեցած կոզ  
մը եզզող պատուհանին առջեւ գէ մը մը տես-  
նուեցաւ, այս անձը Երեք անդամ մեզմով  
սպակիին զարկաւ, Խաչեր եզրօրը ցատ-  
կեց Ելաւ նստած տեղին և օկտաւ սպատու-  
հանէն նայիլ . վերջը մատովը նշան մը տա-  
րվ փողոցն եղաղին դէպ ՚ի նրբութին սկսաւ  
ուղղուիլ հաղաղով եւ մէկ ձեռքով միւս  
ձեռքին մէջ հարուած մը տարով : Ասիկայ  
աղդարարութիւն մ'էր, վասն զի Պ. Սերով  
ըէ մէկէն ՚ի մէկ աչքերը մէծ մէծ բացաւ  
և ինքն ալ ձեռքով նշան մը տալէն վերջը,  
ոտքի վրայ Ելաւ ու օկտաւ ձեմել ոտքե-  
րուն ծայրերուն վրայ . քիչ մը վերջը ինքն  
ալ գէպ ՚ի նրբութին յառաջացաւ և մթու-

թեան մէջ անաես եղաւ, երբոր կազմա-  
կան գրան քով հատաւ, տեսաւ որ Խաչեր  
եզրայր գուռը բացեր էր և ձեռքը թուղ-  
թէ լոգաեր մը բռնած մէկը ներս մոտաւ.  
ասիկայ Մարիամ մայրիկին տղան Գրիգորն  
էր : Պ. Սերովը աչք բրաւ Խաչեր եզրօր  
և երբոր գնաց անիկայ, ինքը Գրիգորի մօ-  
տենալով հարցուց թէ ինչո՞ւ այսափ ուշա-  
ցեր էր, Գրիգոր ալբապտերը գետնին վր-  
այ գնելով և գլուխը շարժելով պատաս-  
խանեց :

— Զգէ սիրելի պարոնս, այս գիշեր սու-  
կողի գիշեր մ'է, ես ալ չեմ գիտեր ինչ ը-  
նելո, օրիորդ Արտեմ մէծ սրտատանջու-  
թեան մէջ է Գրիգորինի համար, ես ալ  
երկար ժամանակէ ՚ի վեր է որ զայն կը  
մնառելի :

— Ի՞նչ կրսես :

— Ճշմարտութիւնը, բայց այդ մէկ կողմ  
ձգենք, հիմայ մտիկ գիր թէ ինչ կրսեմքէ-  
զի, Մանեան տո՞ննէ լաւ գիտե՞ս :

— Այս, Երկու անդամէ որ հոն կերթամ:

— Շատ լաւ ու քեմն :

Պ. Սերովը գրապանէն կտոր մը թուղթ  
և մատիս մը հանելով շուտավ քանի մը  
տազ գիր գրեց ծունկին վրայ և թուղթը  
ծրաբելով ու Գրիգորի տալով բաւա :

— Առ ասիկայ, և շուտ տար Մանեային  
յանձնէ և տես թէ ինչ կրսէ, երբոր վե-

բադառնաս, Խաչեր Եղբայրը գուռը կիսաբաց պիտի թողու, կրնաս ներս մանել, անիէց վերջը ընելիքներդ կը զրուցեմ քեզի: Սակայն հնարաւոր Եղածին չափ շուտ հատարելու ես այս պատգամաւորութիւնը: կը հասկնաս, քեզտեսեմ, ո՞ն, կայծակի պէս:

Երիգոր լապտերը առնելով դուրս ելաւ. Պ. Սերովբէ ալ իր ընկերաց քով կը դառնար, նրբուղիին մուտքին բերանը Խաչեր Եղբայրը գտնելով ականջին քանի մը խօսք դուրցեց, անիկայ ալ ընջացքը շյելով գըլուխը կը շարժէր. յետոյ Պ. Սերովբէ ընկերներուն քով գարձաւ որք մի և նցյն կերպով մտածութեանց մէջ ընկղմած էին և իր շարժումները չեին նշմարեր: Խակ ինքը իր առջեւը գրուած գինւոյ գտւաթը պարպեց և այս արթուն ոդին երկու դժբաղդ բարեկամներու քովնատած, անոնց ապագային ծրագիրը կը պատրաստէր մոտքին մէջ: ինք պրեթէ վիշտ մը չունէր. Երիտասարդութեան ժամանակը թշուառութեան և քանի քանի անդամ յուսահատութեան ճամբաներէն անցեր էր, բարեկամ մը չէր ունեցեր որուն կարենար վիշտը պատմել, ոչ ալ մտերիմ մը որ իրեն կարեկից ըլլար, բայց այն սոսկալի ժամանակները անցած էին, հիմայ իր ազնիւ սիրութ թշուառ բարեկամութեան կրակովը կը տաքնար. ինքը

գիտէր թէ յուսահատ և ամենուն երեսէն ինկած թշուառի մը լոկ բարեկամն ըսելը ինչ մեծ արթէք ունի անոր առջին: Ասոր համար յուսահատ Արամայիսի կարուկ բայց դառնապէտ խորհուրդներ պարսւնակող խօսքերէն կը դոզար բոլոր մարմնովը:

Այս միջոցին Արամայիս թոթվուեցաւ և սկսաւ աչքերը շփել քունէ արթնալու պէս, խարաեաշ ընջացքը ձեռքին բթամատին և ցուցամատին մէջ առնելով շտկեց, թիկնոցին փոշին ձեռքերովը թոթվեց եւ երկու թեւերը իրարու պլլած կուրծքին վըրաց գրաւ: Վերջը Պ. Սերովբէի վրաց ակնարի մը ձգելով, անոր գիտաւորութիւնը իմանալ: կուզէր: այս վերջինը քիչ մը շփոթեցաւ, բայց ինքնինքը բռնելով ուզեց որ խօսքի բռնէ Արամայիսիք. կերեւար թէ տեղէն ելլել չէր ուզեր կամ գիտաւորութիւն մը ունէր՝ որուն յաջողելուն կրսպասէր: Արամայիս իր նայուածքը շարունակելով բառաւ:

— Երթանը ըսել կուզէմ: կը հասկնաս միտքս. կարծեմ ժամանակը եկած է, Մանեսց ինձ կրսպասէ:

Այս անունը արտասանած ժամանակ, սարսուռ մը անցաւ բոլոր անդամներէն:

— Բայց ի՞նչպէս պիտի կարենանք ասիկայ ՚ի գլուխ տանիւ, վրաց բերաւ Սերովբէ աչքերը անոր վրաց յառած:

— Ի՞նչպէս, է՛հ, Աստուած գիտէ, հոգս

չէ, հարկաւ կրնանք բան մը լինել :  
— Սակայն հարծեմ աւելի լու կրպաց աւ  
ուղուց խորհիլ և վերջը անդաշովառէս  
գործել . գիշեր ատեն է, վտանգաւոր է  
մեր ձեռնարկութիւնը գիշերապահները :

— Գիշերապահները, շեշտեց Արամայիս  
Սերովիքէի խորը ընդմիջելով, ես զանանք  
կլնամ վախցնել :

— Այդպէս ամեն բան մի գիշերացներ,  
աւելցուց Սերովիքէ սարտութով Արամայիսի  
մերժին խօսքն :

Արամայիս կանկ առաւ և սկսաւ մոտածել,  
վերջը զլւխը շարժեց որպէս թէ միտքը  
գոած խորհուրդը իրեն պահել կուղեր :

— Երթանք, ըստ նորէն, զինքը պիտի  
տեսնեմ, խոստում առած եմ, երբէք այս  
գիշերուան պէս խնդութիւն ունեցած չու-  
նիմ, կուղեմ այս ուրախութիւնը ամբողջ  
վայելել և այս գիշեր, ինչ պիտի վախնամ,  
որդէն մեռած եմ ես, չես անմներ, ըրու-  
ծըս գիտե՞մ, ինքնաշարժ մեքենայէ մը ի՞նչ  
տարեերութիւն ունիմ :

— Բայց սիրելի բարեկամու, ըստ Սերով-  
իքէ անհիարագրելի խանդաղատանօք . քու-  
աղահալութեանդ համար է ու ես քու հա-  
ւատարիմ բարեկամդ ըլլալով, շատ մը ի-  
րաւունքներ ունիմքու վրագ . դու յու-  
սահատ եմ կըսես, ինձ կը վերտրերի, իբ-  
րև բարեկամ քու ձեռքեդ բանելով Ճամկ

բայց ցուցնեմքեզ: Զիս շատ սիրելուդ հա-  
մար կը համարձակիմ խնդրել որ իմ խօսքե-  
րուս ունկնդիր ըլլաս . գիտեմ աշխարհ  
մութ է քեզի հիմայ և չես կրնար լաւն ու  
գէջը նշմարել, բայց ես քու քովդ եմ:

— Կը սիրեմքեզի, աւելցուց Արամայիս  
գործառնօք անոր ձեռքը սեղմելով և այն-  
պիսի ահմ մը ըրաւ որ Սերովիքէի գիտուն մա-  
վերը անկուեցան :

— Հանդարտէ, սիրելի բարեկամու, յա-  
րեց Սերովիքէ այնչափ կարելցաբար արտա-  
սանելով այս խօսքը որ իր տժդոյն դիմաց  
զրայ անկեղծ բարեկամութիւնը կը փայտէր :

Այս միջոցին Խաչեր եղբայր ոտքի ելե-  
լով, գէպ 'ի նրբուզին ուզզուեցաւ և քիչ  
ժամանակին մութին մէջ աներեկոյթ եղաւ,  
ասիկայ չիմացաւ Արամայիս որ աչքին առ-  
ջե եղած և ոչ բանի մը ուշադրութիւն  
կըներ: Միայն Սերովիքէ նշմարեց և իր եր-  
կիւզախսուն խնդութիւնը ծածկեց . իսկ  
ֆարեգին ձեռքը ծնօտին գրած և արմա-  
կըն ալ առջեր եղած տախտակէ սեղանին  
յեցուցած՝ խորին մտազրազութիւն մը կը  
նշմարաւէր իր վրան և բողորտիքը եղածնե-  
րուն բողորտին անուշագիր ըլլալին կիմաց-  
ուէր թէ յափշտակուած էր :

Քիչ մը վերջը խաչեր եղբայր վերադառ-  
նալով նրբուզին գէպ ասոնց կուգար .  
այս բանը թէպէտ և միւս ընկերներուն

անծանօթ՝ բայց Պ. Սերովիքէի լաւ ծանօթէր : Խաչէր եղբայր Պ. Սերովիքէի մտենալով խմացուց թէ Գրիգոր Եկեր էր և զինքը կուզէր խիստ կարեար գործի մը համար : Պ. Սերովիքէ ՚ի սկզբան զարմանաբ ձեւացուց եւ ապշութիւնը տիրեց վրան, բայց վերջը ոտքի վրայ ելլելով խաչէր եղբօր հետք սկսաւ նրբուզին կոզմը երթալ և քիչ ատենէն աներեցիթ եղաւ : Գրիգոր քառորդ ժամէ մը աւելի էր որ հոն իրեն կըսպասէր . երբոր ասիկայ Պ. Սերովիքէն տեսաւ՝ գրամանէն թուզթ մը հանելով անոր երկնցուց . անիկայ ալ սկսաւ կարդալ նամակը ուշադրութեամբ . կը կարծուէր թէ այս նամակը ախորժելի լուրեր կը պարունակէր , վասն զի Սերովիքէի դէմքը դուարթանալ ոկսաւ : Նամակը կարդալէն վերջը, նորէն ծրարեց և գրամնը գրաւ . և խաչէր եղբօրը դառնալով պատուիրեց որ երթայ Գարեգինը կանչէ : Երբոր անիկայ գնաց ինքը Գրիգորի դառնալով ըսաւ :

— Սիրելի բարեկամ, դուն այնպէս կեղծէ որ Գարեգինը վնասելու համար կուգաս . ասի բարեկարութիւն մըն է . բայց թշուառ Մանեան ի՞նչպէս է, ի՞նչ կընէ :

— Վիճակը գէշէ, նուազում մը եկաւվը ուսն . զինքը սենեակը տարին . բարեբաղդաբար նամակը գրելէն վերջը եղաւ այդ բանը :

— Տէր Աստուած, պատճառը մենք եղանք, բայց ինչընենք, բաղդը անողոք է : Ոտքի ձայն ելու և մէկէն Գարեգին երեցաւ, վաղելով պլուեցաւ Գրիգորի վիզը : Խոկ Պ. Սերովիքէ ետ կը դառնար դէպ ՚ի Արամայիս, բայց նրբուզին մէկ անկիւնը քաշուելով սկսաւ դիտել Արամայիսը և ի՞նչ տեսաւ . այս վերջինը թիկնոցին տակէն ատրճանակ մը հանելով, սկսաւ աննկարագրելի տիրութեամբ մը անոր վրայ նայել : Եթէ ձիշու իր սրտին ուղղուած ըլլար այս ատրճանակը, այնչափ չի պիտի սոսկար Սերովիքէ . սիրտը այնպէս սաստիկ կը բարախէր որ շունչ չէր կրնար առնել . աչքին վրայ ու վարագոյն մը իջած էր . ծունկերը կը կլուստին և իր խաւարած աչքերը Արամայիսի կը նայէին : Խոկ Արամայիս ատրճանակը նորէն թիկնոցին տակ պահեց և ձեռքերը կուրծքին վրայ ամփոփեց այն ատեն որ Սերովիքէ ալ գերմարդ կային ջանքով մը թոթվուելով կոկսէր իր կթուտ ծունկերը շարժել : Քիչ քիչ սկսաւ սրտին բարախում մը նուազիլ, համորձակ քայլ կառնել . այսպէս քիչ ատենէն Արամայիսի քովին հառնելով իր առջի տեղն աթոսին վրայ նոտառ պարտասեալ՝ քաշած սրտադողէն : Պ. Սերովիքէ Արամայիսի երեսը նայելով տեսաւ որ աչքերը կարմրցած էին, խորին տիրութիւնը դէմքը պատած էր, Սերովիքէի սիր-

արդէն թօւնտ ելած ըլլաւավ , չի ու ի մացաւ և իր աչքերը ակամայ լեցուեցան : Քիչ մը ետքը հասան Գարեգին և Գրիգոր ու մէյ մէկ աթոս , առնելով նստեցան : Երբ որ Արամայիս Գրիգորը տեսաւ , ձեռքը Երինցուց և անոր ձեռքը թոթվելով ըստ :

— Ի՞նչ լուր ունիս , Մանեան տեսար այսօր :

— Այս , պատասխանեց Գրիգոր , քիչ մը առաջ հնի էի :

— Ի՞նչպէս է , ըստ Արամայիս տհամ բերաւթեամբ անոր պատասխանին սպասելով :

— Ոգէկէ . բայց քիչ մը առաջ սրտի նուազում մը եկաւ վրան և զինքը սենեակը տարին որ հանդստանայ :

Կարծես թէ կապելան Արամայիսի գըլ խուն վրայ գլաւ , երբոր այս խօսքը լսեց անոր բերնէն , լուռ և անշարժ աչքերը գետինը սենուած էր , այն պայծառ աչքը որ այս անդամ աղ թթվեցան դարձեալ :

Յանկարծ սոտի վրայ ելաւ Արամայիս և Պ. Սերովի ձեռքէն բանելով ,

— Երթանը , ըստ անագործն ըալդը վարիեց . հոգ չէ , վաղը ամեն բան կը պայ:

Նոյն միջոցին Գարեգին և Գրիգոր ալ ոտքի ելան և ամենքը մէկին գէպ ՚ի Դուռու զին շտկուելով , կազմական դռնին գուրս ելան : Խրարու բարի գիշեր մազթելէն վեր-

ջը , Գարեգին ու Գրիգոր անանցմէ գատէ ուելով գէպ ՚ի մէծ փողոցի վերի կողմը ուղղուեցան . Արամայիս և Սերովի ալ կապելոյէն վար Եղող նեղ փողոցի մը մէջ տուն մը մտան : Ամեն բան լինցաւ : Փողոցի տուներէն ումանց մէջ միայն աջատ լոյս մը կար գիշերուան լռութիւնը տհաւոր էր , յուրա հով մը կը վշէր , գիշերապահ ներուն սոտին ձայնէն ուրիշ ամենեկին ձայն մը չիկար :

— Տաս :

Գլուխ Ե .

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ՎԵՐՁԲԻՆ ԳԻՇԵՐԸ

Գէսոլ ՚ի Բլրակ տանող նեղ փողոցին մէջ , ձախ կողմը անելուզի մը կայ . այս աեղ տուն մը կայ որ փողոցին ելքը կը գոյէ . այս շնչքը բարձր և երկայարկ շնչք մի է և իր բարձրութեամբը ու գիշերը յարմար բլրուն բազմազան տեսարան մը ունի իր բոլորակը : Տունը նար է , բայց գուրսի կուլմը ներկ չունի , արևմտեան կողմէն հինգ պատուհան սոտրնացարկը ունի և եօթը հատ ալ վերնացարկը որ փողոցին վրան կը նային : Արեւից կազմք չըրս պատուհան ունի , հատ մ'ալ հարաւային կողմը որ բլրակին վրայ կը նայի . տանը զրան առջին հինգ

Հատ մարմարինէ դարսկ կար գուռը ելլեւ  
լու համար։ Երբոր դուռը բացուէր բակ  
մը կելլէր առջևդ սե թերթաքարով յա-  
տակեալ. բակին աջ կողմէն դէպ ՚ի խոհա-  
րանը կերթուէր, ձախ կողմէն ալ վեց աս-  
տիճանով սանդուխ մը, սրահ մը կը հանէր.  
ասիկայ ստորնայարկնէր։ Ստորնայարկը եր-  
կու սենեակ ունէր քովէ քով արևմուտքին  
կողմը՝ որոնց մէկուն մէջ երկու և միւսին  
մէջ ալ երեք պատուհան կար. այս սեն-  
եակներուն ետևի կողմը սրահն է որուն  
անդիի կողմը փոքրիկ խցիկ մը կայ որ մա-  
ռանի տեղ կը ծառայէ։ Սրահը աջ կողմէն  
սանդուխը մը ունի տասն և հինգ աստիճա-  
նով և այս ալ վերնայարկը կը հանէ. վեր-  
նայարկը փոքր սրահէ և մեծ սենեակէ մը  
կը բազիսանար. այս սենեակը հանդիսաւոր  
օրերու համար էր, պատերը կանչագոյն  
թղթով զարդարուած էին. բազմոցը կար-  
միր դամասկցէ էր, սե կարմիր ու կապոյտ  
գծեր բանուած գորգ մը գետինը կը ծած-  
կէր. բարսկ զարշէ և աղնիւ ասեղնագոր-  
ծուած վարագոյներ պատուհանները կը  
գոցէին. երկու դամասկցով պատած նըս-  
տարաններ դրուած էին բազմոցին երկու  
ծայրերը, անոնց քով ալ երկու կարդ թիկ-  
նաթուններ, տասներկուքական աթոռէ  
բազկացած։ Սենեակին դռնէն ներս մտած  
ժամանակդ՝ ձախ կողմը մեծ հայելի մը դըր.

ուած էր ընկուզենիէ ճարտարարուեստ  
սեղանի մը վրայ. սեղանին վրայ ալ սե ու-  
ժերմակ երակներով կծեայ տախտակ մը  
դրուած կար. անոր վրայ ալ զանդակածէ  
ապակիներու մէջ գրուած արուեստական  
շինծու շուշաններ։ Այս տունը քիչ տարա-  
ծութիւն ունեցող պարտէ զով մը շրջափակ-  
ուած էր և կերւեար թէ ծաղիկներու տար-  
փաւոր եղողի մը ձեռքը խնամով զարդարած  
էր զայն. երգիներանգ գիշերասէրը եռա-  
գոյն մանիշակին հետ խառնուած կը փայ-  
էր փոքր ածուներու մէջ որոնք շրջապատ-  
ուած էին տսասխի թիկիներով և արուես-  
տական մարդագետիններով, ասոնց մէջ ալ  
կապուտակ մանիշակը պահուըտած իր գե-  
ղեցիկ հոտը կը բուրէր։ Պարտէզին մէջ  
կամարածէ մը կար գեղձիներով ձեւացած  
որուն վրայ կը պլլուէր անուածաղիկը.  
փոքրիկ աւազան մ’ալ պարտիզին ջուրը կը  
հայթայթէր. բարձր հնդիկ շագանակենի  
մը շուք կընէր պարտիզին, այս ծառին վր-  
այ ալ գեղցիկ փորուած գութական գրե-  
րով երկու անուններ կային սրոնց մէկուն  
սկզբնաստուը Ա. և միւսինը Մ. էր։

Ժամը գիշերուան մէկն էր. կապելանե-  
րու սրճարաններու լուսաւորութիւնը սո-  
վորականէն աւելի էր. խառնաձայն շուկ  
մը կը տիրէր փողոցներուն և շուկային մէջ  
և իւրաքանչիւր ոք խմելու. և պոռալ կան-

չելու մասին զիրաք գերազանցել կը ջանաւ նոյնին : Օդը այնչափ ցուրտ չէր և հովին ալ թեթև կերպով կը փչէր :

Այս միջացին հրապարակի գեղեցիկ ողբ ճարաններէն մէկուն պարտէ զին մէջ երեք տնձ նոտած էին , առջենին տախտակի ու զան մը դրուած , վրան ալ տփսէի մէջ երեք գաւաթ և վերմուափ շիշ մը : Կերեւար որ ասոնք գաղտնի խօսակցաւթիւն մը ունէին և չէին ուզեր որ մէ կը զիրենք տեսնէ , վասն զի պարտէ զին մինչեւ ծայրի պատին տակ նոտած էին , ցած աթօռակներու վրայ այնսիսի դիրքով մը որ մէկ կողմէն տոսախօի թիւերը իրենց զլսէն բարձր ըլլալով զիրենք կը ծածկէին և միւս կողմէն ալ ձիւնածաղկի ծառ մը բաւական դիրենք աչքէ կը ծածկէր մժութեան մէջ : Չորս կողմերնին գխուելով իրարու կը հակէին այս անձնիքը և ցած ծայնով մէկմէկու հետ կը խօսէին . իրենց ձեւերէն բառ ական կիմացուեր որ գաղտ ժամանդրութիւն մը ըրած ըլլալով հոն երթալու կը պատբառուէին :

Բաւական ատեն այսպէս խօսակցելէ վերջը , ասոնցմէ մէկը ոտքի ելաւ և քանի մը ձեւեր ընելով զատուեցաւ անսնցմէ . վերջը առանց որձարանը մտնելու , մուր եղած պատին մէջ բացուած գոնէ մը գուրս ելաւ և անտես եղաւ այնպէս որ

մէկը չի կրցաւ նշմարել ասիկայ : Իսկ միւս երկու ընկերը սկսան իրենց գաւաթները լեցնել և պարպել , մերթ ընդ մերթ իրարու հետ բանակցելով : Քիչ մը վերջը ասոնք ալ իրենց տեղին ելան և ոտքերնուն ծայրերուն վրայ կոխելով , նոյն փոքր գըռնէն գուրս ելան . բայց ասոնք իրենց միւս ընկերոջը բանած ճամբէն տարբեք ճամբայ մը բանեցին . փոքր համտի մը մէջն անցնելով նեղ փողոց մը մասն ուր որ կարծենթէ սպահով էին մէկէ մը չի ճանչցաւելու , որովհետեւ ալ այնչափ զգուշութիւն չէին ընել և բաւական բարձր կը խօսէին : Այս փողոցէն ուրիշ աւելի լայն , բայց անմարդի փողոց մը մասն , որուն տանց մեծ մաս որ հին և խարխուլ էին . գրեթէ ժամը հազիւ մարդ մը կանցներ անկից և անցնողներն ալ բոլորովին անծանօթ մարդկներ էին . ուստի այս երկու անձնիքը մէկէ մը ճանչցուելու վախ չունէին : Երկար ժամանակ քայլելուն վերջը զառիսեր տեղ մը ելաւ գիմացնին և սկսուն անկից վեր եղել . բայց երբոր զառիսերը լմնցաւ , նորէն ծայներնին ցածցուցին և զգուշութիւնը կրկնապատկելով ուրիշ նեղ և իսկառ աղտեղի փողոցի մը մուտքը հասան որուն գիմացը կիսնար բլբակը : Դէպ ՚ի այս աղտեղի փողոցը յառաջացան շունչերնին բռնելով եւ իսկառ ցած ծայնով խօսելով . երբեմն ալ ու շար-

բութեամբ չորս կողմը դիտելով որ մէկէ  
մը չի նշմարուին . ուսկից կերևար թէ այս  
փողոցին մէջ շատ ծանօթներ ունեին : Հոն  
քիչ մը կանկ առին և այս երկուքին մէկը ,  
միւս ընկերոջը մատով ցուցուց մեր քիչ մը  
առաջ նկարագրած տունը և քանի մը ձեւ  
եր ըրաւ ձեռքովը , ասոր վրայ միւս ըն-  
կերն ալ հաւանութիւն ցուցնելու պէս  
գլուխը շարժեց և պատի մը տակ կծկեցաւ  
մինչդեռ իր ընկերը քանի մը քայլ առաջ  
անցաւ անկից և նորին ետ դառնալով հե-  
տը խօսեցաւ և երկուքն ալ սկսան յառա-  
ջանալ դէպ ՚ի մեր ըսած տանը մօտ գտն-  
նուող տախտակէ ցանկափակի մը քով եւ  
դարձեալ նոյն տունը կը ցուցնեին իրա-  
րու : Ասկից վերջը թեթև կերպով մը հրե-  
լով ցանկափակին փոքր դուռը ներս մտան  
և անտես եղան :

Տանը վերնայարկին մեծ սենեակը շափա-  
զանց լուսաւորուած էր այս գիշեր , կերե-  
ւար թէ կը պատրաստուէին հիւր ընդու-  
նելու . խառնամնդոր ձայները երթալով  
կաւելնային . ինչպէս որ ըսինք այս տան ըս-  
տորնայարկը քովից քով երկու սենեակ ու-  
նէր . այս սենեակներէն մին թէպէտ և  
մութ էր , բայց անոր քովը աջ կողմը եղած  
սենեակին մէջ լցու մը կար : Այս սենեակը  
փոքր սենեակ մ'էր , բազմոցը կապտագոյն  
դամասկով զարդարուած , պատերը զար-

կարող թղթերը մանիչակագոյն էին և ծաղք  
կենկար . պատու հաններուն վարագ ցընե-  
րը աղնիւ ձերմակ պատուաէ ծարտարա-  
գործ բանուած , որը պատու հաններուն  
կէսէն աւելին գոցած էին և ծայրերնին  
վայելչածե ամփոփուած էր գեղեցիկի բռու-  
նուած կապիչով մը . մութ գոյնով գեղե-  
ցիկ նկարէն գորդ մը գետինը կը զարդա-  
րէր և սենեակին ձախ կողմը ընկուղենու ոյ  
փայտէ ծարտարագործեալ սեղան մը գըր-  
ուած էր , վրան ալ մութ կանաչ երակինե-  
րով սեաթցը կճեաց տախտակ մը , սառ  
վրայ կը յենոյր հայելի մը որուն շրջանակը  
ոսկիի պէս կը փայլէր . հայելիին առ չե վր-  
ասն գծեր ունեցող և ծախտաբակեալ զա-  
ւաթի մը մէջ մանիչակի փունջ մը գրուած  
էր , անոր մէկ կազմն ալ Գորդնից հոսուեէտ  
ջրաց շիշ մը և ուրիշ մանր մունը իրեր դա-  
սակարգութեամբ կարգադրեալ . դիմացէ  
դիմաց երկու պատերուն վրայ կախուած  
էին կահենի շրջանակով մետաքսագործ Ասո-  
ղիկ մը , Երսու մանկիկն ալ քովը , մէկ ձեռքը  
աղեղ մը բռնած և միւս ձեռքն ալ վառ-  
ուած ջահ մը . ախորժակի տէր մէկը լաւ-  
կրնար նկատել ջահին բնական և կենդանի  
գոյնը , մէյմ'ալ փափուկ կիսոջ մը կենդ անո-  
դիրը՝ որուն ցաւադին հայեցուածքը խիստ  
սրտաշարք էր , սենեակին մէջ տէղը ըն-  
կուղենիէ շինուած և ոստանի մը դրուած

էր, վրան կարմըորակ կերպաս մը փռած, որուն վրայ կար ազնիւ կանաչ կաշխով պատած ոսկեզօծ Պօղ, և Վիրդինեայ վիսպատանութիւն մը, ձենապակեայ ձերմակ կազամար մը ոսկեզօծ ծաղիկներով դրուագեալ, սպնիի փուշէ գրիչ մը, բիւրեցեայ փոքրիկ բաց գեղեցկածե աշտանակ մը որուն վրայ կաթի պէս ձերմակ ձրագ մը կը վառէր և ձեռագիր թերթ մը :

Եռուտանիին առջև թիկնաթռուով չքնաղ օրիորդ մը նստած էր, գլուխը բաց, նրանձեւ և բարձր հասակ մը ունէր, իր երենունի նման սկալցոր ու փայլուն մազերը ուրոնց վրայէն բաց կապցատ գցնով պարզ ժապաւէն մը կապած էր, աթուին յենարանին վրայ ինկած էին և մինչեւ դետինը կը հասնէին: Երևակայէ խիստ վայելչածե ձուարգ մը, անոր վրան բարձր ճակատ մը ուր անոնեցութիւնը կը փայլէր, սամցյրի նման փայլուն՝ բարակ յօնքէր, գեղեցիկ սեռ և խոչսր աչքեր սրոնց նայուածքին քաղցրութիւնը անհնարի է նկարագրել, սկալցոր ու երկայն արտեանունքներ որոնց ծանրութիւնն կարծես թէ աչքերը դէպ՚ի վայը կը հակէին, նուրբ ու սրածացը քիմ մը, փայրիկ բերան մը և նուրբ շըմսներ ուրոնց վրայ ախրախան ժողով մը կը հանգչէր, փղոսկրի նման ձերմակ ակռաներ, ըստ պիտուկ պատերու վրայ երկու փասորակներ

որը իր դէմքին և ծիծաղին անհամեմատ հրապար մը կուտային: Փղոսկրեայ պարանոցը թաւիշինման կը փայլէր, ձեռքերուն ոսկիտակ և փափուկ մորթին տակ խիստ բարակ կապտագոյն երակներ գրակոնտիկոնի պէս կերևային և ձեռքին մատոները երկայնունեւ բարակ և շատ ձեւառոր էին: Կապտագոյն ոնդուռու երկայն շրջագրեստ մը կը կրէր որով իր նուրբ և երկայն հասակին վայելչու թիւնը և ա քան զես կ'աւելնար: Շրջագրեստին վայցէն հազած էր կուլիստալ տի գոյնով կարծ թիկնց մը օձիքը, կուրծքը և թեղանիքը կնզմենիսվ պատած, թեւերը ոսպայած ձերմակ բազապաններ դրած էր բիւրեկեայ երփնադ շն կաճակներավ կաճկած, ականջներուն վրայ տակի օղակներում մէջ երկու ագամանոր կը փայլէին, կուրծքը կրծառեղ մը խօթած էր, որուն ապակիին տակին այր մարդու մը լուսանկարով քաշուած կենդանագիրը կը նշմարուէր, բարսկ ոսկի զգեցացով մը միգէն կախուած մետաղիսց սոկեզօծ սիրտ մը կը կիշէ Ճիշդ իր որսան վրան, ձեւառօք ու մանր սոքերն ալ աղիսի կերպասէ բարձր կաշիկներ հապած էր, իր դէմքը քիչ մը նիշար էր և շատ թեւթեւ գեղութիւնը մը ճնունները կը պատէր բացց այս դէմքը, զոր տեսնողը անջուշ համբերատարութեան տիպար մը պիտի կործէր, աղնիւ դդ ացմանց և կանացի փափէր:

կութեան սբատիերն էր, հոգւցն ազ-  
նուութիւնը հայեցուածքինքաղցրութեան  
մէջ կը փայլէր : Գէ մըին գծագրութիւնը կը  
ցուցնէր այս ազնիւ. հոգին ՚ի ապառ վրշտամ-  
բերութեան գատապարտուած էր, և իրեւ  
լուութեան գիցուհի մը առանձնացած այս  
սենեակին մէջ զոր իր ախորժակին համեմատ  
զարդարել տուած կերեար և չէր խառնուեր  
վերնայարկին տղմուկին և շշուկին որ հետրդ-  
հետէ կ'աւելնար : Վերնայարկէն իջնող և  
այս մեկու սացեալ արարտածին համեմիսում մէջ  
կը կարծես թէ Յունաստանի աւերակաց մէջ  
պտըտած ժամանեակ չելլենուհի որ մը նշանա-  
կերտ արձանը կամ չընապագիւտ հետ թիւն թիւն  
մը գտած կըս որ :

Այս օրիորդը Արտամայիսի սիրուհին, Ման-  
եան էր :

Դժբաղդ Մանեայի, ծնողքը մեռած էին .  
տանը մէջ մօրաքոյր մը, երեք մօրաքեռ աղ-  
ջիկներ տասնեւչըստ տարեկան եղբայր մ'ու-  
նէր : Մօրաքոյրը նենդամէտ և դժնեաց կին  
մ'էր որ սոոկալի սիստակալութեամբ և զըր-  
պարտութեամբ, ինչպէս որ տգէտ և ան-  
կերթ կոմանց սովլարկան է, անուանարկ  
ընել կը ջանար Արտամայիսը և Մանեան ալ  
բոնութեամբ տան մէջ կը պահէր, դրսէն  
տմեն հաղորդակցութիւն կարելով և զինքը  
միշտ վշտացնելով : Իսկ Մանեայ՝ որուն սիր-  
ոը անարատ էր և միայն բարւցն զգացու-

յը կը կրէր, զզուելով այս ժաման արտար-  
ծէն՝ փոքր ունենակ մը զարդարել տալով,  
հոն կ'առանձնանոյր, մէկուն հետ չէր իսո-  
սէր . իր բարեկամը Պօղի և վիրդինեաց վի-  
պատանութիւնն էր զոր կարդարով կըզմայ-  
էր : Առանձին նոտած իր ցաւերուն վրայ  
կուրար և չէր հասկնար թէ մարդիկ չարիք  
ընելու հոմար մնչո՞ւ այնչափ հաստատա-  
մբառութիւն կունենան : Իր զէմքը գեղներ  
էր, վասն զի Պ. Սերովի էի նամակին վրայ  
այնչափ սասատիկ վրդովելէն սիրոը նուա-  
զած էր առջի գիշերը, հետևաբար ալ սրբ-  
ուայուցութիւնը զինքը կը տուայտէր . թէ-  
պէտ և ինքը ըստ իւր սովորութեան ան-  
տարբեր երեւալ կը ջանար եւ այն տիրա-  
խառն ժպիտը որ զինքը կը մտանաւորէր,  
իր զրթանց վրա կը համեգէր : Երբեմն յա-  
վիշտակուած՝ հրեշտակային ձայնովը որուն  
նմանը շտահ հազուագիւտ էր, իր վշտերը  
կերգէր . խօսքերը ներշնչեալ էին եւ ար-  
դարեն զինքը մտիկ ընտղը հիացած կուրար :  
Կարծես թէ թշուառ ըլլալու համար մի-  
այն ծնած էր, մինչդեռ մասնաւոր զմայլի՛՛  
հրապար մը զինքը շրջապատած էր . և իրը  
աշխարհէս անջրակետեալ, ձեռքը ծնօտին  
դրած և արմուկն ալ եռոտանուոյն կրթըն-  
ցուցած աչքին առաջը եղող ձեռագիր  
թէրթին վրայ կը նայէր : Ասիկայ Արտամա-  
յիսի օրագրութիւնն էր որ նամակի ձեռով գը-

Եկէլ վերջը իրեն կը իրկէր կարդալու համար և այս էր պարունակութիւնը .

ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԱՑՅԱՌ

24 ՓԵՄՐՎԱՐ .

Այսօր օգը գարնան օդի պէս զւարձնալի է , բայց ի՞շ սիրտս տաք չէ , ի՞նչպէս որ քանի մը տորի առաջ էր : Այն ատենակը սիրած բաներս հիմայ աչքիս խիստ դէշ կերեան , այնպէս որ եռ ալ երբեմն կը խորհիմ ասոր վրայ և կը զարմանամ իմ փոփոխութեան համար : Այս առաւօտ սովորականէն աւելի թուլութիւն մը կար վրաս և շատ գժուարաս հագուեցայ . ահ , ժամանակ մը ինչ միր և զործունեայ էի . կարծես թէ ցնորդի պէս եմ և ինչ ընելու ըլդիսեմ . այս վայրկենիս մէջ ուղած մէկ բանէս միւս վայրկենին մէջ կը գարծիմ : Մտածեցի որ այսօր հեռու տեղ մը երթամս պտտելու , որ զ մնէ գործ մը տեսած բլամ . բայց շուտ մը միտքու փոխուեցու . աղէ մը աւելի փոխոխամիտ եղեր եմ : Երբեմն խելքս գլուխս կը բերեմ և կրոկում խորին մտածել ապագայիս վրայ , սակայն շատ քիչ մերջը այնպէս կը մտանամ այս խնդիրը որ իրը թէ ամենին միտքս եկած ըռլար :

Առոք նախաճաշելէ վերջը Մարդ գոցի

պտառեցայ , անկից ալ դէպ ՚ի Անտառամելք ուր քանի մը ատենէ ՚ի վեր գայցած չունէի , վասն զի դիտես , կը պարտիմ քու գացած տեղերդ երբեմն այցելել , բայց վահ , այն տեղերը ամեննեն համ հոս չունին առանց քեզի . քեզի հետ այն տեղերը սրբած ժամանակներս կարծես թէ խոսի մը շիզը բնութեան հրաշալիք մը կը թուեր ինձ , որովհետեւ գու հոն էիր և այն խոտերուն վրայ կը կոխէիր . իսկ հիմակ , հիմակ ամեն բան ամայի է , իմ սիրտս ալ տամայի , քու սիրտդ ալ : Ի՞նչպէս բացատրեմ տրամութիւնս երբ Անտառաւակը մորենիի թմբերու տակ մանիշակ գտայ զոր գուայնչափ կը սիրես . խնամով ժողվեցի զանոնք ամենին ալ և փունջ մը կապելով գիտեմ ինչ ըրի , չշմարիսն ըսեմ , մեռելի մը վրայ լալրւ պէս լացի , այս տեղերը որ երբեմն ուրախութեան տեղեր էին ինձ համար , հիմայ ալ արտասուր թափելու վայրել են : Առաջակին քոյ նատած ակնկառաց կը նայէի վազած ջրին , ի՞նչ խորհուրդներ անցան մոքէս , Աստուած իմ , սակայն ջացը ըին արագութեամբը սահեցան գացին . քիչ մը մերջը անհուն դատարկութիւնն մը կարսուիմ մէջ և իմացայ որ թշուառ եմ . արդեօք օր մը պիտի ըլլայ որ եռ այս բառը մոռնամ :

Քիչ մը վերջը ետ գարձայ , ճաշի առեն

էր, միաբու գրի որ քիչ մը կերակուր առ ներով գէալ ՚ի թլրակ երթամ, ուստի պատրաստութիւնս ըրի և գէալ ՚ի հնի ուղղուեցայ, տանձենին աղէկ գիտես դու, անոր տակ նստեցայ: Բաւական ժամանակ կար որ առանկ ախորժակով կերակուր կերած չէի. կը հրձուէի և ունայն յշտով ինքզին քըս կը խարէի: աչքերս գոցերով զքեզ երեւակայութեանս առջին կը բերէի: ահ, կենացս կէսը կուտայի եթէ հնար ըլլար ինձ անդամ մալ քեզի հետ այն ծառին տակ նստիլ, թերեւս վերջին անդամ մը, վասն զի . . . բայց Աստուած չընէ, խեն դեշեր եմ միթէ, զոնէ այս տեղը աղդպի սի սոսկալի բաներ չանցնեմ միտքէս, վասըն զի նուիրական է ինձ այդ ծառը: Գիտենս, օր մը, երբ քիչ մը տկարութիւն ունէիր, առանց քովդ գալով քեզ միսիթարել համարձակելու, սենեակիդ սեամին վրայ կեցած՝ կէս ժամ արցունիք թափեր եմ եւ ասիկայ այս ծառին տակ պատմեր եմ քեզի. դուն ալ, սիրեցեալ հրեշտակս, ալ անկից վերջը սկսար զիս աւելի սիրել և միշտ սիրուն ժպիտ մը ըներով կը յիշեցնէիր ինձ. ոհ, երբէք չեմ մոռնար այն հրեշտակային ժպիտ: Ծուեցայ և համբուրեցի այն գետինը որ մեր սիրոյն երկրորդ սեզանն էր:

Այս միջոցին թափառական գնչուներու

երկու մանր տղաքներ եկան քովս եւ ինչ ոզորմութիւն խնդրեցին. խեղճերը ցուրտէն կը գողացին, սրովհետեւ բոկսան եւ կիսովին մերկ էին. զանոնք նստեցնելով կերակուրիս մնացորդը առջենին գրի եւ շատ զղացի աւելի չառնելուս համար, վասըն զի այս խեղճ արարածները այնչափ անօթի էին որ իսկցին լափեցին ամենն ալ: Վերջը քանի մը արծաթ գրամ տուի ասոնց որը զիս զուարձացնելու համար քանի մը խաղը ընկելէն վերջը, ձեռքս քաջեցին, համը բուրեցին եւ խնդութեամբ ելան գացին արծաթ գրամներուն վրաց նայելով:

Աղիւ Մանեայ, չեմ կրնար ըսկելթէ որ չափ հրձուանիք զգացի այս տեսարաննէն և ըրած փոքր բարերարութիւննս: այս առարինութիւնը դու ինձ ուսուցիր և ասոր համար է մանաւանդ որ զքեզ կը պաշտեմ և առիթ գտած ատենս քու գասերդ լիովին կը գործադրեմ:

Ես գարձեալ մինսկ մնացի տանձենին տակը և սկսայ եօմքը տարին մարքս անցնելու ու բախութեան յաջորդեց երկիւղ, երկիւղին ստվում և անոր ալ թշուառութիւն: բայց ինչ թշուառութիւն, գիտե՞ս չափազանց թշուառութիւնը յուսահատութիւն է կոսկն, ես ալ խիստ թշուառ եմ . . . Աւգեցի այս մասն թիւները մորկ և վանել, բայց ապիկար էի աղդ բանին և ակա-

մայ սոսկացի : Երբ կը մտածեմ թէ արդեզք  
մեր գահիձները պիտի կրնան իրենց նպա-  
տակին հանսիլ, որ լաւ կը հասկնառ նիշ  
ըսել կուզեմ, այնչափ կը սոսկամ, այնչափ  
որ կարծես թէ կը յիմարիմ և այս մեծ երկ-  
րագունոր գլխիս նեղ կուզայ :

Այս սոսկացի մտածութիւնները զիս շատ  
կը քարչարեն և դարձեալ զիս պաշարեցին .  
թող չեն տար որ ինձ սիրելի եղող յիշա-  
տակներդ միտքս բերեի և թրակլ նոտած  
ու պրտած տեղերդ այցելի : Եթայ նոտած  
անզես և առանց ետիս դառնալու սկսայ  
վերադառնալ և վար իջնել և ամեն մէկ  
քայլ առնելու քու ամենավորը յիշատակ  
ներդ իսկ ինձ կը ներկայանացին . բայց եր-  
բոր գարակներեն վար կիջնեի, այն տեղը .  
ուր անդամ մը սարդ վտանգ առ որ կերպով  
ասէնելսվ փափու կ սիրադ նետեց վախեգ ,  
չարաշշուկ անուն մը լոեցի և սոսկու մէս  
սոս կորեցաց այնպէս որ եթէ մէկը դա-  
նակ մը զարնէր սրախա՝ կաթիլ մը արխնո  
չէր փալէր, այս համադիպութիւնը զիս քիչ  
չի զգու եցուց աշխարհէս . կարծեցի որ ալ  
աշխարհիս մէջ ինձ համար բերկրութիւն  
չիկաց և լոկ սոսկում ու արհաւ լիք պիտի  
կրեմ և եթէ իմ բարեկամներս և դու քրե-  
լար, ու ու որու ն համար կետնքու առլու պատ-  
րաստ եմ, պիտի կարծեմ թէ տա հասարակ  
մարդ կային աղդը ինձի չարիք կը խորհի :

Մերենայի մը պէս շարժելով սկսայ եկած  
ձամբաս բռնել գարձեալ, բայց ուր եր-  
թալը չէի գիտեր . Պետրոսը դիմացս երա-  
և եթէ զիս չի կանչէր ես զինքը չի պիտի  
կրնայի նշմարել, այնչափ խելքու կորանցու-  
ցած եի և աղիս որատանին զիս շատ միսի  
թարեց . քիչ մը վերջը բաժնութիւնը իրար-  
մէ և տուն երթարով սակաւ իկ մի հանդըն-  
տացայ, եթէ կայ ինձի համար հանդըն-  
տառ թիւն երկրու մէջ և սկսայ օրագրու-  
թիւններս աշըք անցընել որ թերես զրա-  
դելով քիչ մը հանդարտութիւն գտնեմ,  
բայց ՚ի զուր, անտուի սրտմաշուր մը զիս  
պատած է և սիրոս կը ճնշէ յուսահատու-  
թեան բեռնի տակ, մէս, ինչ դառն վիճակ  
է սցու, ես պատկու ըլլալու եի միթէ . . . :

Չեմ գիտեր թէ օրուան մնացորդը ինչ-  
պէս երաւ, մինչև իրիկուն թմբած վիճակի  
մը մէջ եի տունը նոտած, վերջը գարձեալ  
դաւրու ելաց քիչ մը և զէս ՚ի գիշին վերի  
կողմերը գացի պատելու . ծառերը և բց-  
ուրն են հիմաց ընկերներս . մօտ աեղին  
ձայն մը լոելով տկանջ տուի, ինչպէս որ իմ  
սովորութիւնս է, այս ձայնը անցը կերպէր,  
բայց քու ձայնդ չէր այն . քու փափու կ ձայ-  
նըդ որ իմ սրտիս կը դպչէր երբ Ասպետի  
մէջ սոխակին հետ կը մըցէիր տատուն կա-  
նալս պատուհանին առջև նոտած :

Բաւական ժամանակ այս տեղերը անցընե-

լէ վերջը՝ վերագարձայ այն ատեն որ քառ  
նի մը բարեկամներ զիս խնտուած էին, ա-  
նոնց հետքիչ մը ճեմեցի և դարձայ ՚ի տուն  
ուր ինձ կերակուրի կըսպասէին. ընթրե-  
լէս վերջը աշխատութեան սենեակս ա-  
ռանձնանալով սկսայ իմնուիրական պարտ  
քըս կատարել, այն է օրագրութիւնս գր-  
քել. ազնիւ Մանեայ, ինչ որ քեզի կը վե-  
րաբերի նուիրական է ինձ և այս սենեակը  
մտած ատենս կարծես թէ երկիւզածու-  
թիւն մը կուգայ վրաս և միտքս կ'ամփոփ-  
ուի և օրպէս թէ ինքզինքս շողզբորդել  
կուզեմ, կըսեմ, հազար երանի այն անձին  
որ քեզի պէս սիրուհի մը ունի, սակայն  
ափանս, որ ինձի չեն թողուր հանդարտ  
ըլլալ և քեզմով զբազիլ մինչեւ որ թշուա-  
ռութեամբ ու ցաւով լի մարմինս անկեն-  
դան դիսկի մը դառնայ: Հարկ չիկայ ըսել  
թէ ամեն ժամանակ որ օրագրութիւնս կը  
գրեմ, լալով կակսիմե լալով կը վերջացնեմ:  
անիկայ իմ կենացս հայելին է և երբոր կը  
կարդամ կարծես թէ թշուառութիւնս ա-  
ւելի ակներե. կը տեսնեմ և չես գիտեր  
ինչպիսի ախ մը կըսեմ և այս հաւաշանքէն  
ես իսկ փուշ փուշ կըլամ, ինչ ընելիքիս  
վրայ կը շփոթիմ ու աչքիս սոսկալի բաներ  
կերեան:

Խորհեցայ որ Պ. Ա. ին Երթամ աղաջէմ,  
բայց չուզելով այս նուատութիւնը յանձն

առնուէ, վերջն խորհուրդու վախեցի,  
վասն զի կոսիքտու անսպիսան մարդ մ'է և  
կելլէ սմաննէ խորքեր կըսէ ինձ որ զիս կը  
զայրացնէ. ինչ ընեմ չեմ զիտեր, կըսեն  
թէ ծավը ինկնաղը օձի կը վաթթուի, Ճիշտ  
ես ալ այնպէս եմ, երբեմն այնպիսի իննդ-  
ումնդ բաներ կը մտածեմ որ վերջը ես  
ալ կ'ամչնամ. ահ, ինչ ընեմ, ներէ, սիրե-  
լի Մանեաս, ձեռքս չէ. գիրս վայրիկեան  
մը գաղրեցուցի և գրւիս գրասեղանիս  
վրայ գրած սկսայ ինքնիրենս հարցնել թէ  
արդեօք գու խմ պիտի ըլլան օր մը, միթէ  
քու փափուկ ձեռքդ պիտի համբուրեմ և  
աչքերուս դնելով արտասուօր թըջեմ զա-  
նոնքը, երեւակացութիւնս այնպէս բռնկեցաւ  
որ աչքիս ամեն բան տարբեր կ'երեւէր և  
ինքզինքս ու ըիշ աեղ փոխագրուած կը կար-  
ծէի. նցն միջոցին չեմ գիտեր ի՞նչպէս ե-  
ղաւ, կազամարը գետինը ինկաւ և անոր  
թնդիւնէն արթնցայ և խմացայ որ գրասեն-  
եակս էի. միտքս եկաւ թէ օր մը երբ այս-  
պէս յասփշտակուած էի, քու քայլերուդ  
ձայնէն աչքս բացի և զքեզ քովս գտայ.  
ի՞նչ վայրիկեան էր այն:

Զգաստանալով ժամը նայեցայ, երեքն  
էր. թէ և քուն չունէի, բայց բոնի քնա-  
նալ կուզեմ որ թերեւս ազատիմքիչ մը կեան-  
քըս մաշող այս սրտատանջութենէն. քու-  
նըս իսկ միշտ հանդարտ չէ, անցեալ զիշեր

սովորմով արթնայ և սիրաս ուժգին կը  
բարախիչը , ասոր համար է որ կըսմթէ  
որտի համեղարտութիւն խօսքը ալ ինձի հա-  
մար անիմաստ խօսք մ'է . . . մնաս բար-  
եաւ , աղնիւ Մանեայ , կաղաշեմքեղի որ  
ասոնք կարդացած ժամանակիդ շատ չի լսա .  
շատ վիշտ կրողին շատ ալ բարեթաստու-  
թիւն պատրաստածած է կըսեն . հարկաւ  
ժամանակ մը պիտի գայ որ ասոնք մոռնանիք .  
մնաս բարեաւ , սիրեցեալ հրեշտակո , մը-  
նաս բարեաւ , մի լար . . . :

## Արամազիք . 8.

Թուղթը արտաստօք թրջեր եր :  
Մանեայ իր ձերմակ թաշկինակը աչքե-  
րուն տարաւ և արցունքը որբելն վերջը  
ուժգնն գեմքը ձեռքերուն մէջ դոցեց Եւ  
երկար ատեն հեծկանիքներէ ուրիշ բան  
չի լոււեցաւ : Մանեայ խորին մնազքազու-  
թեան մէջ եր :

Այս միջացին թլամակ տանող մեծ ձամ-  
բուն վրայ քիչ մը առաջ պատաղ երկու  
անձինքը նորին երկցան և ցած ձայնավ  
խօսելով զանազան ձեւեր կընեն առավ և  
ձեռքով այնպէս որ կերեար թէ այն առ-  
զերը գործ մը ունեն : Թէպէտ և ասոնք  
գգուշութիւն կընեն , միշտ չորս կողմի  
գիտելով , բայց գիշերապահները յանկար-

ծակի վրայ հասան գայլերու պէտ և յիշու-  
ւի այս Երկուքը կը բռնուեին եթէ ուրիշ  
զեպէ մը զիրենք չափանիք անոնց ձեռքեն  
չոն մօտերը գանուող տունէ մը Երեք դի-  
մակաւորներ ելան , մէկը կեոջ , մէկը այր  
մարդու եւ երրորդն ալ արարացիի կեր-  
պարանիք մոտած և կերեար թէ ասոնք քիչ  
մ'ալ գինով էին . որովհեան երբեմն կը  
գլուրտին եւ առանց գգուշութեան հա-  
մարձակապէս ձամբանին կը շարունակին .  
քանի որ այն ատենները , 1863 , սատիկա-  
նութեան կողմէն խստիւ արգիւուած եր  
իրաւացի պատճառներով դիմակ զնելու  
և փողոցները կամ առները պատելու : Երբ  
գիշերապահնը ասոնց վրայ գաղով ու վեցին  
զանանք արգիւել և բռնելով սատիկանու-  
թեան յանձնել , մէջերնան արարացիի  
կերպարանիք մանովը որ յաղթահատակ մէ-  
կըն եր , բանցի հարուած մը առալ զիրենք  
արգիւել ուզող զինուորին , զայն գեափն  
տասպալց ու սկսաւ միւսներւն վրայ  
յարձակիլ մինչդեռ իւր երկու ընկերնեն  
ալ իրենց կողմանէ ձեռքերնուն բիրերը  
վեր վերցնելով ինքզինքնին պաշտպանել  
կուզին : Պատերազմը սկսաւ , խառնիխու-  
արն զէնքի ձայներ կելլեն և զիմակաւոր-  
ները մօտ էին յաղթող ըլլալու երբ սոտի  
կանութեան միւս զինուորները վրայ հաս-  
ներից . զիշերապահնը նորախուս սկսն եւ

անհաւատար մարտել մը վերջը հսկացին թե և երբ կոշկանդելով ու միւս ընկերներն ալ առ ջենին ձգելով ուզգուեցան գէպ ՚ի սուտիկանութեան դուռը : Քիչ մը վերջը ըրշունելն անցնելով գարձեալ լոռութիւնը տիրեց և այն երկու անձնութը՝ որը կուռին ժամանակ մէկ մէկ անկիւն քաշուած ու պահութած էին , նորէն գէպ ՚ի մէծ ճամբան յառաջացան եւ լաւ մը ամեն կողմ դնելին վերջը , սկսան սոտքերնուն ծայրերուն վրայ կոխելով և իրարու նշան տարսի Մանեայի եղած տան կողմը շտկուիլ . ասոնցմէ մին գէպ ՚ի պարտիզին դուռը երթալով ականջ դրաւ , վերջն ալ դրան ծակեն ներս նայեցու . քանի մը վայրկեան վերջը դրան վրայի եղած չուանը քաշելով դուռը բացաւ և սկսաւ ընկերը ձեռքով կամնել ու ներս մտնել : Ծնկերն ալ իր օրինակին հետեւելով գանհն ներս մտաւ և դգուշութեամբ վրային գոցեց . երկուքն ալ պարտէզին մէջն էին և ծառի մը ետին պահութած ամենայն ուշադրութեամբ կը գիտէին ամեն բան , մերթ ընդ մերթ ծռելով և ցած ձայնով իրարու հետ խուելով : Յետոյ երկուքը մէկեն կամաց կամաց քալելով պարտէզին մէջ գանուած հնդիկ շագանակենին քովը հասան և հն կանկանելով ասոնցմէ մին գրկեց այս ծառը ու համբաւքեց , ուսկից ետքը սկսան տան

որան կողմը յառաջանալ դդուշութիւնը կրկնապատկելով և աւելի ծուելով սրբէս զի աննշմարելի ըլլան : Այս գիրքով մինչեւ դրան քով համեմէլ վերջը աւելի տպահով ըլլարու համար մարմարինէ զարահիներու տակ պահութաեցան , հն դարձեալ ձեռք քով քանի մը ձեւեր ըրբն , երբեմն ող աւկանջ տաղով վերնացարին նայներուն եւ խորշերուն որ բաւական որոշ կը հասկցուեին :

Յանկարծ մետաղի նման բանի մը ձայնը ըրուելով երկուքը մէկն թոթվուեցան և գլուխնին գարձնելով ստորնացարկի մութ սենեակին պատաւ հաններուն մէկուն կումաց մը բացուիլ եւ սնկեց մարդու մը գըլուխ դուրս ելլելու տեսան : Վերջը գէպ ՚ի պատաւ հանը յառաջանալով բարակ ուղիեց ասոնցմէ մին , և կերեւար թէ նշանաը ութիւն մէր ատի , վասն զի պարտէզը եղալուներուն գէմքը զու արթացաւ և պատաւ հանը եղողը աներեցիթ ըլլարով մէկ վայրկենէն դուռը բացուեցաւ թէթե ճամփու մը արձու կելով : Մի եւ նոյն տանենը տանիք ալ գէպ ՚ի դուռը ուզգուեցան ու ներս մտնելով դուռը վրաներնուն գոցուեցաւ . դուռը բացուը մատավը սանդուխին կողմը ցուցը ներով ասոնց՝ ինքը խահարանին կողմը երժարով աներեցիթ եղաւ մինչեւ և միանելով միան սանդուխին պատիճաններն վեր

Ելել և Մանեայի եղած սենեակը ու զզուիւնուսից յայտնի կերեւէր որ ասմեք անձանօթ մարդիկ չէին և այս տունը մտած եւլած էին :

Դրան մօտենալով՝ բարձրահասակ երիւտասարդը դուռը խառնեց ու բանալով ներս մտաւ . Մանեայ խոր քունէ մը արթօննալու պէս թօմթվուեցաւ “ Արամայիսուըստ : ” Մանեայ ոգուեց երիտասարդը մէկ ցատկելով անոր քովը վազելով : Մանեայ Արամայիսի թեւերուն մէջ էր նուազեալ և դժոյազիրէ : Խոր լրութիւն մը յաջորդեց այս սրտագրաւ տեսարանին զոր անկարելի է ինձ նկարագրել, և այս երկու սիրատենչ ատրփառորք այնչափ տարիներ իրարմէ հեռու գտնուելէ վերջը դարձեալ զիրար գտնեն լնուն վրայ անպատմելի բերկութեամբ լցուած և գրկախառնեալ լուռ ակնապիշ իրարու երես կը նայէին : Բոլորով մին սէր կտրած էին . սիրայ անձնաւորութիւնն էին այս երկու՝ թշուառութեան համար աշխարհ եկած արարածները և գըրեթէ ասկից աւելի զմայլելի տեսարան մը չէր գտնուէր :

Մէկէն արտասուք հեղեղի պէս սկսան վազել իրեւեց աչքերէն և կարծես թէ եօթնամերայ վշտաց վրայ գեռ նոր կուլային գերագոյն զմայլմամբ մը որ ամենուն արուած չէ, յափշտակուելով և զաշխարհ մօտնալով :

Այս միջոցին տանը դուռը զարմաւեցաւ, և երբուր վերնայարկէն վար իջնալով բացին բաւական բաղմութիւն մը ներս մտաւ : Տընեցիք պատշաճ քաղաքավարութեամբ զատնկը ընդունելի վերջը վերնայարկը հրաւիրեցին, ուր հիւր ընդունելու համար պէտք եղած ամեն բան պատրաստուած էր, հիւրերն ալ սկսան ու զզուիլ հրաւիրուած տեղերնին խառնաշփոթ աղազակով, վասն զի ոմանկը իրարու ձեռք կը սեզմէին, ոմանկը կը գրկէին զիրար, այլը կը խնդային : Վերջաւէս վերնայարկը ելլելսին ստորնայարկին մէջ լրութիւնը տիրեց եւ Գարեգին որ Արամայիսի հետ Մանեայի սենեակը մտած չէր, այլ գուրաը սեամին վրայ կը սպասէր՝ զմայլելով այս տեսարանին վրայ և չուղելով իր ներկայութեամբը սցուերկու սիրայիններու անապակ բերկպահը վրգովել, և երբ դուռը զարնուեցաւ՝ մասունին քովերը պահուըած էր մէկէ մը չի տեսնուելու համար . դարձեալ իր պահուըած տեղէն ելաւ և Մանեայի սենեկին առ ջին կեցած չէր համարձակէր ներս մըտնել ու կուլար ձեռքը ճակտին դրած, ու բավիշեած զգացուն էր, ինքն ալ թշուառէր : Այսպէս բաւական ժամանակ անցաւ և Գարեգին նցիսկէս հոն կեցած էր . Առ ու թիւնն ալ կը սիրէր :

Յանկարծ վերնայարկին սանդուխին վրայ

քայլերու ձայներ լսուեցան . Գարեգին սարուաց և պահութանու ձև ըրաւ այն մի ջոցին՝ որ այս ձայնը աւելի մօտենալով , սրահին մէջ մանկամարդի մը դէմքը տես նուեցաւ որ իր երկայն շրջազգեասին ծայրերը ձգած՝ դէպ ՚ի Մանեսի սենեակը կը դիմէր նազելի գլուխը շարժելով ու անհամբերութեամբ : Գարեգին , ինչպէս որ բնական է , առջի բերան ետ ետ գնաց զինքը տեսածին ողէս և իր մարմինը ծռելով սրահին այն կոզմը , ուսկից սանդուխով բակը կիշուուէր , կծկեցաւ մնաց , բայց քիչ վերջը իր դիրքը փոխելով և որպէս թէ այս օրիորդէն վախ մը չունենար , համարձակագիտուած այն դիմեց , “ Արտեմ ” Բռաւ ցած ձայնով և անոր ձեռքերը բռնեց գորսվանօք համբութեց : Արտեմ հրճուելով այս հանդիպման վրայ . Գարեգինի ձեռքը սեղմեց որ նոյն միջոցին ցուցուց անոր այն տեսարանը որ զինքը այնչափ լացուցեր էր , որուն վրայ . Արտեմ խիկ գորտիւխով Գարեգինի ձեռքը իր սրտին վրայ սեղմեց , որպէս թէ անոր դունթ ելնելը իմացնել կուզէր իրեն և իր միտքը հաղորդեց անոր թէ ներս երթալ կուզէր , և Գարեգին երբոր իր կամացը յանձնեց , Արտեմ անոր ձեռքը բռնած սենեակը մտաւ . Արտամայիս անբացատրելի հիմունին մը մէջ ըլլալով , մոռցած էր թէ Գարեգին իր ընկերն էր

և անոր հետ առւնէն ներս մտած էր , ուստի ելեքտրական սաստիկ հարուած մը կը բելու պէս բոլոր անդամներովը սարսեցաւ , մինչդեռ Մանես ալ որ սկսէր էր զգաւատնալ , նորէն նուազեցաւ և Արամայիսի թերուն վրայ ինկաւ անզգայեալ , բայց երբ տեսաւ այս վերջնինը որ ներս մտնող ները բարեկամնէր , անձնուէր սրտեր էին , իր դեղնած ճակտին վրայ զբւարթութիւնը փայլեցաւ եւ խանդաղատանօք անոնց ձեռքերը սեղմեց : Արտեմ և Գարեգին օգնութեան հասան Մանեսի և երբ նախելը գլուխը եկաւ և ասոնք տեսաւ , անպատմելի ցնծութիւն մը զգաց , զանոնք իր սրտին վրայ սեղմեց և բազմոցին վրայ նրաւան այս երկու սիրային զցգերը զիրար գգուելով և ներզինքնին սիրոյ դբախտին մէջ կարծելով : Թէպէտ և Մանեսի կրած ցնցումը ծանր էր և բոլոր իւր ջղերը դողացուցեր էր , սակայն անակնկալ կերպով կազդութեցաւ , վասն զի սիրելին քամի էր , բարեկամնէրը իրեն կը ժաղէին , սիրտը հանդարտ էր , կեանքն ու բնութիւնը աւելի գեղածիծաղ կերեային իրեն եւ այն հազարաւոր սրտմաշուքները հետացած էին :

Բաւական ատեն լուռ կենալէ վերջը , Մանես , որուն չքնաղ զէմքը թեթեւ կարմրութիւն մը առած էր , լուսութիւնը խղեց և Արամայիսի ձեռքը իր ձեռաց մէջ

առնելով բառ : :

— Սիրելի Արամայիսա, չեմ կրնարք ացատշը բել սրտիս հրճուաները, այս գիշերուան պէս ոչ սոսկում եւ ոչ ալ այնչափ ուրախութիւն ունեցած էի, կարծես թէ բոլորավին փոխուած եմ, սիրոս հանդարտ է, ցաւ չունիմ, քովս եղողները զիս կը սիրեն, ահ, հիմայ կիմանամ թէ շատ թշուառ եղողները միայն կրնան ձշմարխտ բերկրանկը ձաւ շակել : Եօթը տարի, Աստուած իմ ինչ սոսկալի բան :

Արամացիս զլուխը շարժեց եւ Արաեմ ձեռքերը իրարու կցեց :

— Սակայն, ահ, բրաւ Մանեայ այնտիւ սի շնորհալի ակնարկ մը ձգելով Արամայիսի վրայ որ սիրաը յուզեցաւ, չեմ հասկը հար որ մարդիկ երբեմն ինչն այնչափ ար կար կը լաւ եւ կարծես թէ իրենց կենացը դառանութիւն ընելու ջանադիր են, ամեն հովէ կը խուսիմն, այնպէս չէ Արամայիս, միթէ դու ամեն օր ժամանակ մը սահմանած չէիր լրի արատառուք թափելու համար, միթէ ես իսկ ծաղկի մը վրայ այն չափ լացած չէմ, արիութիւնը, ահ, շատ մեծ առարինութիւն է այն, և սակայն մեք շատ տիկար եմք երբեմն, երբ մանաւանդ մեր հսկին զօրացնող յօյոը սրտերնուախուի, երբ ալ աշխարհէս հոմի շառնունք, մեր դիւրագգաց ըլլանք, մեր ընկերին

դժբաղդութեան վրայ սրտերնիս յուզուի, բարիք ուզենք և զայն գործադրելու համար թշնամիներ ունենանք, Դու միշտ կը դրէիր թէ յուսահատ եմ, աշխարհս ինձի նեղ կուզայ, բայց իրաւունք ունենիր, Ես գիտեմ թէ ինչ բարի սիրտ մը ունիս, ինչպէս աղիքդ կը յուզուի եթէ մէկը քեզի թշուառ եմ բաէ և երբ չը կարենաս անոր օգնել, ինչպէս անձկութիւնը զքեզ կը պատէ, քու վիշտ կը թողուս և զայն սփոփիել կը ջանաս + Սակայն աշխարհիս մէջ ամեն չարիք իր՝ արդար հատուցումը ունի, անմեղ վշտացեալի մը խիզքը մաքուր է և իրեն կարեկից եղող մը միշտ կրնայ դանել, բայց չարասիրտ թշուառին համար այնպէս չէ, անոր կեանիքը դժոխիք է, ամեն մարդ անկից կը զգուին : Միթէ մեր թշուառութեան մէջ ունեցած չէնք այնպիսի վայրկեաններ յորում զմեզ աշխարհիս ամենէն երջանիկը կարծած ըլլանք, ասիկայ տարապարտուց թշուառ ըլլանուահամար է և հիմայ իսկ որ այս թշնամի տան մէջ ենք մեր հրձուանիքը այնչափ չէ :

— Այս, իրաւունք ունիս, աւելցուց Արամայիս աչքերը լենալով, բայց երբոր կիմանացի թէ քու վէրքերով լի սիրտ կը վիրաւորէին, ուզեզս կը բորբոքէր, կըսէի թէ այն ժամար տեսնէի եւ գնտակ մը տղելով սրտին՝ կտոր կտոր ընէի զայն,

վերջն ալ իմ զ լիսիս զարնեի պնտակ մը և  
ջուրջախիւ :

Մանեայ երբոր այս խօսքերը լսեց, յի-  
շելով Պ. Սերովիւ նամակը, պատ քրտինք  
մը իր ձախտաը թրջեց, դէմքը տիրեցաւ-  
եւ Արամայիս անոր ձեռքի պատրւթիւնը  
զգաց իր ձեռացը մէջ, բայց ջանաց իր  
տագնապը ծածկել և չուզելով պղարել ի-  
րենց ու բախութիւնը, ինքզինքը բռնեց եւ  
երկայն շունչ մը առնելէ վերջը, յարեց  
յուզեալ ձայնիւ մը :

— Ահ, սիրելի Արամայիս, ես ալ երբոր  
քու վրադ գէշ կը խօսին, սաստիկ կը ցատ-  
նում, ինձ այնպէս կը թուի որ մարդիկ  
բոլորն ալ չար են, բայց միւս կազմեն քու-  
երջանկութիւնդ յարդարել կը ջանամ,  
քեզի համար կուլամ և կրսեմ իւրովի թէ  
մինչեւ աշխարհիս վերջն ալ եթէ լալու ըւ-  
րամ քիչ է : Երբ միաքա կը բերեմ, որչափ  
կը սոսկամ, անցեալ գիշեր, ի՞նչ սոսկափ  
պիշեր եր այն . . . միթէ միշտ թշուան պի-  
տի ըլլամ այսպէս . . . Երբ ինձ նամակ կը գը-  
րես, յուասհատութեան վրաց շատ կը խօ-  
սիս և այնպէս զարհուրելի կը նկարադրես  
զայն որ գող կելլեմ և ատկից զատ կորուկ  
կը գրես ու շատ մը կէտեր կը դնես, այն  
կէտերը զիս շատ կը սոսկացնեն և կարծես  
թէ իմ խորհուրդներս կը քայրացին ու կը  
տիսարանամ, ահ, սիրեցեալդ իմ, մի ըներ,

կազմչեմ քեզի, խնայէ ինձի :

Սրամայիս Մանեայի այսպէս խօսելուն  
վրաց կը զարմանար և չէր զիսէր թէ ինչ  
պատասխան տայ, ուստի սկսաւ մտածել՝  
որպէս թէ մորին մէջ բան մը դանել կը  
ճգնէր և քիչ մը վերջը սորքի վրաց ելլով  
անոր ձեռքը բռնեց և ըստա,

— Մանեայ, չէմ համինար ինչ ըսել կո-  
ղես, եթէ զքեզ պաշտելու համար պա-  
կաս բան մը թողուցեր եմ, բու . եթէ զին  
մը իսկ կուզես, պատրաստ եմ, քու ոտ-  
քերուդ տակ մեռնին ալ մեծ բարեթաս-  
տութիւն է ինձ համար . վասն զի քա-  
սորիդ պէս սիրուշատ հազուագիւտքան է :

— Զահ չէմ ուզեր, յարեց Մանեայ այ-  
լայեալ ձայնով մը . արդէն գու ինձ հա-  
մար շատ զոհոզութիւններ ըլիի և ես քե-  
զի չնորհապարտ եմ, սակայն . . . ի՞նչպէս  
բում . . . կը յիշես միջին փողոցի կապե-  
լան . . . Արամայիս, ոչ, ոչ, գու չի պիտի  
մեռնիս, ես կուզեմ որ ապրիս :

Արամայիս ապշած անոր երեսը կը նայէր  
չէր յուսար այս խօսքերը լսել, թէ պէտե  
միոքը շատ հոգնեցուց և հազարաւոր խոր-  
հուրդներ անցան մաքեն, բայց ՚ի զուր .  
չի կրցաւ մտածութեանց խառնաշփոթ  
քառակին մէջէն յատակ գաղափար մը ստա-  
նալ եւ այս մտատանջութենին աղատիլ .  
ուստի անխօս և ապշած սկսաւ Մանեայի

էրեսը նայիլ այնպիսի ձևով մը որ բաել կու զէր թէ իր միտքը չէր հասկնար : Մանեայ իր յուղմունքը ծածկել ջանալով՝ դողդո ջուն ձեռքբոլը գրավանէն թու զթ մը հանեց և զայն Սրամայիսի երկնցներով, ըստ աղեամարշ արտասանութեամբ մը :

— Զի պիտի մեռնիս, այնպէս չէ :

Ո՞վ կրնայ նկարագրել Սրամայիսի գէմքը այս թմուզթը կարգացած ժամանակ, մահատիպ տժգունութիւն մը պատեց երեսին վրայ, ձեռքերը կը դողային եւ թուզթը ինկաւ ձեռքէն : Գիւլխը վերցընելով Մանեայի երեսը նայեցաւ որ նայն միջոցին թևերը իրարու վրայ բերած այնպիսի չնորհալի կերպով մը իր գէմը կայնած էր որ թերեւս Սրամայիս իր կեանքին մէջ անոր վրայ այսչափ շնորհաք և հրապար տեսած չունէր : Մէքենաբար ատրճանակ մը հանեց վերարկուին տակէն և զայն գետինը դնելով, Մանեայի ոսքն ինկաւ : Եթէ մօհք տեսած ըլլար Մանեայ, այնչափ չէր սոսկար, բոլոր այս տեսաբանին գերասանները շփոթած ու խուսված էին : Գարեգինի և Սրտեմի աչքերը լեցան, ամենքը լուս կեցած էին և ոչ ոք չէր համար ձակէր այս լուսթիւնն աւրելու . միայն երեմն Սրամայիսի հեկեկանաց ձայները կը լուսէին որ մանկան մը պէս թագուհիի նման Մանեային ոտքը ինկած կուլար և չեր

համարձակել աչքերը վեր առնելու, իթքը թւ յանցաւոր մը որ կը պատրաստուի իւր պատիքը կրելու :

Խակ Մանեայ որ գեղեցիկ արձանի մը նըման կանգնած էր ոտքի վրայ և որուն սիրտը տակն ու վրայ կը լլար, բռնեց Սրամայիսի ձեռքը և զայն ոտքի հանելով, միւս ձեռքն ալ անոր ուսին վրայ դրած երեսը կը նայէր : Մի և նոյն ատեն զինքը մասնաւոր ախրախտառն ժպիտը շրթանցը վրայ երեցաւ և Սրամայիս լուռ և տիսուր զմայլելով անոր գէմին քաղցրութենէն ասպշեր մասցէր էր և կարծես թէ գերսարդ կային զօրութեան մը աղեցութեան տակըն էր :

— Սիրելի Սրամայիսս, ըստ Մանեայ խանգաղասանօք, հիմայ լու կիմանամ թէ սէրը ինչ բան է, սիրած ըլլալուս համար կը բերկլիմ . ալ մեր վշտերը լմացած են, ալ թշնամի չունինք . նախախնամութիւնը զմեզ թշուտա ըրաւ որ վերջը այս անպատճեմ բերկրանքը վայելենք . հիմայ ալ զօրաւոր եմք : Մօրաքոյս ժամանակի մը ՚ի վեր է որ սոսկալի ախսերով կը տանջուի և թէպէտ ինքը իմ սիրտս ամեն ժամանակ կը ծակէր, բայց ես իրեն կը կարեկցիմ . մինչ անիկայ այս վիճակին մշն խակ զիս կը վշտացնէ, գքեղ անիծելով եւ զիս իր անպատիւ յանդիմանելով : Սակայն ես մին-

չեւ ցայժմ անյիշաչար եղայ , սիրելիս , բարքուստութիւնն երբեք անվարձ չի մնար , մենք ալ ազատ և երջանիկ ենք :

Այս խօսքերը բասծ ժամանակ անկեղծութիւնը ճակտոնն վրայ կը փայէր . իսկ Սրամայիս զմայլմանը անձնատուր եղած անշարժ կեցեր էր թևերը իրալու փաթառելով : Նշո՞ն միջոցին դուռը բացուելով Պ. Սերովիէ ներս մտաւ , աս որ տեսաւ Սրամայիս վազեց անոր վիզը պղլուեցաւ “ դուն ես ազատարարս ” ըսելով և անոր ձեռքերը արտասուքովը կը թրջէր ու կը համբուրէր : Պ. Սերովիէ ալ սիրալ երած խանդաղատեցի ժպիտով մը անոր գորովանացը կը պատասխանէր և կը հրճուէր այս անակնունելի յաջողութեան վրայ : Արամայիս անկից բաժնուելով Մանեայի ուղղուեցաւ եւ անոր ձեռքը սրտին գնելով բասւ :

— Ազնիւ Մանեայ , յանցաւոր եմ ես , պէտք է որ իմ յանցանիս ներես . կենացս և երջանիրութեանն համար քեզի չորհաշպարտ եմ , հրամայէ , ես ալ պիտի հսուզանդիմ : Երբեք չեմ մոռնար որ դու ինձի համար սոսկում կրեցիր , արդէն վիրաւոր սիրադ թունդ երաւ ու լացիր , բու հոգիու աննկուն է , իսկ ես տկար եմ , շատ ուկար , յուսահատեցայ և քեզի յաւիտեշնական կոկիծ մը պատրաստելու ջանացի , ներէ ինձ :

— Ե՞ս քեզի ներեմ , ըսաւ Մանեայ աղեկի շեշտով մը , դուն որ միշտ աղնուախոն եղած ես . քու յանցանիքդ թշուառ ըեւլու է :

— Բայց յանցաւոր եմ :

— Երբեք :

— Յանցանիս գիտեմ :

— Ես ամենեին չեմ յիշեր :

— Ներէ ինձ :

— Քու սիրադ մաքուր է :

— Ներում , կաղաչեմ :

— Ո՞չ կրնայ քեզ ներելու իրաւունք ունենալ :

— Կը սիրե՞ս զիս հիմայ :

— Ես քուկի եմ միշտ :

— Ա՛հ , ձեռքդ ուրեմն :

Այս տեղ Սրամայիսի սիրաը չափէ աւելի յուզուեցաւ , իր մելամաղձուու աչքերը զմայլելի շնորհօք լցան , խոնարհութիւնը գէմքին վրայ գրոշմեցաւ և այս խրոխու երիտասարդը մանկան մը պէս կը գողար Մանեայի առջւ որ իր կողմանէ ինքն իսկ Սրամայիսի ձեռքը բռնած , լուռ , շրթանցը վրայ ժպիտ մը և այնպիսի զգացմամբք զգացեալ էր որոնց անաբատութիւնը իր քովը եղողը շուտ կլնար իմանալ :

Մինչդեռ տոննք այսպէս կեցած էին , Արտեմ Գարեգինի ձեռքէն բռնելով ուրի վրայ ելու և գէոլ ՚ի Մանեայի ու Արամայի

յիսի ուղղուելավ ըստ գորովանօք :

— Հիմայ , սկզբելիներս , ալ առն բան լմցաւ . մեք երջանիկ եմք : Եթէ չեմ կըր նար չի տրտմի երբ կը յիշեմ որ այս գիշեր տիսուր յիշատակի մը տարեդարձնէ . երբ կը յիշեմ որ , ահ . այս գիշեր սիրելի մայրս ծնդաց վրայ իր հոգին աւանդեց և հրեշտակի մը պէս մաքուր հոգին երկինք թուաւ . մահուան տագնապներուն մէջ ին ծի համար ազօթեց եւ թշնամիներուն ալ ներեց . բայց միւս կողմանէ ալ կը հրճուիմ որ այս գիշեր մեք բարեբաստութեան առ Ձի գիշերն է . ալ ոչ երկիւզ եւ տագնապ ունիք . սրտերնիս հանդարտն է , մեք սիրելիաց քսմի ենք , ուրախութեան արտասուր պիսի թափենք ասկից վերջը . հառաջանք չի կայ և հրճուանք կը յաջորդեն մեք սրտամաշուքներուն : Ուստի , սկզբելիքը իմ , ծն , երթանք վեր և հսկ պատական ծերունւոյ մը ներկայութեանք՝ մեք ուխտը նորոգենք և աւելի ամրացր նենք զայն :

Այս խօսքերուն վրայ՝ Գարեգին և Արամայիս իրարու երես նայեցան , Մանեայ ալ լուս կեցած եր :

— Այս , երթանք , յարեց Արտեմ շնորհալի ծիծաղ մը վարդի պէս այտերուն վրային անցնելով , մեք սկաշտապանը հսկ վերն է :

Արամայիս լուս անոր ձեռքը սեղմեց :

— Ահաւատիկ միւս պաշտպաննիս ալ , վրայ բերաւ Արտեմ Պ. Սերովիէն ցուցնելով . Ճշմարիտ բարեկամի մը սկրտը կը կը նա և աղնուախոն է :

Այս բաելով Պ. Սերովիէի ձեռքը բըռնեց թութվեց որ այս միջոցին յափշտակ ուած՝ զուարձանազով այս տեսաբանին վրայ , գաղանի ցնծութիւն մընկպար սրտին մէջ . կը յիշեր սոսկալի անցեալը և ներկայն կը վայելեր անկեղծ բարեկամի մը խանդազատանօք : Իսկ Արամայիս անքարբառ , ապշեր կեցեր եր և այս եղածները երազ կը թուէին իրեն . բայց Արտեմ զանիք ամենքն ալ ապահովցուց , իրենց ծանուցանելով Պ. Կ. ին մագդասիրաւթիւնը և թէ ինչպէս անիկայ կարեկից եղեր եր իրենց երբ Արտեմ պատմեր եր իրենց քած շած տառապանիքնին : Ուստի այս սիրային զյոգերը իրարու ձեռքը բռնած սկսան սենեակը թողուած և գէպ ՚ի վերնայարկը տանող սանդուխը ուղղուիլ : Բաց ՚ի Արտեմ և Պ. Սերովիէին միւս երեքն ալ , Մանեայ , Գարեգին և Արամայիս Ճիշգ ինքնաշարժ մեքենայի մը պէս կը քալին . Արամայիսի անձկութիւնը վերջին աստիճանի եր և չեր գիտէր թէ ինչպէս մեկնէ այս անակնունելի փոփոխութիւնը . երբեմն կը խրախուսուեր եր և երբեմն ընդ հակսուակը

վախնալով առելի կը սեզմէր Մանեայի ձեռչքը և ձեռքը սրախն դրած անոր տրումնեւը կը համբէր : Այսպէս առնդուխէն վեր եղելով, առնդուխէն գլուխը կանկ առին սկսան առջնէն աւելի ապշութեամբ իրարու երես նայել, իբրեւ թէ նոչ ընելիքնին կը հարցնէին մէկմէկու եւ իրենց համար ձակութեան վրայ իրենք խոկ կը գործանային, թէ որէտ և Սրտեմ լիովին համազած էր զիրենք յուսալու և յաջողութեան վրայ ապահով լինելու :

Երբոր ասսնք այսպէս կեցած էին, Արտեմ նորօրինակ եռանդով մը սկսորեալ և մէկ ձեռքով Արամացիսի ձեռքը, միւսովն ալ Մանեայի ձեռքը բանելով սկսաւ սիրուտալանց ըսելով թէ այս նուիրական գիշերը, յորում իրենց երջանկութիւնը սկիբոր կառնուր, պէտք չէ ու մոսածութիւններով վրդովիել եւ յաղթանակին ժամանակ, փոխանակ բերկութեան, արտեմ թեամբ համակիլ, մինչդեռ նախախնամութեան հրաշալի խոր հուրդներովը որք մեր խելքէն ու մորէն վեր են, իրենց զործերը անյուսալի կերպի կերպարանափոխ եղած էին այն առեն յորում բնրզմնքնին թշուառութեան վեր նին ծայրը հասած եւ մահուան խիստ մօտէն քալել կը կարծէին : Մանեայ և Սրտամային անոր երեսը կը նայեին գորովազին անձկութեամբ առջնեալ առնդուխն անդամաց դէմքը նկարագրել անհընար է : Բաղմոցին մէկ անկիւնը նասած էր երկայնահասակ եւ նիհար կին մը, ասմիկայ չարաշուրք դէմք մը ունէր, աչքերը խորունիցած և խաւարած էին, ծնօսին ուկորները գուրս ցցուած, քիթը անձունի, բերանը մէծ : Գոյնը խիստ թուխ էր

լով իրեն հաստատամութեամբ պրայ . իւրեն՝ որ խստմանը հաւասարիմ մնալու և մօրը յիշատակը յարգելու համար մահն խոկ արհամարհէր էր :

Այս տեսարանին խւրաքանչիւր անձը մէկ մէկ տեսակ զգացում կը կրէր և ամենուն ալ դիմոց գծագրութիւնը շարունակ և արագ կը փոխուեր, իբրեւ թէ դատաւորի մը առջև սաջե պիտի ելեին . այնչափ թըշուառութիւնը զիրենք սոսկացուցէր էր ահաւ :

Վերջապէս իրարաւ ձեռք բռնած սկսան դէպ՚ի մէծ սենեակը ու զզուիլ : Քիչ մը մերջը սենեակին մէջ տեղն էին :

Երբոր ներս մասն, սենեակին մէջ եղող ները անօրինակ ապշութեամբ և լրիկ ասոնց երեսը կը նայեին և իբրեւ երազի մը խարուսիկ ցեղըքէն պատրեալ չէին կրնար աչքերնուն հաւատալ, վասն զի տարօրինակ կը թուէր իրենց այս տեսարանը : Այս զանազան մարդոցնէ և տարբեր բնաւորութեան տէր եղող անձերէ բազկացեալ ակումբին անդամաց դէմքը նկարագրել անհընար է : Բաղմոցին մէկ անկիւնը նասած էր երկայնահասակ եւ նիհար կին մը, ասմիկայ չարաշուրք դէմք մը ունէր, աչքերը խորունիցած և խաւարած էին, ծնօսին ուկորները գուրս ցցուած, քիթը անձունի, բերանը մէծ : Գոյնը խիստ թուխ էր

և երեսին վրայ ու ըթեր կային որով առ մենատղեղ երեցթ մը կառնցը , ու ագոյն կերպասէ թիկնոց և շրջադղեստ մը կը կը թէ : Այս նենգամիտ կինը Մանեայի մօրաքցը տիկին Ելսպիսն էր , որ թէպէտ և տոռ կալի որովայնի խիթ մը ունէր և ժամանակ ժամանակ սաստիկ կը տանջուէր , բայց ցաւը հանդարտած ըլլալուն համար , ինքն ալ եկեր նստեր էր անսնց զուարձութեանցը մանակցելու դիտաւորութեամբ :

Երբոր իր աչքին մեռելի գոյն կապերը վեր վերցնելով Մանեան և Արամայիսը սենեակին մէջ տեղը կեցած տեսաւ , կարծես թէ կայծակ իջաւ գլխուն . սոսկալի կատազութեամբ աչքերը բայցաւ եւ ուզեց իր վախճանին մօտ անգթութիւն մ'ալ ընել , բայց ալ ժամանակը անցեր էր , իր տէքարութիւնը կըզգար և իբրև թէ սոսկալով Մանեայի նայուածքն որ իր անգթութիւնը կը չափէր , անհանգուստութեան շարժում մը ընելէ վերջը , դարձեալ իր առջի դիրքը բանեց : Անոր քով նստած էր Արտեմի հօրաքցը ապշած այս անակնունելի դիպուածին վախճանին սպասելով և երբեմն ալ անհանգարտ հայեցւածքնէր ձգելով իր եղբօրը վահանին վրայ որպէս թէ բացարութիւն կրուզը : Անեւակին մէջ աշխունելու վրայ նստած էին տիկին Ելսպիսի երեք աղջիկները որք թէպէտ և ժամանակ

մը իրենց մօրը համախոհ էին , բայց վերջերը ոկտան Մանեայի կարելցիլ գաղտնի կերպիւ , որովհետեւ իրենք խկ կը վախնային մօրերնուն կատաղութենէն : Ասոնք ալ ապշած կը դիտէին Մանեայի շնորհալի դէմքը և չէին կրնար մեկնութիւն մը տալ անոր այս ձեռներէցութեանը : Նոյնպէս նստած էր Գրիգոր , պուն կապուտակ աչքերուն մէջ ինդութիւնը կը փայլէր եւ գաղտագոզի կը ժպտէր Արտեմին նցին համակրաւթեամբ որով առջի գիշերը այնչափ վշտացեր էր Գրիգորինի վասնգին վրայ և զինքը ժամերով վնուռեր էր : Իր քովը կը նստէր Սամէթիկի , մազերուն գեղեցիկ գանդ զուրները աթսախն յենարանին վրայ տարածած , որուն գեղնած գէմքը զուարթ էր և անհնարին սննձկութեամբ գործոյն վախճանին կըսպասէր , երկիւզէ յուրախութիւն և ուրախութենէ գարձեալ յերկիւզ անցնելով : Սենեկին դրան քովն էր Մանեայի եղբայրը , Յովոնէփը , այս գեղեցիկ պատանեակը պատկառանօք կը նայերքունքը երեսը եւ չէր համարձակեր անոր հետ հօսուելու կամ անոր բան մը հարցնելու : Պ. Սերովէ ալ թիկնաթուի մը կըրթընած՝ ոտքի վրայ կեցեր էր : Բազմոցին միւս անկիւնը նստած էր վահան տիբրադէմ դադիկահար , կերւեար թէ իր կատազութիւնը իջած էր և թէպէտ ինքը չէր

ուզեր այն դիշեր գոտ ըս ելլել, բայց ՚ի ըլ-  
նորհն Պ. կ. ի որուն խօսքին չէր կրնար դի-  
մադրել, ակամայ եկեր էր: Գալու կը պա-  
տեց իր արդէն տիսուր դէմքը, երբ այս  
երկու տարիքաւոր զցյլերու ներս մանելը  
տեսաւ որք կը թուէր թէ իւր կոփիծը ա-  
ւելի գառնացներու համար միաբանած է-  
ին և որոնց անկեղծութիւնը ալ աւելի կը  
գրդաէր իր ցասումը զոր ծածկել կը ջա-  
նար: Հզօր ձեռք մը իր վրայ կը ծանրանար  
և կրսպառնար զինքը ճզմելու: Նախախնա-  
մութեան ձեռքն էր այն որ զինքը կը ձգէր  
այն խորխորատը՝ զոր ինքը ուրիշի համար  
բրեւու գուն կը գործէր: Ինք Գարեգինը գի-  
շերապահներու ձերբակալել տալու ջանա-  
դիր եղած ատեն, քանի մը անծանօթներ  
ալ իր կրսպակը որուն մէջ ծանրագին նիւ-  
թեր կային, քանարով բալոր մէջի եղածնե-  
րը առեր տարեր եին և հիմայ ինքը, ա-  
ռանց վաճառք մը ունենալու: շատ ոտքրո-  
քի առակ ինկած էր: ուստի պատիսի ձա-  
խորդութեան մը ատեն, Արտեմի ընթաց-  
քը զինքը մահացու կերպով վիրաւորելէ ա-  
ւելի մեծ զէշութիւն մ'էր իրեն և զայն  
կը գառնացներ: իւր քալը նստած կը ծխէր  
եօթանառուն և հինգ տարեկան տասյդ ծե-  
րունի մը, մադերը բոլորովին չերմկած,  
գէմքը խիստ ձեռւոր, բաւական գիրու-  
թիւն ուներ եւ ու հագուստներ կը կը-

րէր: ոյտերուն կարմբութիւնը երիտասար-  
դի մը նախանձը կը շարժէր: իր զուարթ  
և վեհ գէմքին վրայ քրիտոնէավայել մար-  
դասիրութիւն մը կը փայլէր: Այս անձը  
Վահանի վաճառականը, Պ. կ. էր:

Պ. կ. բալոր կեանիքը բարերարութիւնը  
ներկ կանցընեէր: ուստի երբ Արտեմ, ալ  
չի դիմանալով հօրեզքօրը ըրածներուն եւ  
սոսկալով անոր Գարեգինի կորստեանն հա-  
մար լորած որոգայթներէն: սիրութ բացաւ  
իրեն, Պ. կ. ալ որուն մարդասէր բարքը ան-  
ծանօթ չէր Արտեմին, խոստացաւ իր գոր-  
ծերը կարգի գնել և հայրենի սոսացուածքը  
ները հօրեզքօրը ձեռքէն առնելով նորէն  
իրեն սեպհականնել: Արտեմ ալ ուրախանա-  
լով սկսաւ համբուրել անոր ձեռքերը որք  
թշուառաց համար միայն կը գործէին և ա-  
պահով ըլլալով անոր խոստան վրայ բոլոր  
վշտերը մօռցեր էր: վասնզի քաջ գիտէր թէ  
այս աղնուասիրութնաձը որչափ ազդեցութիւն  
ուներ հօրեզքօրը վիայ որուն գլխուն եւ  
կած մերջին ձախտղանքն ալ քիչ նպաստ չէր  
իր գործոյն յաջորդութեանը: թէ պէտ եւ  
Արտեմ ամենեին հեռի էր վլէծինդրու-  
թեան որիէ և ուրիշին աղէտներովը բա-  
րերաստիկ ըլլալու գաղափարն ունենալէ:

Երբոր Արտեմ Գարեգինի ձեռքէն բալ-  
նած սենեակին ներս մասաւ, Պ. կ. գթա-  
միր ակնարկ մը նետեց անոնց վրայ և մըս-

տերով բարեկց զանոնք . անոնք ալ ժպտելով զինքը բարեկցին յարդանօք : Անկից վերջը Արտեմ Գարեգինի ձեռքէն բռնած , առանց և ոչ մէկու մը ուշադրութիւն ընելու , գէպ ՚ի Պ . Կ . ուղղուեցաւ և Գարեգինի հետ ծունկի գալուլ յարդանօք համբուրեց այս պատուական մարդուն ձեռքերը . չափազանց ուրախութենէն աչքերը արտասուօք լցան , յետոյ սոքի ելլերով դարձեալ տաջի տեղերնին կեցան : Բայոր ակումքը լուռ և ապշաճ՝ չէն համարձակէր այս հանդիսական լուռթիւնը աղմկելու . միայն ափկին Ելպիս . քիչ մը վերջը անհանդատութեամբ շարժելով երբ կը պատրաստուէր խօսելու , Պ . Կ . ի մէկ հայուածքը որ անոր համար ահաւոր սասատ մ'էր և որուն նշանակութիւնը և վասնգաւոր հետեանքը՝ լաւ կը գուշակէր այս կինը , զինքը լրեցուց : Սակայն այս սոսկափի կինը սկսաւ թշնը իր սիրտը թափել և կատաղութենէն մատները կը խածնէր , գէմքը բուքուց : Վակայն այս սոսկափի կինը սկսաւ թշնը իր սիրտը թափել և կատաղութենէն մատները կը խածնէր , գէմքը բուքուցին սեցեր էր : Քանի մը վայրիկան վերջը սուր Ճիչ մը արձակեց եւ կոնկի վրայ ինկած սոքերը գետինը կը զարնէր և գէմքը այլանդակ կերպով կը ծամածուէր . իր աղջիները հասկցան . խիթը բռնէր էր , ուստի զինքը սենեակին դուրս հանելով ուրիշ տեղ մը տարին : Երբոր այս կինը գրնաց , Արամացիս և Մանեաց

տաեն ակամաց տուկում մը կը կրէին , սկզ ասն Երկայն շոնչ առնուլ և կարծես թէ ծանր բեռ մը գնաց կուրծքերնուն վրայէն . զուարթութիւնը սկսաւ գէմքերնուն վրայ երևալ և կազդութեցան , վասն զի չորս կողմը բարեկամներ են որք իրենց բարօրութեանը բաղձալով գրեթէ իրենց հաւասար ալ հրճուանք կրզգային :

Երբոր լուռթիւնը նորէն աիրեց , Արտեմ շնորհալի կերպով մը թեերը կուրծքին վրայ ամփոփած , խօսքը Պ . Կ . ի ուղղելով բաւարարութիւնով մը :

— Աղինիւ տէր , գուք իմ հայրս էք և ես այս քաղցր անոնքը ձեր արժանապատուութենէն ուրիշ մէկու մը չէի կրնար տալ . դուք զիս կը սիրեք բռն ձեր զաւկին նըման , ուստի եթէ կը բարեհաճիք , իմ ուխարս պիտի Երկրորդեմ ձեր առջին զոր անշը մէկ պահելու համար ամեն տեսակ տառապանք բաշեր եմ մինչեւ հիմա :

Արտեմ այս խօսքերը արտասանած ատեն , վահան սկսաւ ծուռ ծուռ անոր երեսը նայիլ , թէպէտ և ինքն ալ անկարազ էր չարիք մը ընելու , և երբ կը պատրաստուէր անոր խօսքը ընդմիջելու , Պ . Կ . ձեռքով ձեմը ընելով զինքը լրեցուց եւ նշան ըրաւ Արտեմին որ խօսքը շարունակէ :

— Աղինիւ հայր , յարեց Արտեմ յուզեալ ձայնով մը , չեմ կրնար առանց սոսկան

միտքս բերել անցեալը , բայց երբ կը մը  
տաճեմ որ սիրելի մօրս և Գարեգինի ըրած  
խոստումս կատարելու ձեռնահաս եմ , չեմ  
կրնար չի բերելի և քու անունդ չ'օրհնել  
այն ջերմ եռանդով որով մօրս կը ծառաւ  
յէի և զինքը կը մխիթարէի իր տագնաւ  
պալից վայրիեաններուն մէջ . ոհ , որչափ  
քաղցր էր ինծի այս , շատ անդամ կըսէի  
թէ ինչո՞ւ մարդիկ մէկմէկու օգնելու եւ  
զիրար սիրովելու բերկրանքը կը փոխանա  
կեն այն սին հաճցըներու հետ որը մար  
դուս կեանքը կը տագնապեն : Սիրելի մայ  
րս անցեալ տարի բարեկենդանի վերջին  
գիշերը իր կեանքը կնքեց , խոսամանս միշտ  
հաւատարիմ մնալ խրատելով . ուստի ես  
ալ կուզեմ այս գիշեր որ բարեկենդանի  
վերջին գիշերն է , մօրս քաղցր յիշատակը  
պատուելու համար , մինչև վերջը Գարեգինի  
հաւատարիմ մնալու ուսիսն ընել : Ալ սդոյ  
զգեսաններս կը թողում , վասն զի այս էր  
մօրս հրամանը , եւ ուրախութեան հան  
դերձներ կը հագնիմ : Կուզեմ որ Պ. Հօրեղ  
բայրս ալ իմ հայրենական ժառանգու  
թիւններս ինձ դարձնէ զարոնք կարդադ  
րելը Գարեգինի կը յանձնեմ :

Սրտեմ այս խօսքերը ըստած ժամանակ իր  
ուսածառ աչքերը կը փայլէին . գեմքը եւ  
շարժուածները նոր տուուդութիւն մը ա  
ռած էին . այսպէս ծաղիկը կը փթթի իր

թռոմած գլուխը վեր վերցնելով , երբ խը  
նամատար ձեռք մը պէտք եղած մնունգը  
մատակարարէ իրեն :

Երբ Արտեմ խօսքը վերջացուց , Պ. Կ.  
զուարթութեամբ խօսքը անոր ուղելով  
ըստ :

Սիրելի աղջիկս . քու ուղածներդ ամեն  
քըն ալ պիտի ըլլամ . գու այսչափ ժամա  
նակ թշուառ եղեր ես , ուստի պէտք է որ  
հիմայ ալբարեբաստիկ ըլլաս . այս քու ար  
ժանաւոր վարձքդ է . ձեր պաշտպանը ես  
պիտի ըլլամ և ոչ որ չի կրնար ալ ձեզ վըշ  
տացնել կամ անիրաւել : Քու ուխտդ որ  
նուիրական ուխտ մ'է և որում հաւատա  
րիմ մնալու համար ամեն վիշտ յանձնաւած  
ես , ալ հիմայ կը կատարուի . ալ գու ազատ  
ես և թշնամիններու տեղ բարեկամներ ըզ  
քեզ կը շրջապատեն :

Երբ Պ. Կ. այսպէս կը զուրցէր , Վահան  
յուսահատութենէն թեւերը կ'սորէր և  
վերջին աստիճանի անձկութիւն մը զինքը  
պաշտած էր . կը խօրհէր իր երկու օր ա  
ռաջ ունեցած զօրութեանը վրայ , և երբ  
կը անհնէր Արաեմն ու Գարեգինը սրնց այս  
յանդնութիւնը պատուհատելու ապիկար  
էր , ինքզինքը կ'ուտէր : Թէպէտ և տկար  
ու ջախջախեալ , բայց իր ձեւերէն կը հաս  
կըցուէր Պ. Կ. ի գէմ գաղանի հեռա մը կը  
տաճէր սրտին մէջ , մերթ ընդ մերթ ալ

դաժան նայուածներ կ'ուղղէր Արտեմի և  
Գարեգինի որք այս միջոցին անվատում  
բերկութեամբ լցուած արհամարհոս գու-  
թով մը կը նայեին իրեն, և որպէս զի իրենց  
բերկանքը չի վրդովի՛ շուտ մը աչքերնին  
անոր վրայէն կը դարձնէին և մէկմէկո-  
ձեռք կը բռնէին :

Խոկ Մանեաց և Արամացիս երազի մը ցնո-  
րից մէջ եղածի պէս բոլորավին յափշտակ-  
ուած էին և խոկ իրարու աչքի մէջ նայելէ-  
ուրիշ բան չէին ըներ . կարծես թէ բոլոր  
իրենց կերանքը այն սխրավի վայրկեաններուն  
մէջ ամփոփաւած էր . կարծես թէ անցեալ  
չիկար իրենց համար . յափշտակութիւննին  
միայն երթեմն շնորհալի ժայիններով կ'ընդ-  
միջէր զոր երարու հետ կը վախանակէին իր-  
քե բարեկատութեան նշան :

— Ազնիւ օրիորդ , յարեց Պ. Կ. զսաար-  
թութեամբ խօսքին թելը նորէն ձեռք առ-  
նելով . երբ կը մասածեմ որ ձեր գերածի-  
ծալ օրերը արտասուօք և կոծով անցուցած  
էք դառք , կը ցուիմ ձեր վիշտերը աւելի  
տաաջ չը գիտնալուս համար . բայց սա ալ  
կը խորհիմ թէ հիմայ սրափ հանդարտու-  
թեան և բարեկատութեան ճաշակը ա-  
ւելի քաղցր պիտի ըլլայ ձեզ համար :

Եւ վահանին դառնախով , աւելցուց :

— Կուզեմ որ դու ալ Արտեմ օրիորդի  
սոսցուածքները իրեն դարձնես և հիմայ

հոս այս բանին համար գիր մը գրես և այս  
գիրը իր քովը մնայ ապահովութեան հա-  
մար . ինձի ալ որչափ որ պարտք ունիս ,  
ես ալ զանոնք չեմ ուզեր և գրով մը քեզ  
պարտք ազատ կը կացուցանեմ :

Վահան երբոր այս խօսքերը լսեց բոլո-  
րովին շուարեցաւ և չէր գիտեր թէ ինչ  
պատասխան տայ . այնչափ իր յուսահա-  
տութիւնը մեծ էր , սաստիկ ամօթ մը զին-  
քը կորացուց , չէր համարձակեր աչքերը  
վեր առնուլ և հազար անգամ անիծեց իր  
բաղդը երբ մատեցօք իր նպատակին հաս-  
նել կարծած ժամանակը բոլոր հնարագի-  
տութիւնները՝ ՚ի դերեւ ելան և իր հակա-  
ռակորդաց առջն ամօթապարտ կըլլար :  
Բայց Պ. Կ. ի վերջին խօսքը զինքը քիչ մը  
կըսփոփէր , ուստի յուզեմները ծածկելու  
համար , անտարբերութիւն կեղծեց հնար  
եղածին չափ և շակուելով ու Պ. Կ. ի գառ-  
նալով ըստ թէ իրեն կամքն այսպէս եր  
ինքն ալ կը հաւանէր այս բանին և բոլորով  
որտիւ կը կատարէր ուզածը միայն թէ օրի-  
նաւոր ըլլար . վերջը գրպանէն թուզթ և  
մատիս մը հանելով գրեց . գրելէն վերջը  
թուզթը Պ. Կ. ի գարձուց գոզդ զալով , ան  
ալ բարձր ձայնով կորդաց և Արտեմի հար-  
ցուց թէ գոհ եր և երբ նա ալ իր գոհու-  
նակութիւնը յայանեց , ծրաբերով սցն գի-  
րը գրպանը գրաւ մինչեւս միւս կողմանէ

Վահան ծանր անհանդասութեամբ մը պաշարուած յակամայից դէմքը կը ծռմռկէր և ձեռքին մատները կը կոտրակէր :

— Սիրելի որդեակներս , ըստ Պ. Կ. ոու քի վրայ ելլելով , ալ հիմայ գուք վիշտ չունիք , այնպէս չէ . Արտեմի և Գարեգինի գործերը կարդադրուեցան , իսկ գուք , Մանեայ և Արամայիս , գուք ալ բարեթաստ էք հիմայ , ալ ոչ ոք կրնայ ձեզ թշնամանիլ . ձեր առելիները որք ժամանակ մը ձեզ սանհար կրւային , կարծեմ ուրիներէն սանհար ըլլալու վտանգին մէջն են . չարասէր մը որչափ որ զօրաւոր ըլլայ , անոր պատիմն ալ համեմատաբար այնչափ սոսկալի է . գուք չունեցաք այն ոսակալութիւնը որ նախանձու և չարակամութեան արդիւնքն է . անյիշաչարութիւն գործադրեցիք մինչեւ հիմայ , ուստի ձեր բաժինը բարօրութիւն և խղճի հանգարանութիւն պիտի ըլլայ : Արդ , սիրելի որդեակը , ասկից վերջը հըճուեցէք և երջանիկ ապրեցէք :

Այս խօսքերը ըստելին վերջը նստաւ նորէն բազմոցին վրայ , իսկ այս գեղանազ սիրուհիք անոր առքը ինկած ձեռքերը կը համբուրէին և քիչ մը ժամանակէ ի վեր ցամքած աչքերնին ինդութեան արցունքով կը թըրջէր : Արամայիս և Գարեգին առքի վրայ կեցած՝ օրհնութեան ողբեր կը հեղուին այս աղնուափրտ ծերոյն գլուխը որ ար-

դէն մարդասիրի փառաւոր պատկովը պատուածէք էր , և չէին կրնաք հըճուանոք յագենալ : Այսպէս այս ակումքը որ քիչ մը առաջ գրեթէ ախուր և չարագոյժ երեցիք մը ունէր , բոլորավին կերպարանափոխ եղեր էր , սիրահարը սիրուհւոյն կը ժապէր , բարեկամն զբարեկամը կը գուտէր , և բարերարին սիրուր կը զեղցը աղնիւ զբացմանքը : Բաց ի վահանէն ամենին ալ զբարթ էին և երկար ատեն զուարձացան այլ յայլմէ եղած , առանց ժամանակին անցնիլը զգալու :

Փամբ գիշերուան ինն ու կէոր զարկաւ . Պ. Կ. ոուքի ելլաւ և խմացուց թէ մեկնելու ատեն էր . բոլոր ակումքը սովք ելան իր ետենէն և սկսան պատրաստուիլ իրենց տեղին երթալու . համար . անկարելի է նկարագրել թէ ինչպէս բաժնուեցան իրարմէ առնիք :

Վերջապէս ամեն բան լմնցաւ , հիւրերը տունէն գոււրս ելան և Մանեայ գարձեալ մինակ մնաց ու սկսաւ եղածներուն վրայ մտածել քունէ արթննալու պէս և ցնորածի մը պէս չէր գիտեր ինչ ընելիքը . երբեմըն մտազբալութեան մէջ կիսնար , երբեմըն կը տիսքէր , կուլար , վերջէն կը զուարթանար : Մանեայի այս վիճակը քանի մը որ տեհեց :

Նաբախթ մը անցաւ , Մանեայի մօրաքեռ ,

աիկին Ելսղիսի ցաւերը աւելցան և սոսկաւ  
մի կերպով կը տանջուէր ու ինքզինքը գետ-  
նէ գետին կը զարնէր . վերջին աստիճանի  
նիշարցած էր : Վերջապէս Մանեայէն նե-  
րում խնդրեց ըրած անդթութեանցը հա-  
մար , գիտնալով որ իր վախճանն հասեր  
էր . և իր ձգնաժամին ատենը զայն քովը  
կանչելով ձեռքը բռնեց և սկսաւ զինքը իր-  
քատել և երջանիկ օրեր մազթել իրենց ,  
և իր անիրաւ ըլլալը խոստովանելէ վերջը ,  
գեռ խօսքերը բերնին մէջն էին հոդին փը-  
չեց : Մանեայ լացաւ անոր վրայ եւ իրեն  
համար սուգ կրեց ու վշտացաւ զարմանաւ  
մի անցիշաշարութեամբ մը :


Մէկ քանի շաբաթէն վերջը իրենց բոլոր  
գործերը կարգադրու ած էին . Մանեայ Ա-  
րամացիսի ձեռքը բռնած իրենց փոքր պար-  
ուել զին մէջ կը պարտէին . գէմքերնուն վրայ  
ժպիտը կը փայլէր եւ խանդակաթ բերկ-  
րանօք ծաղկանց հետ գրունելով և կարծես  
թէ այն չարաշշուկ անցելցն սոսկալի յի  
շատակներուն հետքն անդամ չէր մնացած  
և լոկ ներկացին բարեբաստութեամբը կը  
բերկը էին . այսպէս ասնկը երջանիկ էին :

Նցնպէս Արտեմի և Գարեգինի հրճուանկ  
բը անպատմելի էր . Արտեմի հօրեգբայրը  
քիչ մը ժամանակ վերջը կաթուածէ զար-  
նուելով մէկ կողմը չէր բռներ և առւնը  
նստած էր , խոստովանելով որ ըրած չար-

եացը արժանաւոր պատիմը առած էր :  
Արտեմի Գարեգին շատ անգամ Ման-  
եայի տունը կերթային և չորսերնին ՚ի մի-  
ասին պարտէզին մէջ կը զուարձանային ո-  
րոնց ուրախութեանց և խնդութեանց ճա-  
շակը ոչ ոք կրնաց առնուլ բաց ՚ի երկար  
առեն վիշտ ու տառապանք կրելէ վերջը  
երջանիկ եղողէ մը :

Երջանիկ ապրեցան ասոնկը մինչև վերջը :

ՎԵՐՋ



8pec 109

«Ազգային գրադարան



NL0109833

